 Օ՞ի՛նչ պակաս մընաց յանդոյգ պարգևաց զոր 'ի քէն չառին ,  
 Եւ զի՛նչ վայելէր յաւետ քան զարժանն , զոր ոչ ետ երկին .  
 Օ՞ի՛նչ այս գարշութիւն մոլեգին ախտից զեղեալ 'ի նոսին .  
 Օ՞ի՛նչ համաժաւալ խըստութիւն անզեղջ յեակսըն ներքին .  
 Ախտք հըպարտութեան զմեր քաղաքակիցս անդարձ մերժեցին ,  
 Անլոյծ կապանօք արկեալ 'ի խաւար յանդունդս արտաքին :  
 Դեռ երկայնամիտ կայցէ քո ցասումն 'ի վըրէժ նոցին .  
 Սընայ տակաւին ակնունիլ դարձման անդրէն 'ի բարին .  
 Բայց , Աստուած հըզօր , զսահանս երկնից և զանդունդս երկրին ,  
 Ի հեղձ 'ի յողող 'ի սոյզ յաճախման չարաչար ախտին ” .  
 Մինչև էր հրաման յորդման յորձանաց համակուլ ջաղքին ,  
 Յոյս աշխարհային անհատ սերընդեան կայր անդ թախծագին .  
 Խընդրէր ջատագով ունիլ զօք առ իւր նըպաստ 'ի բարին ,  
 Բայց չէր 'ի համայնց՝ որ յոյս դիւրութեան բերէր 'ի սըրտին .  
 Յանկարծ 'ի խընամս վըստահեալ սերտիւ բոլորից Հաստջին ,  
 Յաղերս իջանէր արտասուք 'ի դէմս անձուկք 'ի յոգին .  
 “ Աստուած իմ Աստուած , գոչէր 'ի խորոց իւր հառաչագին ,  
 Գըթա՛ 'ի ստեղծուած , գըթա՛ 'ի պատկեր քո յաղգ մարդկային :  
 Դու՛թ քոց խընամոց թէպէտև ամուր ինձ ապաստանին ,  
 Բայց և յիրաւունս քոյդ արդարութեան փարիմ սըրտովին ,  
 Բոց համայնակէզ անչէջ բորբօքեալ յաշխարհ մոլեգին ,  
 Օ՛վերանց ըզձորոց 'ի հուր հըրդեհեաց զարդ գեղեցկագին :

Բարձրութիւնք ծառոց որք տերեւորձակ զերկինս լընուին ,  
 Խամբեալ խարակեալ միայն ըզխանձողս գեհեոյն թողին .  
 Օ ի անդրէն վառեալ 'ի սիրտ ամենայն հուր դըժոխային ,  
 Ե իջոյց ըզնախանձ առ սուրբ պատուիրան քո աստուածային .  
 Քուժ սիրոյ որդիք ձիք մատակախանձք քեզ անկուշեցին ,  
 Ի կորուստ անձանց ըզխաւար նիւթեալ 'ի տարտարոսին .  
 Յանսաստ չարութիւն լըինեալ աքացել ընդդէմ խըթանին ,  
 Յաստեացըս կարճել ըզմարդկան ծընունդս 'ի վրէժ շարժեցին :  
 Բայց գոյ և արդար ումն կամարար սուրբ քո հրամանին ,  
 Օամբս հինգ հարիւր պահեալ կուսութեամբ յայն զեղծ գըրոհին :  
 Տուր ինձ աղաչեմ , զայն միայն տուր ինձ նոր հայր ազգային ,  
 Օ ի անդրէն յերկրի քեզ օրհնաբանիչք ծընեալ բազմացին .  
 Անկարօտ ես , տէր , արդարև փառաց լի ամենեին .  
 Բայց քոյդ հաճեցաւ սէր յերկրէ առնուլ օրհներգ հողածին :  
 Այս իմ աղերսանք այս անձին իմոյ տենչիւ խընդրելին ,  
 Օ ի տեսակ մարդկան անընդհատ կարգաւ իջցէ 'ի զարմին " .  
 Յուսոյն այս աղերս յանարգամեծար խընամորն վեհին ,  
 Գըտեալ գըգուարան նոր հիմներ սմուրս բնակչաց երկրին .  
 Առ պետրն վերնոց ցողայր առաւօտ լուսագեղ շնորհին ,  
 Հօրն անարատի ծագել աւետիս հաճութեան վերին :  
 Լուսաթռիչ շողէր քարոզն աւետեաց 'ի ճեմս արփենին .  
 Փողփող իւր դիմաց դընէր 'ի հրաբունս զարմանս և զըննին .  
 Հաճութիւն անմահ նոր կենդանածնեալ 'ի յոյսն աշխարհին ,  
 Ի կայտառ մանկունս խայտայր խընդալի յորդեալ 'ի բարին :  
 Չայնէր . "Յէ՛ Նոյ, Նոյ, հայր երկրորդ այդ միկ մարմնաւոր ցեղին ;  
 Ի քեզ կայ անփուտ բազմաձեղ արմատ աճման մարդկային :  
 Վըճիւն յաւիտեանց որպէս 'ի կորուստ չարաց զայրագին ,  
 Նոյն 'ի քո շընորհ ձըրից պարգևօք ցուցաւ առ նըմին :  
 Պարգև պանծալի հընգադար ամօք կուսութեան քոյին ,  
 Նէմզար սիրուհի ամբիժ յօրիորդս նախնի նահանգին .  
 Քև ակն որդեծին տուեալ 'ի բըղխումն անդր 'ի յեղեմին ,  
 Անհատ ծովացի 'ի ծընունդս ազանց անդրէն վերըստին :  
 Արդ զի ընտրեցար նահապետ երկրորդ բանական զարմին ,  
 Սընայ քեզ այժմիկ կերտ նոր աշխարհի փայտեայ տապանին .  
 Ուր համայն շընչոց գըտեալ պատըսպար 'ի գալ հեղեղին ,  
 Օանկեալն աւերակ կանգնեցեն զազանց կենդանականին :  
 Նոր է այս կերտուած նորօք խընամոց ցուցակ երկնային ,  
 Ուր անբոյթ կացցես յայն աշխարհազեղծ նորօք պոտահին .  
 Ի քառակուսի փայտից կազմեցես զարկղըն տասրանին ,  
 Ըստ չափուն զոր քեզ տայ ճիշդ հըրաման անմահ Արարչին :  
 Եռերիւր կանգուն չափ երկայնութեան յիսուն 'ի լայնին ,  
 Օքրեանաբանակ բարձրութիւն յաւարտ քաղեցես առ մին .  
 Եռայարկ գործեալ խորշ խորշ կայարան շընչոց տեսակին ,  
 Իուռն 'ի կողմանէ 'ի մուտս եկելոց անդանօր խըմբին :

Ի կալուած ձեզքից ՚ի յարս տախտակաց առ ծեփուած նաւթին ,  
Ըն ՚ի չքտալ մուտ ՚ի ներքս ուղխաջուր տեղատարափին .

Պարէնք ուտելեաց ձեզ ամենեցուն ընդ բոլոր տարին  
Ըստ պատրաստեալ ՚ի յամենայնէ ամբարել ՚ի նմին ” :

Ի սիրտ անդ Աոյի խոր ազդէր պատգամ երկնից դեսպանին .  
Հանդէս զարդարէր իւրում հարսանեաց պարզ և բարեգին .  
Օրնանէր որդիս , Յաբեթ , Աէմ , ՂՏ.ամ , ՚ի միում դարին ,  
Եւ յերկիւղ Աին աճումըն բերէր ըստ իւր հաճոյին :

Կրրկնէր անդանօր հրաման տիրական առ Աոյ մեր նախնին ,  
Հարսունս ցուցանել երկից իւր որդւոց ըստ բարւոք կարգին ,  
“ Կան ՚ի պատրաստի , ասէ , քոց որդւոց ընկեր և բաժին ,  
Կոյսքն Օանազան և Օարմանազան ընդ Արեգնազին ” :

Օասի ըզդողման հարեալ ընդ պատգամ Տեառն ընդ ահագին ,  
Չեռն ՚ի գործ առնէր ՚ի շինուած արկեղն այն մեքենային .  
Ընտանքն Կորդուաց զհին աւուրց որդիս իւրեանց մատուցին ,  
Ի նիւթ շինութեան գընայուն յարկի հողմավար նաւին :

Կաղնի կաղամախ սարոյ և կընձնի և այլքն ըստ կարգին ,  
Որոց թանձրութիւն և բարձր հասակ ըսպառնայր երկնին ,  
Ընդ քարշ սողային տապարահատեալ ՚ի բընոյ արմին ,  
Իբրընդիւնն ՚ի քարշ էր նըշան հեղձման մոլեգնեալ ազին :

Արհեստ թովբէլայ սրանձայր ՚ի նուէրս գամիցն երկաթին ,  
Օէրծ ՚ի ցասմանէն պահել զոր շարժեաց արհեստ Յովբալին  
Աուրք և ամիսք ընդ տարւոյ թաւալս առեալ գընային ,  
Մինչև ՚ի լըրումն հարիւր և քսան ամաց սրայմանին :

Չայն գուժին գործեաց հարուստ անդ հընչեալ յերկայն միջոցին ,  
Չարար ըզգաստիլ վայրագ մոլեւոց յախտ պղղծասիրին .  
Անդ գայր հըրաման մըտանել յայն յարկ անկայուն շինին ,  
Ինքեան և որդւոցն և կընսջն ընդ նոյն և հարսանց նոցին :

Աժէր և յորոց հրամայեաց նըմա բանն աստուածային ,  
Տաճել ՚ի տապանն մինչ ՚ի ցամաքումըն ջըրհեղեղին .  
Այսպէս կատարեալ Աոյի զամենայն ըստ հարկաւորին ,  
Անքոյթ ամրանայր ՚ի յարկածածուկ շարժուն քաղաքին :

Արտաքոյ նորա փակէր ըզտապան բնաւ իցըն սրաշտպան .  
Անկայմ անքեղի առնէր նաւարկել ընդ դաշտ լուծտկան .  
Իմ անդ ՚ի զըննին անմըռունչ ապշեալ ՚ի նոր զարմացման ,  
Աղետից էր տեսք վըտանգ մահաբեր յերկիր ամենայն :

Ամրափակ պընդեալ աստուած պաշտութեանն այն պատըսպարան ,  
Օամենից կենացն եբարձ յաշխարհէ յուսոյն ապաստան .  
Անդ ծածկէր յերկրէ զաւուրս քառասուն ակն արփիական ,  
Յոլմունք աստղայինք չէին ինչ ՚ի զարդ վերնային ձեզուան :

Օդոյն ընդարձակ միջոց կենսօգուտ պատեալ ՚ի մըթան ,  
Նոր իմն արհաւրաց գիշեր հըռչակէր յամպրոպ ահռական .  
Չէր ինչ անդ շողիւն խունարև լուսոյ զարդուն ցերեկեան .  
Սուգ անհընարին սրատեալ էր զերկրաւ յանկումն անդարման ,



Օրամբաւից ըզնուրց լիութիւնն երկնից բացեալ ըզսահան ,  
 Յաղթահոս զեզոյր վրտակս ընկլուզիչս անդուլ անխափան :  
 Յայն վրէժ չարաց և անդունդք երկրի բանային բերան ,  
 Յորդեւ 'ի ներքուստ ուխտ անհրնարինս յեղծումն յապական :  
 Բարձրանայր յերկրէ ծով համատարած խորք անանցական ,  
 Ի ծոց կըլտնել ըզբարձունս վայրաց յիւրում կորըստեան ,  
 Լերինք և բըլուրք անդ քուստուղեալք յանտես ծածկութեան ,  
 Ծուր աշխարհակուլ անեղր ծածանէր 'ի յալիս ծրփման :  
 Հապճեպ սըլացեալ իմ 'ի բարձրագոյն Մասեացն արաւան ,  
 Ընկալ նըշմարել զանցորն կալելոց յայն խոր մահարան :  
 Ընդ էր նոր դիպուած ստեղծումն ահագին հարուժն ըզգողման ,  
 Ըյն ինչ ցոլանայր յաչս իմ 'ի բարձունս անդ նոր տեսարան :  
 Սինչ յուտել յըմսել 'ի պարս 'ի կաքաւ 'ի տըրտի կայթման ,  
 Եւ սէր յանարժան զոշտից զակատք էին 'ի զեղխման ,  
 Սինչ խոր թմբբութիւն պատէր զամենիւք անդր 'ի հանգըստեան ,  
 Եւ զըմբաղք սըրտի զուարթ կայտուէին 'ի զեղծ խառնարան ,  
 Ընդ գայր յանկարծուստ արդար Տիրողին վրէժքըն ցաման ,  
 Երեսորս զեզոյր 'ի շրփոթ ածէր զանկարգ երախան :  
 Խուռն յարձակէին սգիք մուլելոց 'ի վիհ վարանման :  
 Ըյլ պինդ պաշարեալ ըբոտ լըկէին յանգիւտըն սուղման :  
 Կալ անդընդախոր յարկեալ էր համակ բոլոր զերկրաստան :  
 Գաղաթունք ծառոց ցըցուեալ տակաւին զալեօքն 'ի ծածան :  
 Սի ոմն յանկողնոյն շրտուցեալ 'ի դուրս անքօղ անպատան :  
 Ոմն յալիս խորոց խըղձուկ տազնապէր անյոյս փըրկութեան :  
 Ոմանք գունդագունդ ընդ լերինս վաղեալք ոչխարանըման ,  
 Յալիս մաշէին իբր 'ի քանասար գայլոցըն բերան :  
 Ըյլք զամպաժաման ժայռսըն ցանկային ունիլ կայարան ,  
 Կէսք 'ի բարձրաբերձ ծառսըն երագեալ կային 'ի տատան :  
 Թողոյր մայր զորդի , չօգնէր այր եղբօր անկար ամենայն :  
 Եւ ոչ առ անձին փրկութիւն երբէք լինէր ոք ժաման :  
 Ողբային տըղայք , վայէին աղջկունք 'ի ծուփս ընկլուղման ,  
 Եւ չէր որ լըսէր կամ 'ի գութ շարժէր նոցուն կականման :  
 Ընչունչ դիակունք լեղային 'ի ջուրս անդ կորըստական ,  
 Հերարձակ հիւսուած ալէտանջ ծրփայր զուսովք ձիւնաղան :  
 Ողորմ էր տեսիլն , ողորմ էր դիպուածն անճողոպրական ,  
 Օի և զասպառած սիրտս աղեխորով կիզէր առ ժամայն :  
 Փափկասուն դըստերք գեղաղէշ մանկունք յառոյգ կերպարան  
 Ընդոյն թարշամեալ 'ի ծաղր Բեհմովթայ կան թշուառական :  
 Ուր սընդոյր այտից , ուր պըչրանք նազից , ուր պարք բերկրական ,  
 Սիայն զանվախձան զամօթըն թողեալ անհետ չըքացան :  
 Սահ անգութ դահիճ 'ի սուր ջըրեղէն հրնձեաց զամենայն ,  
 Ընողորմ կորոյս ըզմարդ զանասուն զշունչ կենդանական :  
 Սողունք և թըռչունք բոլոր 'ի ծուղակ նորին կարթեցան ,  
 Եղծաւ բընաւին շուք վայելութեան գընդոյն երկրական :

Մարդ էր յանցաւոր, էր, ասեն, անբանք ընդ նոյն պատժեցան :  
 — Հաստչին բընաւից է այս անաչառ ըստոյգ դատաստան .  
 Եւ այս ցուցակ է յարդար իրաւունս աստուածակտուութեան ,  
 Օրակիզբն ինչ յանցման տուժել 'ի պատիժ համաշխարհական :  
 Ուր զի 'ի կորուստ արքային չեն այլք՝ քան զայն 'ի յարգման .  
 Եղծանիլ մարդոյ և վասըն մարդոյ եղեալքըն կորեան :  
 Մարդ պատկեր լին յայն խորս ընկլուզաւ յոյժ անարգութեան ,  
 Լնբանք մի՛ քան զայն լիցին համարեալ էակ պատուական :  
 Եայս իսկ և կերտուածք շինուածոց ազգաց անդ տապալեցան .  
 Մարդոց բնակարանք հըրեչից ծովու եղեն կոցարան .  
 Օով ծածկոց ծովուն պատեալ շրջանակ յամբաւ խորութեան ,  
 Երշմար ցամաքի ոչ ուրեք երբէք չափով ինչ ափան :  
 Եայն աշխարհակուլ որովայն յարկեալ լերանց տեսարան ,  
 Եայն վիհ ջրալիւր ըզբօսանք ձրկանց ընդ լեխաթան .  
 Եու զմունք լեռնատիպ ալեացըն գուժէր յամպոցըն կայան ,  
 Չոր անհրնարին հետ ըզհետ բանայր 'ի վըրդով ծրփման :  
 Երկզակերտ քաղաք ընդ իւր գաւառացն անդր 'ի յերերման ,  
 Եկլըն իւր և յէջս երբեմն երկնաւոր մերթ անդընդական .  
 Հանգիստ բընակչաց անբաժին էր անդ կըրից տըրտմութեան .  
 Օ ի վէհն երկնային էր իւր զեկավար տրթուն պահապան :  
 Եայս քանդ համաջինջ հըրձուէր 'ի հաճոյս հինն ամբարտաւան ,  
 Եառ ինքն զառաջին եղբայրասպանին ծընունդս աւարման .  
 Տօնս ուրախութեան կարգել հրամայէր յանդունդ դառնական ,  
 “ Եյս է մեր , ստէր , ժամ բարեպատեհ նուադ յաջողման .  
 Տուն նախնի մարդոյն յաւար մեր դարձաւ որպէս 'ի սկըզբան :  
 Փառք մարդկան գերի բանտարկի ահա 'ի վըհիս զընտան :  
 Բընակք եղեմեան կայիցն աստ 'ի մէգ մըշտագիշերեան  
 Լնդերձ բանտաւորք հեժեն դառնապէս յաղէտս անվախձան .  
 Յնծացէք, դըժոխք, ցնծացէք, ծըժումբք, 'ի հրացայտ գեհեան :  
 Ճարակ անըսպառ մատոյց ձեղ ահա դուստրըն իմ աննըման .  
 Երձան պաշտելի նըմա՛ կանգնեցէք պատուել յարաժամ ,  
 Որ առ մեր պարծանս տարաւ յաղթութիւն պերձ հարըստական :  
 Բայց ո՛վ դառնութիւն վըրդովիչ մերում այս բարեկրութեան .  
 Ո՛վ ցաւոց աղէտք նըշխար մընացեալ յայն դաշտ նախնական .  
 Լնձինք սակաւուց յամուրս տապանին պահեալք անկործան ,  
 Բընախնի զայն ուխտ շոյտ նորոգեացեն յաւէտ հիմնական :  
 Օ ի՛նչ օգուտ է մեզ յայսքան հընարից պատիր նենգութեան ,  
 Եթէ վերըստին սերեցցին մարդիկ յերկրին յայն սահման :  
 Կամ զի՛նչ ցընծութիւն 'ի մեզ յարակայ անխառն ընդ հեժման ,  
 Երբ ոմն 'ի զարմից անտի արտոցէ ըզգլուխ մեր կոխան :  
 Լնդ պայծառ շողէ 'ի մեր դէմըս լոյս անվերջ խընդութեան ,  
 Մինչ զայն նոր աշխարհ յալիս ծածկեացուք տալով խաթարման :  
 Չէ ինչ հաստատուն քաղաքըն փայտեայ յոր կան յակաստան ,  
 Երերս ալէտանջ ծրփայ անկայուն և առանց հիման :

Արի՛ , յոտըն կոց , իշխան դու հողմոց անսովոր շնչման ,  
 Հընարս հայթայթեա բերել զայն շինուած յանարծարծ եղծման .  
 Այս մարտ առ սակաւս բայց ընդ համարէնս է գործ սրայքարման ,  
 Աստ իսպառ 'ի չիք գառնայ զօրութիւն նորոգ սերընդեան :  
 Անդ էր տեսանել խըռնիլ գոլորշեաց չոր և նրբական ,  
 Ի վըրդով օդոյն զեղեալք յապարանս անդր Ալողոսեան :  
 Ուր իսկոյն զամպոց կուտեալ թանձրութիւն 'ի ցայտ ցոլացման ,  
 Արորիկ պըտոյտքէր 'ի համայնակուլ խորս ամբաւութեան :  
 Յուզումն անսովոր ըզլերինս ալեաց յոյժ գազանական ,  
 Յարկղըն կոյս հոսէր ծածկել աղարտել առանց գըթութեան :  
 Արընչէր գոչէր իշխան եթերին առիւծանրման ,  
 Խըրախոյս առնէր շնչման սաստկանալ յանյաղթ զօրութեան :  
 Այլ 'ի զուր ջանաց ընդվայր քըրտնեցաւ չսձն անպիտան ,  
 Բարձրադէզքն ալեաց անգրէն 'ի յանդուենդս իւր խորտակեցան :  
 Բնթացք յաջողակք արկզատիպ լաստին յոյժ բարենրշան ,  
 Բզկատար Սասեաց 'ի նաւահանգիստ անվըտանգ կալան :



Գ Լ Ո Ւ Ի Խ Զ .

ԲԼՕՄԵՆԱՄԵՐԳԻԼՆ ԵՒ ԲԼԺԼՆՈՒՄՆ

Հին աւուրցըն հայր արդար ծերունին  
 Գըտեալ յանդորրու յետ միոյ ամին ,  
 Գոհութիւն ամբաւ իւր խընամողին  
 Խընդագին ձօնէր անդր 'ի տապանին :  
 Հայեցեալ անդուստ 'ի բարձուէ լերին  
 Բնդ նեղ դիտանոց առ կողաց ծերպին ,  
 Օարմանք նորագոյնք անդր երևէին ,  
 Թէև բնականք առ իւրեանց կարգին :  
 Ի հըռչակ փռաց վէհ Տիրապետին ,  
 Խըտաէր գոլորշին յամպ հիւսիսային :  
 Անդ հընչմունք հողմոց 'ի ջուրս ցըրտագին ,  
 Ի վայր ըզկուտակ ծովուն զեղուին :  
 Խոխոջմամբ հոսանքն ընդ էջօրն հովտին ,  
 Հեղեղատ գործէր ձորս անհընարին :  
 Թողացումըն ջուրց կողմանցն արևին ,  
 Օով Ալբրոպիա կուտէր տակաւին :  
 Վառարան լուսոյ ականն աշխարհին ,  
 Տարացիր ցայտէր ըզշանթ հըրային :  
 Օալեաց լեռնակոյտ լոյծ տափարակին ,  
 Յընդէր 'ի շագի առ ցոյց ցամաքին :

Ընդ հատարք լերանց յերևան գային ,  
 Հողանի զերծեալք 'ի տեռէ ուղիսին .  
 Ընդ և առաքումն մըթին դեսպանին ,  
 Իւրումն ոչ բերէր վըշորմբեր սրբաին :  
 Յարձակել կրկին զաննենգ աղաւնին՝  
 Տերև 'ի նըշան ձօնէր ձիթենին .  
 Յերրորդ արձակման պատգամաբերին՝  
 Ոչ դարձն ազդ առնէր զցամաքումն երկրին :  
 Ելեալ յամրոցէ փայտեայ դըղեկին ,  
 Հայրըն փառաւոր նորոգման զարմին ,  
 Համբուրէր զդեալին զՏեառն սանատեղին ,  
 Հեղոյր ընդ ծընօսս դետս արտօսրածին :  
 Ուր սեղանակիր կարմելոս նախնին  
 Յերկինս ըզճենձերս ուղերձէր զոհին .  
 Ոչ առ 'ի փեռեկ սահանաց երկնին ,  
 Եւ զի թողոցան ջուրք ջըրհեղեղին :  
 Հոս ողջակիզաց յըստակ նուիրին  
 Ընուշակ սրփուէր յերկինըս վերին .  
 Հաճութեան սիրոյ սուրբ մարդասիրին  
 Ուխտել թելադրէր զուխտ զանջրերին :  
 Շիթք կիսաբոլոր ամպեայ մանեկին ,  
 Գոյնք զարմանածինք յարեման շողին ,  
 Նըշան հաստէին յանփոփոխ բարին  
 Չածել ևս հեղեղ յողող բոլորին .  
 Ընդանօր արգանդ պարարտ լեռնօտին  
 Սաղմնառեալ զարկումն գինեծին ուռին .  
 Երիւն բեղմնաւոր որթոյ սորեկին ,  
 Սըխիթար ձօնէր Հօր մեր երկրորդին .  
 Նախնի իջեան քաղաքն առաջին  
 Իւրայնոց բընակ անդ յԱրարադին .  
 Ուր տեղի առեալ նոցս զառաջին ,  
 Նոր զՀայաստան բաղմամարդեցին :  
 Որոյ ընդարձակ դաշտ վայելչագին ,  
 Իերոց արգասեաց մայր առատածին .  
 Ուր ահանակիտ մշտահոս ուղիսին  
 Օրառազարդ զըլորաս երանգեն զերկրին :  
 Օդըն մաքրագոյն 'ի սիւկ զովագին  
 Սըշկաբոյր շենչէ ըզհոս ծաղկոցին .  
 Հովիտք բուսաբերք գունով կանաչին  
 Վայր անմահութեան անդէն փողփողին :  
 Իասակք անդէոց և ոչխարք հօտին  
 Խոտաւէտ խայտան յարօտըս մարդին .  
 Իառանց գուժարտակ և որթուց եղին  
 Յադեալ կաքաւեն առ մարցն 'ի ըստին :

Օ՛ր ի յեղծմանէ ուղիսից հեղեղին  
 Նորաստեղծ երկիր խընամով Հաստչին  
 Յարգաւանդահող յիւրումըն ծոցին  
 Օ՛ր եղ ըստածէր զերկրի դալարին :  
 Ընդ յորդէր ծընունդ մարդկան տեսակին .  
 Փոյթ լընոյր ըզլայրս բընակչօք ազին .  
 Յերկից ըստեղանց ընտրութեան արմին  
 Բերրի բարունակք յուռթի ծաղկեցին :  
 Բզլերանց սահմանս և զդաշտավայրին  
 Հարուստ բազմութեամբ բարգաւաճեցին .  
 Կերտումըն շինից կարգ քաղաքային .  
 Ընդ որր վայելիւք փայլէր ՚ի նոսին :  
 Վեց հարիւր դարուց փորձ Խոհականին  
 Ուղղութեան քարոզ էր այնց առ բարին .  
 Տոյժ ջըրահեղձից խըստասիրտ զարմին  
 Կանոն ըսթափման մերձ յամենեսին :  
 Իւրն ապրեցուցիչ կազմուած տապանին  
 Ի Մասեաց կատար քարոզ անլըռին ,  
 Մըշտաձայն գոչէր ՚ի լիս խուժանին  
 Բզդէպսըն չարաց զննամս Արարչին :  
 Որով սրաշտամանց ուխտ Արկնաւորին  
 Հաստատուն հիմամբ կանգնէր ՚ի յերկին ,  
 Մըտերխմ գաշինք սիրոյ պայմանին  
 Իբրու յագամանդ անջինջ տըպէին :  
 Արդար ամուսնաց կարգ վայելազին  
 Հարազատ որդւովք պանծայր անդըստին .  
 Սէր եղբայրական գութ համազգային  
 Բստ աննենգ թըռչնոց կայր անդ բազմածին :  
 Այն դար ոսկեղէն յանոսկի նուագին  
 Յեանոցս անձկալի հընչի տակաւին ,  
 Լիութեան բերմունք զանդ որրանս սըրտին  
 Եւ արդ ՚ի լըսողս զեղուն պանծագին :  
 Այս էր պերճաշուք փառք Հայաստանին ,  
 Յայս հանգէս նազէր նահանգն Ադեմին :  
 Որ թէպէտ այժմիկ լըկեալ ցաւագին ,  
 Իեռ յիւր աւերակս շողշողէ նախնին :  
 Արդ՝ որպէս օրէնք տընկոց մըշակման  
 Քանց օրինադրէ թաւալից խըռնման ,  
 Նոյնպէս և ամբօխ խուռն ՚ի Հայաստան  
 Հընարս արկ ՚ի գործ յօգուտ դիւրութեան :  
 Երկիրն ընդարձակ բերովք բեղմնական  
 Հեծէր ընդ բեռամբ բազմութեան մարդկան :  
 Յաճախք ծընընդոց քան զիւր բաւական  
 Վիշտըս բերէին յայն նախնեաց կայան :

Տի՛ նա այլ կողմանց գընդոյս երկրաստան  
Թափուր 'ի բնակչաց կային անդարման .

Տեսչութեան խընամք հանուրց ստացական  
Եւ յարդիւն նոցա արնտեսէր զօճան :

Ուստի մինչ Փաղէկ 'ի կրտրոց ծնընդեան  
Փեռեկէր ըզցանկն ըզմայրենական ,  
Խորհուրդ 'ի սըրտի ներշնչեալ մարդկան՝  
Բաժանէր զոմանս յայլ երկրի սահման :

Բնդ որս և դիւցազն իմ Հայկ Թորդոմեան ,  
Ըյր հաստաբազուկ անզոյգ աղեղան ,

Ի ցըրօնս նոցին և ինքն միաբան

Թողու ըզնախնի երկիրն Աղինեան :

Դիմեալ ընդ հարաւն արևմտական ,

Գըտին Սենասար ըզգաշտ լայնական .

Ուր կալեալ բընակ սերտ ընկերական ,

Լընուին զերկիր ազգօք զօրութեան :

Անդ և խայտակնեայ Հայկ արիական

Բստանայր որդի իւր դիւցազնական .

Օ՛րմենակ ծընունդ հօր համանրման ,

Բստ որմէ և զայլս 'ի կարգ սերընդեան :

Անդ Նեբրովթ Քուշայ սիրտ ամբարտաւան

Տիրել բընաւիցն յըղանայ յինքեան .

Որսորդէ մարդկան Տեառն յանդիման ,

Իշխել բռնանայ աստուածանրման :

Նոյ յառաջատես բարուց մարդկութեան

Սըշտածուփ հոգովք գընէր 'ի վարան .

Մի գուցէ որոց թողին զՀայաստան

Հասցէ նանրանալ 'ի զեղծ խորհրդեան :

“ Գիտեմ ես , ասէր , զոգին անձնիշխան

Փութով աղարտիչ պարտուց պաշտաման .

Գիտեմ յոյժ վիսկոտ զայն ազին խուժան

Արագ մոռացող զԱրարչին հրաման :

Որպէս առաջին հըսկայքն անպիտան

Ի գործ անօրէն յահուր զեղխեցան ,

Նոյնպէս և սոցայն գայ ինձ 'ի խոկման

Ընդդէմ Բարձրելոյն յառնել 'ի խըժդան :

Քաղցր էր ինձ յերկրիս թէ և անձկական ,

Կալեալ էր նոցա վայր բընակութեան .

Օ՛ր 'ի յորդորակս և 'ի համոզման ,

Սեղձի թերևս ըզջիւս խըստութեան :

Գիտեմ զի գող է նախնին դաւաճան ,

Քաջ հընարագէտ յորսոյն թագուցման .

Մի գուցէ պատիրք նոր խաբէութեան

Յաշխարհ նոր պատժոց բերցեն ըզվըղեան :

Յայս վարան Նոյի գուժն արարչական  
 Եարժեալ 'ի խընամս ըստ բարի բնութեան ,  
 Խընդամիտ յուսոյ զեկոյց գիւրութեան  
 Ազգել խընամէր ընդ լուսոյն գեսպան :

“ Ե՛րթ , ասէր , սիլ պետ դու աւետաբան ,  
 Սրտի դիւր մատն շօրն երկրորդական .  
 Անմեղ ծերութիւն իւր բազմագարեան  
 Ի ծուփըս նեղի յալիս շուարման :

Բսկըսեալ յանպէտ շինմանէն բըրգան ,  
 Օանն ըստ կարգի որ ինչ ըզհետ գան .  
 Ազգ արա և զանցսըն Արարագեան ,  
 Յոր շուք պանծանաց փայլէ սեպհական :

Տուր տեղեկութիւն զորոց յապագայն ,  
 Բարիքըն զեղցին յայն վայր փափկութեան :  
 Որ ինչ գիւրութեան սըրտի է դարման ,  
 Սատն աննախանձ բերան առ բերան :

Աըրացեալ իսկոյն առ երկնից հրաման :  
 Պետըն վերնային Գաբրիէլ իշխան ,  
 Հատանէր ուղի յօգս ընդ Հայաստան ,  
 Տալ Նոյի ըսփոփ սըրտին անձկութեան :

Այր փառազգեստեալ յաղնիւ կերպարան ,  
 Կամար սուրբ ընդ մէջ յոսկոյն Ուփօզեան :  
 Օւփօզոյն մարմնով յանուշակ ծածան ,  
 Փայլումն երեսացն ըստ փայլատական :

Բոց հըրոյ արծարծ յականց տեսարան  
 Բազուկը իւր և բարձք պըղինձ 'ի ծըխման .  
 Օջրեղ ազդուութիւն 'ի բարբառն 'ի բան ,  
 Օկողուն 'ի շընուհս սըրտի կազդուրման :

Այն ինչ վարդասփիւռ մատուներ արեւին  
 Յերկիր ըզճաղկունս լուսոյ թափէին ,  
 Տապեալ 'ի խորհուրդս հանգուցիչ սըրտին ,  
 Աըստէր առ ծառով իւր դարաստանին :

Անդ էր նոր տեսիլ հանդէպ երեսին ,  
 Ի բարձուէ Սասեաց սիլ գերմարդկային .  
 Բերկրանք ընդ զարմանս անդ թեակցէին :  
 Ի սիրտ վարանոտ նոր յոյս հեղուին :

Ղոխաճեմ ընթացք վերնոյ գեսպանին  
 Արագ մերձենայր ծաղկեայ գըրաստին .  
 Օկըք հիւրընկալու աշխոյժ եռանդին  
 Յողջոյն յառաջէր զընթացըս Նոյին :

Խանդըն իւր համեստ 'ի գահոյս սըրտին  
 Կաթոգին վառէր գըրգել 'ի պատուին :  
 Յողջունեւն ըզհիւր օրինօք երկրին  
 Ղոխ քաղցրաբանէր ըզգովեստ նորին :

“ Տեսիլ քո՝ ասէր , գիմացդ 'ի փայլին ,  
 Փառաց է ցուցակ աստուածականին .  
 Քայլքդ փառահեղ ճեմքդ ազատագին  
 Օղարթնոց երկնից ցոյց է 'ի մարմնին :  
 Յառաջ քան զողող հանուր աշխարհին  
 Բազմիցս այդ երևք ինձ 'ի դէպ եկին .  
 Յորժամ ընդ շամբնոց բերմունս մուկեցին  
 Ի հառաջ փոր իմ մաշէր դառնագին :  
 Ընդ սոյնօրինակ դէմք ասեղագին  
 Ընթաժան լծորդք շնորհաց պատգամին ,  
 Ինձ 'ի շուարմունս ըսփոփ ցողէին ,  
 Յուսագիր 'ի նոյն միշտ կազդուրէին :  
 Ըրդ սիլ նոր փայլուն դու աստուածային :  
 Ենթ պատգամաբեր գրթոցն երկնային .  
 Հեղ 'ի տապ սրտիս քաղցրս սիւկ բանին  
 Օղվացն լըրովն երկնից հրամանին :  
 Վիտեմ զի գալուստ քո այդ պանծագին  
 Ըւետեաց է ինձ բերող ջընօրհին .  
 Յայտնեա՛ աղաչեմ յայտնեա՛ լիովին ,  
 Ար ինչ 'ի ցրուեալ ցեղն իմ լինիցին  
 Ըյս է իմ հանգիստ , այս դիւր հեշտագին ,  
 Յայս տիւ և գիշեր շուար դեգերիմ .  
 Տուր ինձ զոր ազդեաց Վեհն անչափելին ,  
 Օայն լըսել ցանկամ յեռանդ սաստկագին :  
 — Դու սիլ նոր մըշակ նոր հանգիստ երկրի :  
 Եոր 'ի գործ ձեռաց ըզբաղեալ արի .  
 Մի տապիր յոգի յուզմամբ խորհրդի ,  
 Ըսէր ջերմագին Վեսպան բոցարդի :  
 Հրաման է առիս՝ վեհ Ինքնակալի ,  
 Պատմել զոր ինչ էն յապոյս լինելի .  
 Քաջ ունկընդիր լեր լըսել ըստ կարգի ,  
 Ի ծրրարս ժամուցն եղելոց թագնի :  
 Երկրէդ գաղթելոց 'ի նոր բնակարան  
 Հասցէ վերստին ոգի նըշկահման .  
 Յընդունայն խոկմունս դարձցին միւսանդամ ,  
 Չարաչար զեղծուլ յուխտըն վերնական :  
 Խորհուրդ անօրէն ծընցի յայն խուժան ,  
 Ըէնքս հաստատել բուրգ երկնաժաման .  
 Բոտանալ պարձանս անուն 'ի յիշման ,  
 Վալով 'ի վըսեր ընդ Ինն անսահման :  
 Ըյլ գործ բազմամեայ ծընունդն անպիտան ,  
 Բերցէ 'ի նոսա շրփոթ խրժաձայն .  
 Հիմնահաստ շինուած աստղամերձ բըրդան ,  
 Եւ զաւերակին ջրթողցէ նըշան :



Ընդ Ներքուլթ գոռոզ զածածըն Քուշեան  
 Յանձըն գրաւեսցէ զպաշտօն տիրական :  
 Արով ուխտ չարին ըսպաս դիւական  
 Օերկիրն 'ի պըղծոց դարձուցէ մեհեան :  
 Բայց արագ վըրէժն երկնաւոր ցասման  
 Չուառ կորուսցէ զայն յայս երկրաստան :  
 Ի քոց սերընդոց Հայկ աստուածածան  
 Կանգնեսցէ աստէն զազգ իւր զընտրական :  
 Պաշտօն երկնային՝ որ աստ, հիմնական  
 Յաւէտ քան յայլուր կացցէ անասան :  
 Սուրբըն առաջին վեհ ամենիշխան  
 Ամբիժ պաշտեսցի յերկրիս փափկութեան :  
 Իսկ թէ մեզ մըթին յետ այլոց տիրման  
 Բազուկ ձըգեսցէ այսր 'ի Հայաստան ,  
 Ա՛չ յերկար տեղի կալցի բըռնութեան  
 Յանդունդս ընկլուղեալ անգիւտ կորըստեան :  
 Ինքնին բազուկ Հօր Աջն անեղական  
 Ահարկու ձայնիւ սաստիկ որոտման  
 Յուժգնակի հարուած ոսկեձոյլ ուռան  
 Արձագանգ հարցէ առ խորոցն իշխան :  
 Ըստ հիմնահաստեալ աթոռ տէրունեան  
 Տաճար կանգնեսցի լուսաձև խորան :  
 Ըստ քան յայլ տեղիս եռանդ սրբութեան ,  
 Վառ արձարձեսցէ ըզհուր սրբազան :  
 Ըստ արջնաթորմի ուլուցըն հօրան  
 Ընցեալ ընդ մաքուր գետ երկնահասան  
 Չիւնասցին փայլուն յերանգ շողջողման  
 Ի ուսափայլ թևօք յոսկեգոյն թիկան :  
 Ըստ անմահացի աւանդ նախնական ,  
 Չըքնաղ զարդարել զազգդ արիական :  
 Ըստ մտերմութիւն զարդ վայելչական  
 Տացէ տոհմայնոցդ տիպ ազնուական :  
 Յորձանք չարութեան թիւրալից ուսման  
 Չըգըտցեն ըզմուտ յուղղութեանս կայան :  
 Կայց դու խընդամիտ մերժեա՛ ըզվարան  
 Քոյայնոցդ եղեալ բարեօք կըրթարան :  
 Յայս խրախոյս բարեաց յայս զուարթնոյն քան ,  
 Սերտ յուսով լընոյր նոր հիմն օրհնութեան :  
 Յողումն ուղփաճեմ յանդրէն 'ի դարձման  
 Խընդաւէտ շողէր իղձս 'ի սիրտ Նոյեան :  
 Յառնէր անդ իսկոյն բերօղն հանգըստեան ,  
 Օկոյր ըզհոգին 'ի թորս գոհութեան :  
 Օընկոց գետնամաճք երկնից յանդիման  
 Յազազակ երգոց թընդէր զդարաստան :

« Դ՛ն Տէր իմ, ասէր, դ՛ն իմ փրկարան :  
 Դ՛ն զիս հաստատիչ ազգաց սերմնարան .  
 Դոհութիւնս անբաւս օրհներգս անվախճան  
 Հընչեալ, տակաւին մընամ պարտական :  
 Ընուն քո և կամք միշտ բարեհրաման  
 Եղիցին օրհներալ յաղինս ամենայն .  
 Ըրա՛ տէր, խնդրեմ, իմում սերընդեան  
 կալ անըստերիւր 'ի քո պատու իրան :  
 Ըյս է իղձ հոգւոյս այս տենչ փափաքման  
 Յուխտի քում մանկունս ունիլ ժրրաջան :  
 Եւ 'ի Մարդկօրէն վարումն ուղղաբան  
 Հաստատուն սիրով կալ ընկերական : »

Գ Լ Ո Ի Խ Ե .

### ԱՇՏԱՐԱՆԻ ԲՆՈՒԹԻՒՆՆ

Հողին աննիւթ և անձնիշխան շունչ երկնային  
 Ինքնագործ է թէև կապեալ ընդ նիւթ մարմնին :  
 Յօժարութիւն իւր ընդարձակ յամենեւին  
 Տանկայ ձրկտի ընդ որ բերմունք իւր հաճեցին :  
 Բըննել զանպէտն և զպիտանին գործ է բանին ,  
 Ըլ զառածի թէ զգայութիւնն իցէ ուժգին .  
 Մարդ երկոցունց հաղորդ 'ի ծնէ իւր անդրստին ,  
 Յերկաքանչիւրն իսկ սիրարկու է յիւր սրբտին .  
 Ըստղիկն երկնից և դրժոխոց յաշխոյժ ներքին  
 Եռանդավառ կայծ բորբոքեն առ հեշտալին .  
 Մինն ընդ քրրտունս նաւել, ասէ, յանանց բարին ,  
 Միւսն ընդ ծաղկեալ մարմանդ գըլէ 'ի բանտ մըթին :  
 Ընդ է շուարք անդ տաղտապանք ուղևորին ,  
 Մինչ անխորհուրդ խարդաւանի ընդ բան կեղծին :  
 Յառօրական աշխատութեանց խուսեալ ինքնին ,  
 Յանանց տանջանս մատնէ զանձն իւր ողորմելին .  
 Ըյս վիճակ էր 'ի Սենասար մարդկան խըմբին :  
 Ըյս նոցա գործ 'ի լայնադիր սահման դաշտին .  
 Ըռ ձեռն էր անցք Նախաստեղծիցն 'ի դրրախտին ,  
 Չէր անձանօթ դառըն դիպուած ջրհեղեղին :  
 Տես աստ ըզբոյս բարուցն 'ի չար ըզմարդկային ,  
 Որպէս անդրէն փոյթ առ 'ի նոյն վայրաբերին .  
 Նախանձ անուան սիրտ պարծանաց կալեալ յանձին ,  
 Ըզխորհրդեամբ գան միաբան 'ի միասին :

Հըսկայք հըզօրք գոռ Տիտանեանք յաղթամարմին  
 Ներբովթ և Հայկ և այլ գոռողք 'ի նոյն կարգին ,  
 “ Մեր ուժգնութիւն զօրէ , ասեն , ամենայնին ,  
 Չեռնունայն կալ անգործ ընդէր մեզ բընաւին :  
 Արդ շինեսցուք քաղաք և բուրգն յոյժ ահագին ,  
 Արոյ գըլուխ բարձրակատար հասցէ յերկին .  
 Թողցուք անուն 'ի հող երկրի և 'ի քարին ,  
 Օ երծ մընացեալ 'ի վերստին գալոյ պատժին ” :  
 Անդ նորողէր հանդէս մարտի չար իշխանին ,  
 Նորազինեալ ոստչէր 'ի դուրս փոյթ առ նըմին .  
 Գեղձըս շնչէր յամենեւեան ըզդիւային ,  
 Ի գործ մըղել ընդդէմ կամացն աստուածային ,  
 Բերան բացեալ անզըր ծովակն անդընդային ,  
 Առատ բըղխէր՝ կուպը 'ի շաղախ անպէտ շինին .  
 Եռայր երկիր 'ի փորոտիս իւր կոշտային ,  
 Հողըս բըլտէր 'ի նիւթ ջանից աղիւսարկուին .  
 Գորձանք հըրոյն 'ի դժոխացըն գեհենին  
 Ի թուրծ հաստատ բոց տոչօրիչ արծարծեցին .  
 Նիւթըն պատրաստ խանդըն բորբօք ձեռն 'ի ձեռին  
 Սերտ խորհըրդով յաջողս 'ի գործըն ղեղուին .  
 Խորապատառ վիհըն հիման յիւր յատակին ,  
 Շըփօթ խըռնէր առ 'ի պատիժ յանդուգն ախտին .  
 Վաստակ անխոնջ միասըրտեալ յամենեւին ,  
 Դիրս անհեթեթ շոյտ ըստուարէր յանկարգ շինին :  
 Գլխըմբերձիկ վերելք զամպովքն եթերային ,  
 Բզկամարաւըն բարձրութեան քերէր լուսնին .  
 Քաջ Տիտանեանք լեռն 'ի վերայ լերանց եղին ,  
 Ատից մարդկան շաւիղ հորդել յաշխարհ վերին :  
 Այ Ռեթեւեանն էր անդ սանդուղք զարմանալին ,  
 Բնդ որ հրեշտակք 'ի յելսն և յէջսն իսկ հրձուէին .  
 Յորոյ 'ի գլուխ Տէր հաստատեալ օգնել ինքնին ,  
 Յեղբօր կըրից տարաշխարհիկ գաղթականին :  
 Այլ նոր երկունք հըպարտութեան հին գոռողին  
 Առ , յանդըգնիլ ընդդէմ փսռաց Նըքնաբաւին .  
 Յորոյ գըլուխ նոյն Տէր շընչմամբ ահեղագին ,  
 Արպէս խըռիւ հոսել ըզբուրգն յերես գաշտին :  
 Անդր 'ի շինին միալեզու բարբառ հընչեալ ,  
 Օրր յԱգամայ ազգըն մարդկան էր ընկալեալ .  
 Արով ընկեր զընկեր 'ի գործըն յորդօրեալ ,  
 Կուռըն ջանիւ համայք յերկունս քըրտան անկեալ :  
 Աղաղակին գօչիւն ղերկինըս դըզըրդեալ ,  
 Ի յանմարմինս նոր հիացումըն տարածեալ .  
 Ամենագէտն 'ի տես բըրգան իսկոյ իջեալ ,  
 Բմբոն պատիժ չարեաց մարդկան փխարինեալ :

“Ազգ մի, ասէ, և լեզու մի միասրբտեալ,  
 Օրինչ կամիցին առնել, կարեն համախըմբեալ:  
 Եկայք իջցուք յայն միութիւն վերդով արկեալ,  
 Ելլալեզու ձայնիւ ազգ ազգ տարաարոհեալ”:  
 Անդ միութիւն խօսից Աոյի բազմաբառեալ,  
 Սինն ՚ի վեցեակ երկոտասանրս բաժանեալ,  
 Եւր զընկերին լսուել բարբառ անկարացեալ,  
 Թողուն ըզգործն, ՚ի ցիրս յերկիր մըտաբերեալ:  
 Ի Սեօտրեմայ բարբառ Յաւան կայր համբացեալ:  
 Գաղղիացին առ Յունական տրղայացեալ:  
 Գոթք և Սկիւթք և Վինացիք տարաձայնեալ,  
 Ազգ և ազինք անգէտ միմեանց անդ զողանջեալ:  
 Վա՛նչ Հայաստան քու՛մ վիճակիդ բարեբաստեալ:  
 Ի բուն լեզու անխառն յըստակ բանավարեալ:  
 Օրինչ երկրորդ նոր ազգայնոց յայնմիկ վարժեալ,  
 Լնթիւ ծննդովք ՚ի քոյդ սահման էր բազմացեալ:  
 Եյն ինչ վըրէժն երկնից զարթեալ յազգ յանդըզնեալ  
 Խառնալեզու պատժով ցըրուել զէնն բսկըսեալ,  
 Աոյ յիւր երկրի ՚ի ձեռին իւր գործ ըզբաղեալ,  
 Ասինի լեզուաւ զամբիժ տւանդըն բարբառեալ:  
 Ի իցի՞ հաղորդ պատժոյն այր սուրբ մեկուսացեալ,  
 Որ ո՛չ ՚ի գործ յանցման գըտաւ ինչ հաղորդեալ:  
 Թէ հարկն առնէ յայլոյ բարբառ լինել միտեալ,  
 Օր՞ք հարկ ասես ըզՆոյ յօտար լեզու հարկեալ,  
 Ի ցըրուելոց Հայկըն միայն ՚ի Հոյս եկեալ,  
 Սակաւ իւրովք և ուրք ՚ի յինքն եղեն յարեալ:  
 Գայ գըտանէ ըզՀայաստան խուռըն լըցեալ,  
 Որ ՚ի բընիկ անդըր լեզուի յըստակ կացեալ:  
 Օրինչ գժուարին վարել Հայկայ զոր նախուսեալ,  
 Թէ և խառնակ լեզուօք գիցուք ըզնս եկեալ:  
 Աս՝ գուցէ իսկ խընամով իմն՝ ոչ խառնակեալ,  
 Որում յանպարտ երկիր գիմելն էր սահմանեալ:  
 Գութըն վերին և յոյսմ առ Աոյ քաղցըր բերեալ,  
 Ասինոյն լեզուաւ երկրի նոր հայր անդ հաստատեալ:  
 Ուստի և զիւր շնորհօք լեզուն նախաստեղծեալ,  
 Չըտայ ՚ի լեփ և ՚ի կորուստ համայն եղծեալ:  
 Թէ չիք հընար գոյի իսպառ ոչընչանալ,  
 Թէ և լիցի յայլ և այլ կերպս ինչ փոփոխեալ,  
 Օրհարդ լեզուն անդր ՚ի գըրախտ կանխաբանեալ,  
 Եղծցի համակ ՚ի յաշխարհէ անհետ եղեալ:  
 Աընաց ասեն այլ ո՛չ առ Հոյս յարակայեալ:  
 Ելլ յայլս ազգաց վերնոյն խնամով փոխ ամանցեալ:  
 Ե՛հէ՛ զի՛նչ այդ, ո՞ր իրաւունք այդպէս գործեալ,  
 Պատժել զանմեղս՝ առ յանցաւորս շնորհ կալեալ:

Եւ այլք լեզուաց մի թէ չիցե՞ն յէն շնորհեալ,  
 Ըսեն, որք զայս ժըխտել կամին հակառակեալ.  
 Տուրք Կստուծոյ է ամենայն յէ անաստեալ,  
 Բայց շքիթումն գործով մարդկան է պատճառեալ:  
 Յայն գոռողանս երկրին Հայոց ոչ սիգացեալ,  
 Եւ ոչ պատժոյն յանդըգնութեան ինչ կըցորդեալ.  
 Կրա լեզուն առաջնաստեղծ անդ մընացեալ,  
 Կգըն Հայկայ՝ միշտ ՚ի նրմին պերճաբանեալ:  
 Կն ինձ Սարանդ և զԱրկուռին նախակերտեալ,  
 Բճնախնուան և զայլ իսկ շէնս ՚ի նոյնս յարեալ.  
 Արք յամենայն ազգաց լեզուս այնպէս կոչեալ,  
 Տան մեզ նըշան բընիկ լեզու ին Հայոցն եղեալ:  
 Եւ մեք ըզսոյն ՚ի հաճութիւն այլոց թողեալ,  
 Յառաջ տարցուք ըզկարգ բանիս միայտեալ.  
 Յայն խառնակուրդ յանցուցելոցն պատուհասեալ,  
 Թողուն ըզշէնն յայլ բնակութիւն գիմեն գաղթեալ:  
 Իսկ որք կացին անդ ՚ի վայրին տեղի առեալ,  
 Խեռ շամբշութեամբ յէն եղեն ապրստամբեալ.  
 Կնդ հինգերորդ գըլուխ օձին վիշապացեալ,  
 Եւ հինգերորդ տուտ վիշապին զստեղս քարշեալ:  
 Գոռող հըսկայն սրսորդ մարդկան աստուածացեալ,  
 Յամենեցունց զաստուածական պատիւ առեալ.  
 Բըտիեղերս ՚ի խաւարի կուրացուցեալ,  
 Օանսուրբ կըրօն կռապաշտութեան հիմնաւորեալ:  
 Օոր մէն մի ազգ ըստ իւր լեզուին այլաձևեալ,  
 Բզգարշէլոյն անուան կոչումն վերաձայնեալ.  
 Ի Քուշացւոց Նէբրովթ յանուն վերսպատուեալ,  
 Բաբելացւոց ՚ի Բէլ անուն ըզնա պաշտեալ:  
 Փըղըտացիք Բահաղ չաստուած զայն յորջորջեալ,  
 Հեւենացիք Ղիոս մեծ հայր ըզնա պատուեալ.  
 Պարսիկք Արմիզդ ասեն յաշտիւ հօր իւր ծընեալ,  
 Հայք անագան իսկ Արամազդ անուանադրեալ:  
 Ի վաղ դարուն կռապաշտութեան սկըզբնաւորման,  
 Կախ սա էառ ըզսուտ պաշտօն աստուածութեան.  
 Եւ անաստուած դենից յամառ մոլորութեան,  
 Բսկիզբն եղև յանպիտան իւր կենդանութեան:  
 Եհեղ ՚ի նա վիշապըն հին թոյն սատակման.  
 Եւ խըստասիրտ գոռողացոյց յոյժ անդարման.  
 Սինչև առեալ աճ կործանեաց ՚ի Հայաստան,  
 Օխաբէութիւն մուրթ թողեալ յիւրսն ամենայն:  
 Յաւերակին Քուշայ նոր գաղձ անկրօնութեան,  
 Չարապըտուղ բեղմնեաց գաղտնի օրօմնացան.  
 Երկրի չաստուածս բազմացուցեալ որդւոց մարդկան,  
 Բնկըղղ, իբրու զանունըն Տեառն արկ ՚ի խափան:

Ընտուրք պաշտօնն ընդերկարեալ 'ի սովորման ,  
 Քարանց փայտից ետ զանհաղորդ կոչումն անուան :  
 Ե յսպէս յերկրի պիտակ չաստուածք յաճախեցան ,  
 Օ եռունք սողունք գաղանք և այլք յայն պատուեցան :  
 Եբաց կրկին ներքին դժոխք զիւրն որովայն ,  
 Ի դուրս վիժեաց ծընունդս անպէտս անկերպարան :  
 Երուեստ ներկոց յըստուերագիրս անդրը խառնման ,  
 Ի գեղ մատոյց երփներանգուն չըքնաղ տեսլեան :  
 Վէհ պարծելոցն յիշխանութեան բուռըն հրաման ,  
 Եհեղս եցոյց ըզնոյն պատիւ սուտ պաշտաման :  
 Ի հին բանտէ նորեղանակ պատիժք ծընան ,  
 Տալ զոչ պատուօղս դառնակոչկոճ 'ի կուր մահուան :  
 Եղծաւ յերկրի կարգըն մաքուր ամուսնութեան :  
 Սահմանք նորա պղղծոցն եղեն շանց խառնարան :  
 Իաւաղրութիւնք նենգք և պատիրք խարդախութեան ,  
 Օ եղան 'ի բանս եղծին զօրէնս ըստուգութեան :  
 Վաղվաղեցին յերդումըն սուտ ամենեքեան ,  
 Չունելով ահ 'ի ցասմանէ դիցն անկենդան :  
 Բսպանութիւնք գետ բըղխեցին անմեղ արեան ,  
 Օրնունդք մարդկան գիշախանձ գայլ միճեանց դարձան :  
 Ե յսպէս երկիր միգապատեալ 'ի խոր մըթան ,  
 Ի մոռացօնս էարկ ըզլոյսըն նախնական :  
 Մինչև նոր Հայր սուրբ հաւատոյ եկն յերևան ,  
 Որ տասներորդ էր 'ի Նոյէ կարգաւ ծնընդեան :  
 Կամքըն վերին ազգէր նըմա անդր 'ի Խառան ,  
 Օ էլըն յերկրէ և 'ի յազգէն հայրենի տան :  
 Որում չուոց գիրկս արկանէր սիրով Քանան ,  
 Ուր 'ի ծընունդս յորդէր բանիւն աստուածական :  
 Լոյս հաւատոյն 'ի տան նորա մետուզփական ,  
 Լուսազարդէր ըզնորայն գէմս առ ամենայն :  
 Յորմէ նոր ճիւղ պերճ ըստեղնեալ 'ի ծերութեան ,  
 Լընոյր զաշխարհ նոր ծընընդովքն աստուածաճան :  
 Վըճուէր երկինք նըմա խոստումն անջրբական ,  
 Յանձըն երդուեալ ճըշմարտութիւնըն տիրական :  
 Յոյժ բազմանալ որդւոց նորա աստղանըման ,  
 Ի զաւակի նորին օրհնիլ ազգացն համայն :  
 Բայց տակաւին վիշապըն հին ամբարտաւան ,  
 Օ ազգըս բազումս բանտէր յիւրոցն ախտից զընտան :  
 Եւ զազգըն սուրբ ևս 'ի ջընջել բերէր ըզջան ,  
 Ե յլ վերիպէր 'ի խորհրդոց իւր չարութեան :  
 Օ ի պահպանիչն ըզնա իբրու ըզբիբ ական ,  
 Բարձեալ բերէր յարծուաբար թեոց խընամ :  
 Եւ օր քան զօր 'ի զօրութիւն վեհազնական ,  
 Եճէր յընախրոն աւանդըն սուրբ վայելութեան :

Մի գերասքանչ նոր այս բարեաց առատութեան ,  
 Որովք համայնց արդիւնք շնորհաց պարգևեցան .  
 Մի զօրութեան Երկնաւորի՝ սուրբ ուժգնութեան ,  
 Որով հրգօրրն կապեցաւ անլուծական :

Ընաջնաստեղծ կրնոջ որդին հուսկ 'ի վսխձան ,  
 Կոխեալ ջարդեաց զօձին գրլուխ չարագարան .  
 Բզդից պաշտօն մերժեալ յերկրէ արկ 'ի խափան ,  
 Յերկնից գաւիթըն գումարեաց զազգս ամենայն :

Գ. Լ. ՈՒ Ի Խ Ը .

ՎՍԵՐՄԵՑ ՈՒԹԻՒՆՆ ՀԱՅԿԱՅ

Նոր ինչ եկն 'ի յայտ արտաքոյ կարգի մըտաց մարդկային ,  
 Թանձրանիւթ մարմնոյ զաստուածեան պատիւ տալ իւրոյ անձին .  
 Գոռողն այն Նեբրովթ յայս խոր կուրութիւն ընկրղմեալ ինքնին ,  
 Լպշութիւն մըտաց ծաւալէր 'ի հին գոռողս անդընդին :

Սոսկաց սաղայէլ յանկարդ յայս խիզախ Քուշոյ զածածին ,  
 Ընդ աստուածանալ առնն մահացուի գրժօխք սարսեցին .  
 Եթէ հրանիւթից յայս կամբս եղեալ զերկինքս լըքին ,  
 Քանի՞ սոսկալի երբ հողանիւթեայք յայն յանդգնեցին :

Ինչպէս իմ հաստատ յաստուածպաշտութեան կրթօն հայրենին ,  
 Փառացն Ըստուծոյ նախանձախընդիր կանգնէր անդըստին .  
 Չառնու յանձն ապա 'ի հըրութեան կալ սէգ այն հըսկային ,  
 Եւ նչ իսկ մընալ 'ի խառնախաղտիւն ընդ Քաբէլոնին :

Ժողովէ զորդիս և ըզթոռունս իւր զարս ազնուագին ,  
 Բովանդակ աղխիւ Մ. յրարդ դիմէ յերկիր իւր նսխկին .  
 Ընդ որս և ոմանք որք 'ի Նեբրովթայ գործոց զըզուէին ,  
 Յարեցան 'ի նա գալ յաստուածաւանդ բընակն առաջին :

Ընդ ծով համաշխարհ յաջող նաւարկու Երկրակերտըն հին .  
 Գեռ սուրբ կրթօնին էր անչարժ արձան կանգնեալ յաշխարհին .  
 Ուր կենացն արև անաղօտ լուսէր 'ի Հայաստանին ,  
 Խաւար չարութեան մերժեալ էր անտի , լոյս էր բնաւին :

Հողըն հայրենւոյն ըստ համակրութեան բարեբոյս սըրտին ,  
 Ըզդէր ըզփափաք վերադարձութեան յանձըն Վիւցաղին .  
 Քացրաշունչ օգոյն յըստակ ծաւալուամն 'ի զովսնս անձին ,  
 Օ՛րդին սարտուցեալ 'ի գիրկըն ձգէր մօր հանրականին :

Նա՛ յաւէտ կրթօն աստուածպաշտութեան Աշդեմեան կային ,  
 Յինքըն հրաւիրէր զոչ հըպատակօղն ախտից Նեբրովթին .  
 Ուստի գէմ եղեալ իւրովքըն հանգերձ 'ի կոլմըն հիւսսին ,  
 Ի գաշտափար մի հանգիստ տայր չուոյն կորդուաց լեռնոտին :

Աւր դագար կալեալ գրտանէ բազում բընակս 'ի տեղին ,  
 Աբբ 'ի հըրութիւն ինքեան հաճելի կամօք գըրաւին .  
 Գաստակերտ կունգնեալ կալուած տայ իւրումըն Աագ մաս թոռին ,  
 Ինքն ընդ արեմուսս խաղացեալ հիւսոյ ընդ դիրսըն երկրին :  
 Հըրաւէր տայ անգ բարձրաւանդակ ինչ ծաղկաւէտ դաշտին ,  
 Գալ յիւր բնակութիւն 'ի վայելս արդեանց արգաւանդ վայրին .  
 Ընդ առնէ բընակ , անդ շինէ աւան 'ի հարթագետին ,  
 Հարբ անուամբ կընքեալ յիշատակ յետնոց 'ի վէտըս բանին :  
 Բնդ հարաւակողմն այնրմ սահմանի բընակիչք երկրին ,  
 Օանձինս ինքնակամ 'ի հնազանդութիւն Հայկայ մատուցին .  
 Արոց սիրակից հոգւով լըծորդեալ 'ի գործըս գետնին ,  
 Բազմազան բերովք յառողջ զօրութիւն ոգւոց սերտէին :  
 Սըրտակապ սիրոյ անդ կենակցութիւն յաւէտ քաղցրագին ,  
 Օրու ճըշմարտութիւն աննենգ յարգարիչ առ ամենեւին .  
 Չէր անդ մտխանաց արկած չարութեան ծերացեալ օձին ,  
 Եւ ոչ արհաւիրք անընդել բարուց ինչ գաղանային :  
 Հաճ ամենայն ոք խընդամիտ մընայր յիւրումըն բաժնին ,  
 Այ ոք ընկերին բարեաց ցանկութեամբ մաշեալ ցաւագին .  
 Ըմենայն ոք յիւր գործըս վաստակեալ յօգուտ իւր անձին ,  
 Ասկեփունջ հասկօք փարթամ զարդարէր զանդատան հովտին :  
 Ծաղկածին մարմանդք յառողումն ախանց նոր գըրախտ յազին ,  
 Վաստակ շահարար անդ թագաւորէր յաւէտ սըխրագին .  
 Սարգարօտ ճարակք յուռթի ջովացեալք 'ի սընունդ հօտին ,  
 Օառատանք տընկոց թաւ անթառամեալք 'ի շէնս բընակին :  
 Ընդեայք անասնոց 'ի զօրեղ ճնունդս զուարթ խայտային ,  
 Օղիք և այծեայք 'ի խոյս 'ի նոխազս անդըս կայտուէին ,  
 Օդային թըռչունք տարմատարմ 'ի զարդ թըռիչս առնէին ,  
 Բաղցըր մեղեդեօք ըզմայլել զունկան լըսարան ձայնին :  
 Իւրասիրաբերկրէր Խայտակնեայ իշխանն 'ի գործըս ձեռին .  
 Յիւրոցըն հրահանգ երկայնէր խըրատ ամօք և հեշտին .  
 Բաղցըր հեշտութեան անգ էր գահ ընտիր յագգ եդեմածին ,  
 Ընուշակ գորով զորդւովքըն փարէր 'ի տան Յաբեթին :  
 Հայրասիրութեան եռանդն արծարծէր 'ի ճընունդս Հայկին ,  
 Հաւատ անխարդախ տիրէր 'ի վիճակ ամուսնականին .  
 Սերով իսկ ասել 'ի նոր ըսկաման բընակ 'ի Հարբին ,  
 Բզբազմամեայ ինչ շինուածոց ճոխանս փարթամանային :  
 Յայս անդորրութիւն մերոյ Վիւցաղին քաղցը և հեշտական ,  
 Ա՛չինչ յապաղեաց աղմուկս արձակել հինն այն դաւաճան .  
 Բզցասուճըն սէգ վիսկոտ Հըսկային յուզեալ ծովանման ,  
 Ի փորին կուտէր դիզանէր ալիս չարաչար ծրփման :  
 Չէին ոք ոմանք 'ի յաչըս նորուն այքն ամենեքեան .  
 Ի վիշտ վարանէր զի Հայկ ընդվըղեալ գընաց գաղթական .  
 Երբեմն ըզցածէր մերթ ամեհանայր 'ի կատաղութեան ,  
 Ընն ինչ նըշկահիչ ըզնա տեսանէր իւր չատուածութեան :



Եւ ի հուսկ ՚ի շահել անդրէն յիւրըն սէր զայր անդուգական  
Օրջանէր ամօք բանիւ հրաւիրել յիւրըն կայարան .

Բզմի յիւր որդւոց ընդ այլ մըտերմացն առաքեալ գետսպան ,  
Խօսիլ սրտուիրէ առ մեր Նահապետ զայսպիսի սրտգամ :

“ Ա՛վքաջարիդ Հայկ , ընտիրդ ՚ի հըսկայս ծընունդ վեհազնեան .  
Օր՞ է զի լքեբ զերկիր Չերմագին ըզրաբելական .

Ի սառնամանիսդ առեր բնակութիւն ՚ի մէջ ցրտութեան ,  
Յերկիր լեռնային կարածըմեռնեալ ՚ի տեղացրս ձեան .

Մեղկեա՛ զցրտութիւն հըպարաքո բարուց հոգւով հեղութեան ,  
Ինձ հընազանդեալ յիմում աստ յերկրի կեաց ՚ի հանգըստեան՝  
Ա՛ւր հաճոյ է քեզ , կալ բընակութիւն յիմում տէրութեան ,  
Եւ մի տար այլոց գովին օրինակ խեռ և հեստական :

Հըզօր տէրութիւն ոյժ իմոյ բազկի և բաղդ յաջողման ,  
Չընեբեն երբէք ումեք ընդ վըզել կամ կալ ՚ի խըժդան .

Խընայեա՛ ՚ի քեզ և ՚ի քոյայինսդ յանյանցիցն երամ ,  
Եւ մի տար պատճառ կարճելոյ կեանաց ձերոց յամերամ ” :

Յայս ուռոյց Բելայ պիտակ պանծանօք ՚ի վեր քան զարժան ,  
Ունչ քերեալ Հայկայ ահեղ խիղոխէ առնել պատասխան .

“ Երկիր բարեբեր , օդ բարեխառնեալ , յադենիս սահման ,  
Չետուն բընակիլ ինձ յերկիր տապուն և անբեղմնական :

Կոտուածապաշտութիւն հօր մերոյ Նոյի կըրօնն իսկական ,  
Չըթողու պաշտօն տալ առն անարգի ՚ի գերիս մահուան .

Մի վըստահացի Նեբրովթ ՚ի հասակ իւր վաթսընկանգնեան ,  
Մի դիցէ ըզյոյս յուժգնութիւն բազկին իբր անկըրկնական :

Նա որ խաւարեաց ըզլոյս հաւատոյն աստուածապաշտութեան ,  
Օքրկեսցի անշուշտ յարեէն նեմիւք իմումս աղեղան ,

Չիք բընու բաժին ինձ ընդ այնպիսի հաւակ գարշութեան ,  
Եւ ոչ իսկ կարեմ կալ ընդ տէրութեամբ նորին անպիտան :

Սուտ աստուածութիւն աստ ընդօտնեսցի ճեաին Բուշական ,  
Յանդուգն իւր արշաւ խըղեսցեն ըզջիլս մարմնոյն պընդութեան .

Թէ ՚ի մարտ գայցէ նեղել յանիրաւս զայր ազատական ,  
Գերեսցի յորգանց իւր մըտաբլուր գըրակ տիտանեան ” :

Եւ յապէս կորագլուխ իւր պատգամաւորք ՚ի Բաբէլ դարձան ,  
Պատմեն ըզխըրոխտ բանիցն եղանակ որդւոյն Թորգովեան .

“ Բայց ս՛վ տէր հըզօր , ասէն , քո վիճակ բաղդ անմահական ,  
Օերկինս իսկ սարսեաց յահեղ շինութեան երկնաբերձ բըրգան :

Թէ ճակատագրի շէր կալեալ նախանձ ընդ վեհդ աստիճան ,  
Երգ իսկ վերնայարկք երկնից էին մեզ արձակ ճեմարան .

Պարձեսցի՞ և ևս ՚ի քոյդ քամահանս գաղթեալն Յարեթեան ,  
Եւ յլոց օրինակ տալ հըպատակացդ զսպըստամբութեան :

Օրնչ ոյժ է նորայն զի անպարտելոյդ կացցէ ախոյեան .  
Կամ ո՞ր քաջարի մարտկաց բազմութիւն կացցեն օգնական .

Բնդարձակ երկիրն թէպէտ և իուռն է բազմութեամբ մարդկան ,  
Եւ յոյժ նուազուսնք ընդ ձեռամբ նորա են ՚ի հլութեան :

Ահա հրնչեցէ ընդ բոլոր երկիրս ասեղ քո հրաման ,  
 Գու՛մար հըսկայից խըմբել յայսմիկ մարտ խեռից նուաճման :  
 Թէ անյազթելի քոյդ զօրեղութիւն մարտկացն է վահան ,  
 Իշխեսցէ արդեօք ճիկ հանել բընաւ որ յորդուց մարդկան :

Երբ կուռ զինու քո զօրք 'ի մի վայրի գայցեն միաբան ,  
 Հող Արարատու բառնալ ըզնոսին իցէ բաւական .

Ըննուաճ քո բան , անմահ քո անուն յազգային մատեան

Ընմեռ դրոշմեսցի , տալ քեզ ըզպաշտօն փառացն անվախճան " :

Ընդ էր տեսանել երկուստեք փըշմամբ յուսոյ և ցասման ,  
 Բաղխել ուժգնակի շարժել անըսպոյժ զանդունդըն բերան .

Օայրոյթ մոլեգին գեր քան ըզլեղոյ դառնութիւն դաժան ,  
 Փըլուզէր 'ի փոր ըզծովակ մաղձուն հեղեղանըման :

Խանձէր խարակէր իբրու 'ի հընոց 'ի բոց բարկութեան .

Գոչէր մըռընչէր յամենի գազանորն կատաղական .

Իբր 'ի հըրաբուխ ճըճըմբոյ ցոլմանց շանթս այրողական

Բարգաբարգ ցայտէր , յաղարտըս վարել ըզսերունդ Հայկեան :

Իսկ յայլ կողմանէ յոյս անտարակոյս շքբոյն յաղթութեան ,  
 Բզանջսըն նորուն ջերմութեամբ լընոյր ոգւոց վըստահման .

Ազդէր հուպ ընդ ճեպ գու՛մարըս խըմբել զօր ստուարական ,

“ Օ ի մարտ կայ , ասէր , ընդ արհամարհոտըս մեր վեհութեան ,

Վաղվաղ հատուցից նըմա ըզհըպարտ բարուց իւր տուգան ,

Այլոց ևս հետտից կարգեալ 'ի յերկրին յիշատակարան .

Չեղեն իմ շընորհք ինչ գերմարդկայինք նըմին 'ի յօճան ,

Բզպատժոցըն չափ առցէ ապըստամբն յանգութ հատուցման " :

Ընդ նա յայսանակ գործ պատրաստութեան պատաղեալ 'ի ջան ,

Մեր Բիւցաղն անխիղճ 'ի շինիցն արարս կայր 'ի պարապման ,

Ի գործըս գետնոց 'ի շէնս աւանի 'ի վարժ մարդկութեան ,

Օր քան զօր յառաջ ընծայեալ զպաշտօն իւր տընտեսական .

Բերրի անդաստանք տային անվըթար զարդեանց տոհմական ,

Երկիրն զանուշակ սընունդս ընծայէր առ ամենեւեան .

Մարդիկ 'ի գորով սիրոյ ըզմայլեալք առանց նենգութեան ,

Կենցաղ վարէին սեռն և արդարակ զազաւնէական :

Արդ մինչ Հայաստան յայս յանգորրութիւն վայելէր բարեաց ,

Դաւք հընարիմաց չարին խորհըրդով անդըր ազմըկեաց .

Հըրապոյր չարացն ըզ՛էլ իբր անսաստ ալիս մըրըրկեաց ,

Ի տունըն Հայկայ զեղուլ ըզհեղեղ յորդ և սաստկագնաց :

Ընթիւ բաղմութիւն ազանց գուպարեալ զօրեղ զինուորաց ,

Հորդան տայ 'ի Հայս՝ զօրէն լեռնաբանդ հողմոց ամպրոպաց .

Հարթել յառակել զհիմունս երկրին՝ ըզշէնս քաղաքաց ,

Նուաճեալ ըզՀայկ իւրովբըն հանդերձ 'ի ներքոյ ձեռաց :

Ըմպ մըրըրկածին ուռուցեալ 'ի շունչ ոգւոյն չարազգաց ,

Թըղպագին գիմէ մըթար ծաւալել յազգըն լուսազգեաց :

Իըզըրի երկիր 'ի ներքոյ ոտից դըժնեայ գազանաց ,

Յահէն տագնապեալ սասանին համակ լերինքըն կորդուաց :

Վազրըն կատաղի ընդ յափըշտակումն իւրոցըն կորեանց ,  
 Երրորդին վերայ յառնէ գիշատել ժանեօքն ատամանց •  
 Խիզախն ըշտապաւ զօրէն սրբարբեալ դըժընդակ փրղաց ,  
 Օրախքըն մանրել ահեղ ըսպառնայ զազդըն դիմակաց •  
 Ընդ զահի հարեալ առաքէ կազմոս զարս երազընթաց ,  
 Ըղդել իւր հաւուեն ըղբարկու թեամբ գալ ահեղ թըշնամեաց •  
 “ Գիտասջի՛ր՝ ասէ , անպարտ ախոյեան մեծըդ դիւցազանց ,  
 Օի դիմեալ գայ Ռէլ արդ ՚ի քօ վերայ բազմութեամբ քաջաց •  
 Ոտից գըրընդիւն սասանեալ ըզվայրս երկրին , յոր էանց ,  
 Ընթիւ բազմութեան շքոխնդըն և զիս յերկիւղ գըղըրդեաց •  
 Փութասջի՛ր խորհիլ թէ զի՞նչ առնիցես գործ յօգտակարաց ,  
 Արով քաջութեանդ հընչեսցի համբաւ ՚ի յազգըս աղգաց ” •  
 Ետոյ և ինքն իսկ առեալ զընտանիս դիմէ փութագնաց ,  
 Ընկանիլ առ Հայկ ՚ի պատըսպարան Հայաստան ազանց •  
 Ի ինիլ աջակից պատուենն ՚ի պայքար ընդդէմ Ներբովթեանց ,  
 Օերծուլ ՚ի վնասուց զինչս և զընտանիս անդր հասարակաց •  
 Փոյթ կալեալ Հայկայ՝ զորդիս ըզթոռունս ՚ի մի հաւաքեաց ,  
 Բնդ նոսին և զայլս ՚ի դիպաղեղանց յազգէ կորովեաց ,  
 Բանակ ահաւոր կազմեալ փոյթ ընդ փոյթ վըստահըս խաղաց ,  
 Տալ բաժակ մահու անմահ կարծելոցըն Բահաղլմայց •  
 Հասանէ փութով յեզըր ծովակին Վանայ անկասկած ,  
 Վըստահ ՚ի խընուլ անդէն ըղբըղխումն ականց ժահրոտեաց •  
 Ուր քաջալերեալ անխիս հաստատէ զանձինըս մարտկաց ,  
 Իւլ ինքն ՚ի նըմին ցուցեալ ուժգնութիւն հոգւոյն գերազանց •  
 “ Ի հանդիպիլ մեր՝ ասէ , Ներբովթայ վսուելոց զօրաց ,  
 Ընդըր դիմեսցուք ուր Ռէլն է ընդ իւր գոռ թիկնապահաց •  
 Հարցնէք ըզԲահաղ ցրուեալ ըղբանակն յերեսըս դաշտոց ,  
 Ընդ մեր քաջութիւն նըշան կանգնեսցէ պերճ յաղթանակաց •  
 Տուցցնէք անդ զաջողս անպարտ զօրութե ամրոստեան մատանց ,  
 Ար անմահ կացցէ ՚ի մատեանս գըրոց ՚ի դարս յաւիտեանց •  
 Իսկ թէ ոչ տացէ երկինք մեղ յայտմիկ առիթ պարծանաց ,  
 Մեռցնէք քաջութեամբ ոչ պաշտեալ Ռեւոյն զանկարգ դըրօշուած •  
 Օայսպիսի առ իւրս խօսեցեալ Հայկայ բան յորդորանաց ,  
 Եառաջ երագէ ունիլ ըզտեղի ՚ի միջոց լերանց •  
 Բանակ հարկանէ ՚ի բարձրաւանդակ , ուր լայնատարած  
 Բնդ աջմէ որոյ բըղխումն էր ջըրոց յըստակ վըտակաց •  
 Վայրի ըղբօսանք զեղուին ՚ի զօրս աշխոյժ հըրակայճ ,  
 Եալրեացս հըրդեհել ըզմայրսըն Ռէլայ թաւուտ անտառաց •  
 Ընդ առնու դադար , անդ ունին հանգիստ պարք հետեակաց ,  
 Ընդ կայժամ առ ժամ գալստեան ըստուար խուժանին Քուշեանց •

Գ Լ Ո Ի Խ Թ .

## ՊԼՏԵՐԸՕՍ ԵՒ ԵԼԴԹՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱՅ

Աստ պերճութիւն փառաց Հայկայ խորոխտագին ,  
 Սերտ ուժգնութիւն տածէ 'ի սիրտ զօրականին .  
 Ամբու թեան բերդ արձակավայր կատար բըլրին ,  
 Օճառք զինուց աղեղն անբեկ գեր զԱքիւլին :  
 Դաշտ լայնադիր առ 'ի խիզախս ասպարիսին ,  
 Ամուբք լերանց պատըսպարան գաղթականին .  
 Անդըր կազմէ բանակ Նախնին մերոյ Ազգին ,  
 Անդ պըսակի մեր Սիապետ յաւար Ռէլին :  
 Ուր սոսկազէն պատրաստութիւն Հայկեան գընդին ,  
 Վառէր զաշխոյժ նահատակաց յոյժ սաստկագին .  
 Ժամ 'ի ժամէ գէտակն 'ի վեր կալեալ վաշտին ,  
 Պընդէին ջիւք հուժկու բազկացն 'ի հանդիսին :  
 Օարթնոյր աղեղն յուժգին լարուած լայնալըճին ,  
 Արբուցանել ըզնեոն յարիւն ախոյեճնին :  
 Օօրքն ամենայն արք զօրութեան վարժ 'ի նետին ,  
 Հաստաբաղուկ մեր հըսկային մընան ձայնին :  
 Արուք նոցա մըխեալ յարեան թոյն Հիդրային ,  
 Արոց հարուած ոչ ապրանոց բերէր բաժին .  
 Իսկ ծովածոց լայնակամարն Հայկայ փըքնին ,  
 Օանպարտելեացըն տայր պարճանս գոռ գիւցազին :  
 Այսու կարգաւ ըսթափք ըզգոյշք ամենեքին ,  
 Հըսկեն գործել վըտակս արեան անդր 'ի գաշտին .  
 Անդ 'ի հեռուստ ըզգալ Ռէլայ նըշմարէին ,  
 Ար անհամար զօրօք ճեպէր յաւեր Հայկին :  
 Խորշակ խանձիչ լի մըթութեամբ չարասիրին ,  
 Տապախառնեալ շնչէր ըզմահ յանմեղ զօրուին .  
 Երազ խիզախ մարդախոշոշ գայլաց խըմբին ,  
 Ձարդ կոտորուած անգութ սպառնայր գառանց հօտին :  
 Օօրք փոթորեալք յամպ լըթագոյն կարկըտածին ,  
 Արտաձայն զաւեր Հայկայ գուշակէին .  
 Քարանց կարկուտ խուռըն տեղեալ անդր 'ի հովտին ,  
 Ոտաքանցել յարձակէին ըզճառս երկրին :  
 Դաշտք և լերինք խըռնեալք յամբոխ մարդկան Քամին ,  
 Անմարդ զերկիր Հայոց առնել գուն գործէին .  
 Խառնածընունդ վիժածք ահուբք Ռաբելոնին ,  
 Յեղճ փութային արգար զարմիցն Հայաստանին :  
 Ի նըշմարել ըզխուռն ընթացօրն փաղանգին ,  
 Օստ 'ի խըմբէն ընտիր մարտիօք ըզՌէլ տեօին .  
 Ար յուսացեալ 'ի յուժգնութիւն իւրոյ բազկին ,  
 Յառաջ խաղայր փոյթ վըճարել ըզմարտն ինքնին :

Ի գըլուխ իւր էր սաղաւարտ կարծր երկաթին :  
 Օ, արդուց փաղփող 'ի գագաթան գեղեցկագին ,  
 Ի լանջըս իւր պընդեալ տախտակն ըզպղընձին ,  
 Եւ 'ի թիկունս նովին վերտեալ ըստ պատշաճին :  
 Օ, րահք 'ի բազուկս անգըծելի փըքնոյ նեաին ,  
 Ի բարձս ոտից աղխաղխք ամուր վառապանին :  
 Կամարապերձ գօտի ընդ մէջ վայելչագին :  
 Յազգեր կապեալ վաղակաւոր սուր զերկոսյրին :  
 Հաստատարուն գեղարդըն մեծ յաջոյ ձեռին ,  
 Բնդ ահեկէն լայնատարած վսհան յուսին :  
 Խըրոխտ քայլիւք ճեպէր զիւրօրն 'ի յարշաւին ,  
 Յու մպ մի ըզհայկն 'ի կուլ մատնել ընդ իւր երկրին :  
 Յերկու կողմունս աղեղնաւորք բօլորէին :  
 Վաղակաւորք իւր առ նըմին խիզոխէին :  
 Լ. յսպէս անահ յառաջ վազէր վիրագըն հին ,  
 Ի սուր մաշել հընձել զօրայս մեր 'ի ցաղին :  
 Օայս գոռ գըռոյթ տեսեալ անյաղթ Հահատակին ,  
 Բնդ փոյթ ըզկարգ պատկանաղիւր տայ բանակին :  
 Յաջ զԼ. րմենակ երկու եղբարքք կարգէ թեին ,  
 Օերկուս յորդւոցն ևս ընդ Աագմեայ 'ի յահեկին :  
 Լմենեքին արք զօրաւորք 'ի մուրց մարտին ,  
 Բազուկք հըզօրք անկըրկնելիք 'ի պայքօրին :  
 Արոց միայն շունչ զօրութեան վիշտպային ,  
 Արպէս խըռիւ ցնդէր ըզխումբն վատօրերին :  
 Լնդ և ինքն իսկ յառաջոյ իւր ախոյենին ,  
 Օայլս 'ի զօրաց 'ի թիկանց իւր եդ 'ի կարգին :  
 Չե իւր դըրից պատշաճ ընտրեալ զեռանկիւնին ,  
 Վ ըստահ յեցեալ Ան գերագօր յերրեակ և մին :  
 Լ. յսպէս և Բէլ իւր հըսկայիւքն ահեղագին ,  
 Ի հանդիպոյ մերոյ զօրաց կայր 'ի բըլբին :  
 Աւստի գըրոհ տուեալ սաստիկ յէջս 'ի դաշտին ,  
 Խաղայր 'ի մարտ և յաղարտումն Հայկեան գընդին :  
 Լնդ էր տեսիլ նոր դիպուածոյ տագնապ վըշտին ,  
 Օոր մախանաց դուստըր գործէր առ երկոսին :  
 Լնդ արհաւիրք ահռականացն անհընարին ,  
 Օրահմանս երկրին 'ի սարսափումն գըղըրդէին :  
 Օ ի մինչ իշխանըն ցերեկեայ արշալուսին  
 Պայծառազգետտ սըփուէր զիւր ձիրս 'ի ծործորին ,  
 Օ կեանսըն բուսոց տածել յախտից ցըրտահարին  
 Նոր կանդաղեալ յառոյգ հասակ զուարճագին ,  
 Աստիք կենաց բազմածընեալք առ ծովակին՝  
 Բոտ կատաղեաց խուռն 'ի դաշտի անդր եռային :  
 Երժգոյն դիմօք այլանդակեալք ճանկ 'ի ձեռին ,  
 Թե ապարեալք 'ի յօրս կենաց բանականին :

Յերից դիմաց գեղոյր տագնասն 'ի լեռնոտին :  
 Ի զուր ըզզարմն ապականել զ՛քամային :  
 Բէլ մըռընչէր ահեղագոչ ըստ առիւծին ,  
 Հայկ դիմագրաւ բոց բորբոքէր յանտառ նորին :  
 Իսկ նախաչար բոցաշընչող վիշապն այն հին  
 Օրծումբ մահուան տեղայր հըրով դըժոխային :  
 Տօն ցընծութեան հընչէր յանդուենդըն խաւարին ,  
 Օ ի ազգ մարդկան զայնըր հաճոյս կատարէին :  
 Խրախոյս դիւաց վարէր ըզ՛էլ անընդդիմակ ,  
 Ճեպել առնուլ յաջող մարտիւ ըզյաղթանակ :  
 Մերոյն Հայկայ ընդ իւր զօրացն առ հասարակ  
 Գըռոյթ արկեալ յառաջ մատչի բարձրադադակ :  
 Գունդք երկոքին բաղխեալք յիրեարս ընդ հակառակ ,  
 Յահեղ ձայնից գոռան լերինք ուժգնահընչակ :  
 Ի գոփմանէ ոտից թընդայ գետնոյն յատակ ,  
 Շաչմունք նետից տան լըսելեաց խըրու թեան փակ :  
 Շըռինդն ահեղ որպէս 'ի յամպ հողմայուղակ ,  
 Օ արհուրելի գործէ ճայթմունս հըրակայծակ :  
 Տեղատարափ նետից ընդ օդն յորդավըտակ ,  
 Օ արեան առուս բըղխեալ յորդէ գետահետակ :  
 Սահունք ճախրեն խաղան 'ի զօրսըն ձիարձակ ,  
 Ի տէգս 'ի նետս աշտանակեալ իբր աւաղակ :  
 Գընդէ 'ի գունդ արշաւասոյր երագ երագ ,  
 Կենաց բաղմաց վըթար բերին յոյժ անձարակ :  
 Ընդ տապաստից թաւալգըրոր անկեալ դիակ ,  
 Ի ճապաղիս արեան լեղայ մերկ խայտառակ :  
 Ընդ մըռընչիւն վիրաւորաց յոգւոցըն քակ ,  
 Ողորմաձայն հընչէ ընդ չոր մըրկեալ հագագ :  
 Յերկոց կողմանց տապալ զօրացըն գումարտակ ,  
 Սայրաւորաց բերեն հանդէպ ինչ զօրինակ :  
 Ընկումն անշարժ զգայուն ծառոց պըրակ պըրակ ,  
 Սոյթ 'ի փայտից կազմէ խաղմին 'ի հրապարակ :  
 Հայկեան զօրաց վստահասիրտ մարտ յաջողակ ,  
 Կաղնեաց մարդկան յերկիր գառէր բարձր ըզհասակ :  
 Օ ի Նեբրովթայն զօրք տապալեալ դասակ դասակ ,  
 Լ ընդւին անդ գերես գետնոյն յանշունչ դըրակ :  
 Յանակնկալ յայնըմ դիպուած նորատեսակ ,  
 Լ քքանի Բէլ հարեալ ընդ քիրտըն սառնարակ :  
 Յետըս կասիլ գայ 'ի խորհուրդ առ նոյն նուագ ,  
 Դիմեալ ուստի էջն 'ի յանքոյթ բարձրաւանդակ :  
 Կալ մընալ անդ յապահովի անվըղենակ ,  
 Մինչև զօրաց իւր կարաւան գայցէ համակ :  
 Ուր վերստին կարգ յարդարեալ ասպարափակ ,  
 Յարձակեսցի վանել խապառ զիւրըն ներհակ :

Այլ մեր դիւցազն իմացեալ զայն ճեպէ յարձակ ,  
 Յառաջ վարեալ զինքըն թափով մերձ 'ի բըլրակ :  
 Օրէն գողցես սէգ առիւծու յորսոյն վրիպակ ,  
 Ահեղ գողմամբ սարսէ ըզվայրըն բովանդակ :  
 Բնդ լայնալիճ մըտեալ յաղեղն այրն ուժընդակ ,  
 Օերեքթեեանն հարկանէ նետ 'ի նըպատակ .  
 Ար ընդ կըրծոց թափ իմն անցեալ ընդ պահպանակ ,  
 Ի յողըն կոյս լայնաբերան բանայ դըռնակ :  
 Շող արևուն թափանց ընդ վէրսըն լայնածակ ,  
 Տեսչող անուան բերէ տեղւոյն զըմբոն վիճակ .  
 Եւ ինքըն Բէլ յորսայս անկեալ չարակատակ ,  
 Բզհպարտ իւր փըչէ զոգին դիւաբընակ :  
 Ըստ կործանի Աեառըն մըսոյ վաթսընկանգնեան :  
 Ըստ ընկըղմի բոլոր պարծանք իւր ընդունայն .  
 Ըստ մահանայ անմահութեան սուտ ուրուական .  
 Ըստ զըրաւի թշուառ հաւակն անկրօնութեան :  
 Ըրդ՝ տես ինձ դու զանշուք վիճակն առն անպիտան ,  
 Արոյ դըրինդ ձայնըս գուժեաց Ղսորեստան .  
 Աջ հանդարտէր երկիր նըմին կենդանութեան ,  
 Բայց յոչ կամաց բառնայ ըզնոյն անդր 'ի մահուան :  
 Դին անհեթեթ զինավառեալ 'ի յորս մարդկան ,  
 Կործան դընի ահա զօրացն ակն յանդիման .  
 Երկայն հասակ իւր բարձրաբերձ զօրէն բըրդան ,  
 Ամիսի կըծկի 'ի կերս օձից զեռնոց մըրջման .  
 Գըլուխըն պերճ պըսակազարդ արքայանման ,  
 Ի փոշոտիս թաղէ ըզփառս իւր գեղազան .  
 Դէմքըն առոյգ , ուսքըն լայնեղ պարթեական ,  
 Այժմիկ ճանճից և գուեխացն է զըօսարան .  
 Ի կզուեն անսանձ միշտ 'ի բարբառ վեհաղնական  
 Ի ուռ և անշարժ 'ի դուրս ձըգեալ կայ ընդ բերան :  
 Արուներ օտից երագաքայլք 'ի հեղս արեան ,  
 Կոճղ այրելի հըրոյն մընան յանչէջ գեհեան .  
 Աւր է քո փառք աստուածային , յէ՛ զըրաջան .  
 Օխարդ գերի անկար այժմիկ թըշուառութեան :  
 Աւր բարձրագահ քո աստիճանն Արմըղդական ,  
 Աւր քո պաշտօն , զոր նուիրէր անգէտ խուժան .  
 Այս հատուցումն եղև Բէլայ յանդըգնութեան ,  
 Այս վարձ գործոց նորա չափեալ վայելչական .  
 Ի կատարած չուառ անկցին ամենեքեան ,  
 Ար քան զարժան զինքեանս 'ի փառս վերամբառնան :  
 Նեբրովթայ տոյժ այս չափեցաւ գործոյն փոխան :  
 Իսկ իւր զօրաց զինչ ինչ պատահք վատանըջան .  
 Յըրիւ փախուստ ընդ սար և ձոր թափառական ,  
 Արտատըրոփ լըքումըն չար 'ի սիրտ յիբան :

Առիւծ մըտեալ նապաստակաց յերկշտո հօրան ,  
 Տարացըրեաց յերեսս երկրի զամենեսեան .  
 Յետեղ մարտին սուրբ և սլաքքըն բըթեցան ,  
 Առ 'ի խուսափ սըրունք թեթիք փոխան տըւան :  
 Ահեղաստատ էր յարձակումն անդ 'ի սկըզբան .  
 Բայց յոյժ գըլխանկ վատթարութիւն 'ի փոխըստեան :  
 Օղակըն ըզսուր 'ի բաց լըքին իբր անպիտան ,  
 Օանձանցըն զերծ ածեալ միայն 'ի խորհըրդեան :  
 Կամք էր նոցա զազատութիւն գերել Հայկեան ,  
 Օաստուած իւրեանց գերի ետուն անշուք մահուան .  
 Երկիր Հայոց՝ ում կայր Բէլայ գող ճեմարան ,  
 Յինքն ընդ հողեաց ըզնա 'ի մութ հողապատեան :  
 Արդ՝ վըճարեալ մարտին ըզգործ Հայկ Թորգումեան ,  
 Բառնայ զաւարն անկեալ զօրացն ընդ ամենայն .  
 Լընու փարթամ հանդերձանօքըն Բարեւեան ,  
 Օրհներգ ձայնիւ գովաբանէ զանմահ Արքայն :  
 Օտեղի մարտին ուր յաղթութիւնքըս գործեցան ,  
 Հայք անուանէ ըստ զիպուածայն յարմար բերման .  
 Իբրու թէ Հայկ շահատակեալ 'ի նոյն տահման ,  
 Ազգին իւրում պըսակ եբեր յաղթողական :  
 Իսկ ուր անկաւ Քուշեան զածած գոռող հըսկայն ,  
 Գերեզմանք եզ նըմա կոչու մըն յոգնական .  
 Իբրու անկմամբ Բէլայ տապաստ 'ի բըլըին յայն ,  
 Յոյժ բաղմագոյնք ընդ նըմա յայն հող թաղեցան :  
 Իւր առաջի բերել տայ Հայկ ըզԲէլայն գին .  
 Առ որ բարբառ արկեալ խօսի զորս հետեւին .  
 “Իու ո՛վ սերունդ հողաստեղծից մարդ երկրածին ,  
 Հիմ չըկացեր 'ի քո սահման ըստ օրինին :  
 Տուեալ էր քեզ յառատ Հօրէն բընակ երկրին ,  
 Վայր ընդարձակ կեալ մարդկօրէն երկար 'ի նմին ,  
 Այ բաւ էր քեզ այնքան ամբօխ մարդկան ցեղին ,  
 Յորոց վերայ աստուածաբար էր բան քոյին :  
 Առ իմ զանձամբ զազահութեան արկեր զոգին ,  
 Ամենակալ ոմըն լինել աստ 'ի ստորին .  
 Այ գիտէիր թէ կեանք մարդոյ աւուրբք չափին ,  
 Եւ այն վըշտօք և տրտմութեամբ լի ցաւագին :  
 Գոհ լինել քեզ 'ի քում պարտ էր յայն վիճակին ,  
 Եւ ո՛չ անդէպ ըղձիւ բերիլ յիրս օտարին .  
 Հերիք էր քեզ լայնագիր դաշտ Բարեւունին ,  
 Եւ բաւական քեզ հըպատակ՝ որք անդ բնակին :  
 Օընունդ էիր առըն Քուշայ ծառայածին ,  
 Արպէս առեր յանդուգն ըզփառսն՝ աստուածային :  
 Այ յիշեցեր զանցըս վերնոց անդր 'ի յերկին ,  
 Չառեր 'ի միտ զՎգամն ըզմեր հայր առաջին :



Ահա այսպէս որք գեր զարժանն 'ի վեր ձրկտին ,  
 Ահասարակ աւուրբք յաստի կենաց կարճին .  
 Եւ որք անյագ յիրս ընկերին տենչմամբ բերին ,  
 Յիւրեանցայոց զըրկեալ մերկեալ խայտառակին " :  
 Բան զայսպիսի անդ խօսեցեալ ցանշունչ մարմին , )  
 Ար փոշոտեալ դընէր անշարժ անդր 'ի գետին ,  
 Ապա լուանալ տայ հրրաման ըստ պատշաճին ,  
 ( ) ծմամբ դեղոյ պատել 'ի տես ընդ երկարին .  
 Անդ իւղ ծորէ սարաւանդին Անկղոյ ըստին  
 Ի սպաս օձման մարմնոյ Բէլոյ Քուշականին .  
 Եւ տունկք երկրի հիւթ տան 'ի պիրկըս պատանին ,  
 Արովք պահիւր առ 'ի նեխոյ աղցականին :  
 Ապա տանիլ ասէ 'ի Հարք յիւր աւանին ,  
 Եւ քաջութեան նշան թաղել բարձր 'ի տեղին .  
 Աւր կայ ցայսօր 'ի տես բազմոց որք հանդիպին ,  
 Հըսկայագիր կերտեալ զոտամբ Վըրգուռ լերին :  
 Տայ յաւարէն և մասըն իւր կադմեայ թոռին ,  
 Ի յիւրն ասէ գընալ անդրէն յանձնեալ տեղին :  
 Կարգեալ և արս հըզօրս նըպաստ տանիլ նըմին ,  
 Լուրջ խորհրդով հոգալ ըզպէտս իւր կալուածին :  
 Եւ ինքն իւրովք դառնայ փառօք յիւր տուն նախնին ,  
 Բսկիզըն առնել իւր տերութեան աշեղագին :  
 Ազգ և ազինք ինքնայօժար փոյթ առ նըմին ,  
 Հնազանդութեան ոգւով առ Հայկ գան խըմբովին :  
 Յօրէ անտի պայծառ փայլէ պարծանք ազգին ,  
 Երբ միապետ հանդիսան յ մեր այս նախնին .  
 Յաջողք բարեաց 'ի Հայաստան յաճախեցին ,  
 Չըքնաղ ցուցեալ համայն ազանց այլ աշխարհին :  
 Այս Հայկ շըբեղ փառազնութեամբ բողոքովին ,  
 Անզուգական ոմըն ցուցաւ յարեաց գընդին .  
 Պերճ գանձարան ձըրից ներքին և արտաքին ,  
 Մէղ պարգևեալ յառատ շնորհացն աստուածային :  
 Ի սուրբ կըրօնն արծարծ վառեալ զամբիծ հագին ,  
 Յաստուածապաշտ լոյսն արեէր հանգէտ Աոյին :  
 Արժանաւոր արդարև պետ տեղւոյն ազին ,  
 Յիւնն անհատ աղբիւր կարգեալ պայծառ տոհմին :



Գ Լ Ո Ւ Խ Ժ .

## ՄԻԼՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԱՇԽՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԿԱՅ

Ահա պանծալի պըսակ պետական  
 Ի գըրուխ երկիրն առնու Հայաստան .  
 Օ, ի դարձըն Հայկայ շքով յաղթութեան ,  
 Հաստէ տէրութիւն միապետական :  
 Նահանգըն Հարքայ բընակ նախնական ,  
 Ահամբբ Եփրատայ զուարճ դարաստան .  
 Ուր աստուածատունկ գըրախտն Եդեմեան ,  
 Վարսագեղ փայլէր յանմահ ծառաստան :  
 Երկնք իւր իբրու թագ արքայական ,  
 Անազարդ պըճնեալ բերովք բազմազան .  
 Սըշտահոս աղբերց ջուրքըն քաղցրահամ ,  
 Գետահետ առուօք ուղխեալ յարածամ :  
 Որովք յարգասիս բարեաց բեղմնական ,  
 Ճոխ փարթամանայ այգի 'ւ անդաստան .  
 Պարգևք Իեմետրի յաննենգ տուչութեան ,  
 Չըքնաղ բօլորեն ըզտարւոյն շըջան :  
 Անդ պըտուղք համեղք յախորժ ճաշակման ,  
 Բզկենաց պըտղոյն ազդեն 'ի բերան .  
 Անդ երկնատեղաց գաղպէին մաննայն ,  
 Ի տերևս տընկոց ցողեալ քաղցրանան :  
 Անդ կոկոռ երփնեալ ծալոյին շուշան ,  
 Անուշակ փայլէ 'ի գեղ աննըման .  
 Անդ երփնին մարմանդք 'ի փողփող ծաղկան ,  
 Անդ դաշտք բուսաբերք զուարճ տեսարան .  
 Արդ զայս բարգաւաճ աշխարհին սահման  
 Իւր ընտրեաց բընակ Հայկ դիւցազնական .  
 Ուր միապետեալ հոգւով բարութեան ,  
 Ելից բազմութեամբ հրահանգեալ մարդկան :  
 Ո՞ր կողմանք երկրի , ո՞ր վայրաց կայան .  
 Ի բաղդատ դայցէ ընդ Տարուբերան .  
 Թէ անդ ըզդըրախտ տեղին փափկութեան  
 Ընտրեաց ղետեղել՝ կամքն արարչական ,  
 Ո՞ արդեօք յերկրաց գոլ հանգիտական  
 Իշխեսցէ պարծիլ յիւրում ճոխութեան :  
 Կամ ո՞ւր այնպիսի փառաց գործարան ,  
 Քան ուր հողն էառ ղհոգին բանական .  
 Յիս նոր գայ խորհուրդ ինչ հաւանական ,  
 Եոր աստ որոշուած Տոհմին ընտրութեան :  
 Յըրօնք այլ ցեղից յայլ և այլ սահման ,  
 Ետուն մեզ բընակ զայս վայր սկզբնական :

Ըստ նախկին կայան բոլոր մարդկութեան ,  
 Արք Օայրին մերոյ կային 'ի յերան .  
 Ըստ յատուկ դարաստ տունն անմահութեան ,  
 Աւր մեր Նախահայր կարգեալ էր իշխան :  
 Ըստ և Հայրն երկրորդ՝ յետ 'ի ջուրց զերծման ,  
 Գրեկէ իւր բընակ յոյժ անդորրական .  
 Ըստ նոր ըստեղնին ճիւղք կենդանական ,  
 Օրորարս լընուլ տիեզերական :  
 Յընդ այլ կողմն երկրի 'ի օրփռիլ մարդկան ,  
 Թէև Հայկ գընաց ընդ այնս միաբան ,  
 Ըյլ այնք զերթ ագուաւ յետըս ոչ դարձան ,  
 Ի գէշըս մուլեալք յիզձս անասնական :  
 Իսկ մեր Դիւցազին տունըն հայրական  
 Ըստ անդրէն ըզգարձ իմն աղաւնեկան .  
 Աւր գըրգեալ 'ի ցօղս երկրին բարութեան ,  
 Պերձ հանդիսացաւ յազնիւ սերընդեան ,  
 Կուռ ամրակերտեալ 'ի նոր կայարան  
 Քաղաք Հայկաշէն քաջոցն ապաստան .  
 Պարիսպ որձաքար պատնէշ անասան  
 Կանգնեալ ընդարձակ շուրջ պատեալ զաւան :  
 Դիրք թաղից յարմարք և տունք վիմարդեան ,  
 Բարեչափ կերտեալք ըստ ժամուն բերման .  
 Փողոցք ուղղադիրք պատշաճ լայնական ,  
 Յերթևեկս ազգին զեղիչք հանգըստեան :  
 Նեկտար ակնաբուղիս վըճիտ ուղիսացան ,  
 Լըցուցիչ կարեաց պիտոյից համայն .  
 Յորում բաղմամբօխք պայծառ ծընընդեան  
 Ի զարդ քաղաքին առաքինանան :  
 Չէր անգրր նախանձ ծընունդ դիւական .  
 Աչ կագ ոչ կըռիւ դորձ գազանական .  
 Հայկ ըզգօնաւոր պետ խորհրդական ,  
 Վարէր հանձարսվ խոր յանդորրութեան ,  
 Պայազատ որդիքն հայրենի վարման  
 Համագործ 'ի նոյն դային 'ի ճըգան .  
 Համօրէն մարդիկ համբոյր և հաւան  
 Յոյց էին կենացն անմեղանչական :  
 Օ ի վայելչաբեր կարգ քաղաքական  
 Եւ որ մարդկութեան էր ինչ պիտեան ,  
 Հաստատէր յերկրին Հայկըն խոհական ,  
 Բարեգործ առնել և հաճոյական :  
 Աւղղութիւն հոգւոյ ուղղութիւն 'ի բան :  
 Ընխոնջ աշխատտնք յօգտաւէտ օձան .  
 Տարագիր էր անդ մեղկանք ծուլութեան ,  
 Բընաւքն 'ի վաստակս բերէին ըզջան :

Ընդ էր տեսանել զերկիրն ամենայն  
 Քաջիկ մըշակեալ 'ի բեղունս արդեան .  
 Ընդ և բազմալուծ խորափոր գութան  
 Լայն ձորապատառ զհողոյն սերմնարան :

Ուր բեղմնաւորեալ հատիկ մի միայն ,  
 Բնդ միոյ հարիւր բերէր տոհմական .  
 Լի ըշտեմարանք զեղեալ անխափան ,  
 Ըռատըս տային ըզկենաց դարման :

Պարտեզք և այգիք յաւէտ ուռձական  
 Պրտղաբեր ծառովք անդ փարթամազան .  
 Բոյսք և դալարիք զուարճք յոռոգման  
 Բոլորից կարգեալք պերճ ըզբօսարան :

Համայնից բերումն յայս հանդէս բարեաց  
 Հըռչակ ըզՀայկեան հարկանէր կարգաց .  
 Ուստի ինքնակամ յամենայն կողմանց ,  
 Գային վայելել ըզձիրսըն շնորհաց :

Օրէնքս կանգէր ընտիր զինուորաց  
 Յաղեղն և 'ի սուր 'ի տէգ նիզակաց .  
 Որով 'ի մըրցմունս ընդ գոռ թըշնամեաց ,  
 Սարսափումն ամէր իւր ընդդիմակաց :

Վարժ վայելչական բոլոր հասակաց ,  
 Ինքնին ընձեռէր լայնութեամբ մըտաց .  
 Եւ քան ըզբանից իւրոց ասացուած ,  
 Գործքըն յարացոյց էին անկասկած :

Ուր է Հերակլէս գըլուխ Տիտանեանց  
 Գործող քարողեալ հանդիսից բազմաց .  
 Կամ ուր Աքիւլլէս մարտիկըն Յունաց  
 Չքրովն Մասիգսեան անխոց համարած :

Օ ի հանդէսք Հայկայ 'ի մուրց քաջազանց  
 Ի 'ի տընտեսութիւն բարեգոյն կարգաց ,  
 Վերադաս ըզնոյն ցուցանեն ազգաց ,  
 Իբր ըստոյգ ժառանգ յոգունց պըսակաց :

Ըհա իմ Գիւցաղն պանծալի հոգին  
 Մի միայն հըսկայ անդոյգ 'ի զօրուին .  
 Բստ իւր մեծամեծ գործոցն և կարգին ,  
 Յարգէ ըզպիտանս թէև նուաստին :

“ Կարգ աստուածադիր է գործելն երկրին .  
 Մի նուաստ ցուցցի քան զպատերազմին .  
 Օ ի նա 'ի նըպաստ ասէր մարդկային  
 Ընչայեղց գործէ վաստակօք անգին :

Բերք իւր են առատ տուրք մօր բոլորին ,  
 Որ տայ փոխարէն ըզբազումն ընդ մին .  
 Յանխընայ վաստակ զինքեամբ փարողին ,  
 Օ իւրըն հազարդէ յոյժ յաճախագին :

Իսկ ճրգանք մարտի բերք ագահ սրբտին  
 Տանջեն չարաչար շորթել զօտարին •  
 Յընկերին արիւն բերիլ տայ ուժգին ,  
 Օրէն վարազու դաժան դազանին :  
 Ի գործըս կրուուոյ ցոյցըն վայելին  
 Լյուստ է պատահ զարմ օտարածին •  
 Տեսակի մարդկան ժանտախտ մահակին  
 Օրր կայէն եբեր յաւերս աշխարհին ” :  
 Ի հանդէս մարտի Հայկ հայր ազգային ,  
 Թէպէտև անզոյգ կենախուզ Ռէլին ,  
 Լյլ է բարիօքս իւրում կալուածին ,  
 Օարհեստըն խաղաղ փայլէր Ղեմետրին :  
 Բոլոր անդաստանք յակօս արօրին  
 Ոսկեփունջ հասկօք ղեղեալք 'ի դաշտին •  
 Պրտղաբեր տընկոց գեղ զորմանագին  
 Պայծառ նըկարէր զգրախտըն յագին :  
 Լնդեայք և սջխարք 'ի մարգարօտին  
 Ըռոյգ կայթէին 'ի բառաչ խընդին •  
 Գառանցըն խայտալ առ մարցն 'ի ըստին  
 Բզմայլ անմեղուկ ցընդէր ընդ կաթին :  
 Հովուացըն սըրինգ յօգ լիալուսին  
 Բզմեղր մեղեգեաց ղեղոյր 'ի յունկին •  
 Սուլումըն հեզիկ անդ գառնարածին  
 Տըպէր 'ի շըրթունս զանոյշըն տաւղին :  
 Ար ինչ 'ի կենաց հանգիստըն գային ,  
 Չէին ինչ պակաս 'ի Հայկայ յարկին •  
 Իսկ սր ղեղխանք էր արտաքոյ կարգին ,  
 Չունէին տեղի յայն պարկեշտ շինին :  
 Լսկղեպեայցըն պէտք առ դարման ախտին ,  
 Սըտանել շիշխէր 'ի տուն Թորգոմին •  
 Տագնապի և արգ յաղէտս իւր սըրտին ,  
 Յորդուցըն Հայկայ մերժեալ անդըստին :  
 Լեւորդ զարդուց նըշմար բընաւին  
 Տարագիր դընէր յայն մարդէ երկրին •  
 Չափաւորութիւն Ղեմեսեան կըշուին ,  
 Հաստատուն պահիւր 'ի Հարքայ տեղին :  
 Իսկ 'ի վարժ մանկուոյն ծաղկանցն ազգային  
 Խընամք անհրաժեշտ 'ի Հայկ փայլէին •  
 Օրմանս ըստ մասին պաշտակեալ ինքնին ,  
 Օայլս 'ի ձեռն այլոց կըրթէր 'ի բարին :  
 “ Սիրտ ամբիժ՝ ասէր , ամբարել յոգին •  
 Օրւտ ճըշմարտութիւն 'ի զարդըս լեզուին :  
 Համեմատ խոկման խորհրդոց ներքին  
 Յոյանիչ կըցորդեալ ըզձայնն արտաքին : ”

Ո՛չ թիւրեւ ըզկամս 'ի թարմ հասակին •  
 Ո՛չ մեղկըս վարիւ ընդ իւր համազգին •  
 Սէր սեպհականել անկեղծ զՍփրեստին ,  
 Լնքակ բարեկամ 'ի վրտանգ վերջին :  
 Ի սէր հայրենեաց աշխոյժ ջերմագին  
 Վըստահ խիղախումն 'ի պիտոյս հարկին •  
 Լկնածս 'ի ծընօղս յառիթս արեւին ,  
 Լնշէջ 'ի հոգւոյն վառել ճրրագին :  
 Չափով սէր պահել և առ թըշնամին •  
 Հաշտ հընարաւոր ընդ ամենեւին •  
 Մի՛ գազանանալ յառսըն վըրիժին ,  
 Մի՛ արտօքըս գալ մարդկան օրինին :  
 Իսկ 'ի խաղ պարկեշտ յանպատկառելին  
 Դիւրաշարժ կըրթել զանդամօրն մարմնին ,  
 Պարապ անձանձիր ըստանալ յանձին ,  
 Կազդուրեալ զոգիս 'ի ջիւս յերակին :  
 Լյլ քան զամենայն յաւէտ խընդրելին ,  
 Լնշուշտ ըզկըրօնսն ունիլ զերկնային •  
 Յաստուածուպաշտութեան հայրենի ուխտին ,  
 Լնշարժ բարեքել ըզհաճոյս Վէհին :  
 Գործել ըզբարիս ո՛չ 'ի փառս անձին ,  
 Լյլ ում ամենայն ըզկեանսըն պարտին :  
 Յողջակէզ խոյոց և զուարակին  
 Պաշտել զԱրարիչն յարգար վաստակին :  
 Եւ այլ ևս որ ինչ պաշտօնք կըրօնին  
 Լիուլի պաշտել յեռանդ սեռնագին " :  
 Լյս գործ էր Հայկայ այս իւր հաճելին ,  
 Օյսոսիկ հաստեաց յիւր գերդաստանին :  
 Յետնեցան արդեօք որդիք իւր առ այն  
 Յանձին չըբերեալ զաւանդն հայրական •  
 Յոր իւրեանց նախնիք 'ի նոյն երկրաստան  
 Հոգւոյն հաճութեամբ համակ զօրացան •  
 Մի՛ գայցէ ընդ միտս , մի՛ 'ի խորհըրդեան  
 Կարծեացն այնպիսի դոյզն ինչ կերպարան •  
 Օ՛ի յայն հըրահանգ իւրքն ամենեքեան  
 Լըդեամբք և բանիւք բարեզարդ գըտան :  
 Լրին Լրմենակ հայրատիպ իշխան  
 Եախաբուղև վըտակ Դիւցազնին արեան :  
 Լռ հարբն համագործ որդին ժրոջան ,  
 Շէնքս իւրակերտ կալաւ կայարան •  
 Լրեւելք հիւսսոյ տունն Լրարագեան  
 Ի դաշտ լեռնապատ վայրին բեղմնական ,  
 Ուր գետ կարկաջունն է յաղթահոսան  
 Հրաւիրէր ըզնա յիւր բընակարան :

Անդ 'ի հիւսիսոյ բարեգիր կողման  
 Առ ըստորոտով լերին բարձրութեան  
 Կերտեալ ըզբաղաք շէն վայելչական ,  
 Սարդկութեամբ զերկիր լընոյր զամենայն :  
 Անդ ջրովէժ հոսմանց աղբերցն աղուական  
 Տղւր արծաթափայլ սառն և բարեհամ .  
 Անդ վըտակք առուաց քաղցր և հեշտական ,  
 Յոռոգումն երկրի ծաւալածածան :  
 Յիւրատունին անտառ խուռըն ծառաստան  
 Երփնաղարդ տեսիլ զուարճ ըզբօսման ,  
 Սօսեաց սարսափիւն սրբինգ սրխրական  
 Դըստերաց երգոց նուազ ոսկեձայն :  
 Երկնալիր սստոց զարդ կանաչերփնեան  
 Բզմայլումն անոյշ որդւոցն էր մարդկան .  
 Սարմանդն առ արմունս քընքուշ նըստարան  
 Վարդահոտ ըզբոյր բերէր 'ի ուրնգան :  
 Իայլայլիկ թըռչնոցն անդ երգ ճըռուական  
 Չայնից համբարուացն էր յաղթողական .  
 Բարեխառն օդոց շնչիւն մեղմական  
 Կենաց կաղդուրիչ 'ի կարչնեղութեան .  
 Յայս տեղի զուարճ Արմենակ Հայկեան  
 Հաստեր բնակութիւն 'ի կեանս իւր համայն .  
 Ուր 'ի հայրենի վարժսըն շայեկան ,  
 Ի շուք զօրանայր փառացն յաւերժեան :  
 Ի Երինն Արագած եդ ըզկոչ անուան ,  
 Իսկ Արագածոտն կալուածոյ իւրեան .  
 Օրէնս օգտակարս հասարակութեան  
 Կարգեաց , հաստատուն պահել անխափան :  
 Արանց մըտերիմ լինել անբաժան .  
 Կանանց համեստիկ կալ 'ի հըլութեան .  
 Ի սընունդ մանկանց սերտ և միական  
 Բերել ըզխնամս 'ի վարժ 'ի դարման .  
 Յարդել ըզվաստակ զաղբիւր լիութեան .  
 Ի եբըս վիժակել ըզծին ծուլութեան .  
 Յաջողակ ըզկիրթս ունիլ 'ի մըրցման  
 Յաղեղն 'ի նիզակ 'ի սուր 'ի նըրան :  
 Մի առանց հարկի մարտ անբանական  
 Յագահ բարոյից մըղել ընդ խուժան .  
 Մի պատճառըս տալ զապըստամբութեան ,  
 Որ զօրեղ վառի 'ի պետ խեռական :  
 Լու մի լըքանել զառիթըն դիպան ,  
 Յորժամ յոյս կայցէ արդեանց շահեկան .  
 Օանդադար ճըգունս յողջամիտ վարման  
 Պահել 'ի յանձինս առ ամենեսեան :

Մերս Արմենակայ այս իսկ էր միշտ ջան ,  
 Յայսմիկ պարապէր նա անբըթթական .  
 Արով յաջողուած բաղմարգաս բերման ,  
 Հարուստ ամենիցն էր հաղորդական :  
 Ի սոյն ինձ առցես և զգիւցազնածին  
 Մանաւազ հրսկայ ըղձայկայ որդին .  
 Ի շէնս աւանաց 'ի բարիս ազգին  
 Պերճ շահատակեալ 'ի Հարբ նահանգին :  
 Մանաւազակերտ շէն առ Ափրատին ,  
 Օրինօք կարգէր յոյժ վայելչագին .  
 Ճոխագոյն բերոց մայր առատածին ,  
 Բաղմամբոխ զեղուն ըստ սուրբ ուռկանին :  
 Դարման պիտեան 'ի կենցաղս ազին ,  
 Բեղմնալից գանձեալ 'ի սրահեստ հողին .  
 Ճոխ և բարգաւաճ դուստր Հայկաշինին  
 Բերող հրսկայից փայլէր պանծագին :  
 Արբ հաստաղեղունք անյաղթք 'ի մարտին  
 Բզբնակսն երկրին անդորր առնէին .  
 Օրնունդք բաջարիք հարազատ տոհմին  
 Հետ ընդ հետ զազգին շուք յաճախէին :  
 Բզմէ մոռացայց խոռ զազատածին  
 Ի մեր նախահարց յարգել 'ի կարգին .  
 Ար ըստ բարեզգեաց բուսոց իւրոյին  
 Պայծառ արեւէր անդ յիւր հայրենին :  
 Սոյն սա դէմ եդեալ յայլ կողմն աշխարհին ,  
 Ո՛չ 'ի հայրենւոյն յաւէտ 'ի հեռին ,  
 Չեռակերտ նոր շէն կանգնէր 'ի վայրին ,  
 Սերել 'ի յարիւն հարազատ տոհմին :  
 Լը 'ի դէմսն իւր տեքք ահեղագին ,  
 Փառք փայելչութեան ըղգեցեալ յանձին .  
 Կայտառ իւր արիւն յաշխոյժ հասակին ,  
 Ըղհանգէտն որդւոց բերէր Տիտանին .  
 Արդեակ արժանի գիւցազանց Մեծին  
 Օրոյ կերպարան կրէր յերեսին .  
 Յարենէն որոյ մարտիկք ահագին ,  
 Հուժկու կանգնեցան իւր դաստակերտին :  
 Արբ արհորարկուք թըշնամեաց գընդին ,  
 Ի սուր 'ի գեղարդն անզոյք 'ի խազմին :  
 Հրգօր թիկնապահք կարգեալք արքային ,  
 Բերդ իմն անառիկ էին 'ի խըմբին :  
 Նախարարութիւն սոցուն պանծագին  
 Հաստեցաւ յետոյ առ Վաղարշակին .  
 Արբ խորխոռունի անուամբ ճոխային ,  
 Բզնախնեացն անուն պատուեալ 'ի զարմին



Իսկ Ռազ սեպուհ թուն 'ի Հայկեան գումար  
 Ի շինից հանդէս շէն և կամակար ,  
 Առ ծովակն աղի վայր արդիւնարար ,  
 Իւրովքըն հանդերձ առնու ըզդարար •  
 Աճեալ 'ի սերունդ յորդ լիապատար ,  
 'Նոր իշխանութիւն հաստէր տիրաբար •  
 Ուր սիրտ ուժգնութեան միշտ բազմահանձար ,  
 Օգոյր 'ի ժառանգս իւր ծաւալածայր •  
 Չէր անդ մեղկութիւն չէր կարիք վատթար  
 Վարմանն եղանակ յոյժ բարեյարդար •  
 Ուստի Ռզնունի տոհմ իշխանափառ ,  
 Յազգին զօրանայր 'ի զօրեղ վրտառ •  
 'Նոյն և այլ որդիք Հայկոյ միայար  
 Ի գործ հայրենի վարժ և սիրահար ,  
 Յոգնազան բարեաց կանգնեցան պատճառ ,  
 Լըցին զՀայաստան 'ի մարտկաց կաճառ •  
 Աստ էր խընդութիւն սրտի անբսպառ •  
 Աստ Հայկ խընդամիտ յանձըն իւր իսպառ •  
 Ուր հովանաւոր բազմաճիւղն այն ծառ ,  
 Չըգէր շառաւիղս 'ի տոհմըս պայծառ •  
 Հայկ գոռ միապետ Արդեմեան գաւառ ,  
 Ի յաղթ շամբշեւոց հըսկայ սըրավառ  
 Հայկ զէն մահարար առ զարմըն շըգառ ,  
 Պարգև երկնային առ բարեաց պիտառ •  
 Հայկ 'ի լիբանան 'ի Հարբեան դեմառ ,  
 Տընկագործ ըզգօն յերկունս անյամառ •  
 Ուր խիտ խիտ մայրիւք ըզբանեանցն անտառ ,  
 Երկնալիւր ստեղնեաց 'ի կողերս կայտառ •  
 Հայկ իրաւագէտ դատիչ անաչառ ,  
 Յօգտաւէտ վըճիռս իւր անհակաճառ  
 Հիմունս մեզ գանձեալ բարեացն անվաճառ ,  
 'Նիւթս ետ քերթողաց գովեստիցն 'ի ճառ •  
 Սա երջանկութեան մեր ձեռընկարկառ •  
 Սա մըթերք փառաց մեզ լեռնակարկառ •  
 Սատիր ապա դու բարւոյք 'ի միտ առ ,  
 Ըզսորայն դըրուատ՝ երգել 'ի կիթառ •

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՄԸՀ ՀԱՅԿԱՅ ԴԻԻՑԱՌԻՆ

Այսպէս 'ի պարարտ ծերութիւն բարեաց զազգըն խաղաղեալ,  
 Օարմըն Յաբեթեան հայր մեր քաջարի Հայկ գերհամբաւեալ,  
 Բազմամեայ քրրոսամբ 'ի ճոխ յարգարուած գործոց հետեւեալ,  
 Արդ գայ հասանէ հրամանն երկնաւոր ըզնախնեօք հաւեալ:  
 Արթնութիւնն ըզգաստ որ հարուստ չըրջանս նըմին ընկերեալ,  
 Բզլերջինն աւուրց չըթողու անհող կընքել հիգացեալ:  
 Օորդիս ըզթողուենս և զայլ կարևորս առ ինքն հաւաքեալ,  
 Օոր տայ բարբառել միտք յառաջատես կարգաւ ճառարկեալ:  
 "Ո՛րդեակք իմ" ասէ լուարուք ինձ հօր 'ի պատիւ յարգեալ,  
 Ունկընբաց կացէք 'ի լուր պատուիրացն առ ձեզ կըտակեալ:  
 Հըրաւէր երկնից որում սերտ յուսով կայի մընացեալ,  
 Ահ հարսն իմ 'ի տունն անդր յաւիտենից կոչէ արդ հասեալ:  
 Եռերիւր և ևս աւելի ամօք կեանքն իմ յերկարեալ,  
 Տուրք են տեսչութեան երկնից առ օգուտ երկրիս պարգևեալ,  
 Բզքանքարն զոր ետ Տանուտէրն ամբաւ յիս մարդասիրեալ,  
 Յարգեցի բարւոք որքան յաջողեաց Բազուկըն բարձրեալ:  
 Օանեայ աներկբայ զԱ՛րարիչըն մեր միշտ խոստովանեալ,  
 Սուրբ իւր հրամանացն եղէ հըպատակ 'ի նոյն խրախուսեալ:  
 Առ ոտըն հարի ըզպաշտօն Բէլայ դիմագրաւ կանգնեալ,  
 Եւ զըսկիզբըն սուտ պաշտմանն 'ի տապալ արկի կործանեալ:  
 Աւանս կառուցի ըզկալուած երկրիս բընակչօք լըցեալ:  
 Օգտաբեր կարգօք ուղղեալ ըզմարդիկ աստ համախըմբեալ:  
 Իմըս քաջութեան արհօր էր բազուկ որոց խեռացեալ:  
 Անուան իմ յուշածք սարսափիւն սըրտի սեռին սարտուցեալ:  
 Որդիք գիւցազունք ոչ 'ի պարծ ասեմ զիս ինքըն գովեալ:  
 Օի գիտեմ ըզձեռն որ առաջնորդէր զիս 'ի գործ մըղեալ:  
 Այլ ձեզ իմ որդւոց խըրախոյս խօսիմ յորդորս առածեալ,  
 Օաւանդըն բարի ձեր գործադրութեան այժմ յանձն արարեալ:  
 Ո՛չինչ արտաքոյ ըստ հետս ելանել՝ որոց են ընտրեալ:  
 Ո՛չ հայրենատուր մերժել զուղղութիւն՝ որ աստ կատարեալ:  
 Վստահ եմ թէպէտ իսկ գիտելով չափ ըզձեզ ներվարժեալ,  
 Այլ հարկ հայրենի տայ ինձ յուշ առնել զոր յառաջն եղեալ:  
 Յետ որոյ յանցեաւ նախնի մեր յայնմիկ պըտղոյն ճաշակեալ,  
 Եւ ըստ արժանւոյն տարագիր յերկիրս անկաւ աղմըկեալ:  
 Ի՜նչպք բարիք և չարք մի ըզհետ միոյ յարակ պատահեալ,  
 Բզբարիսն 'ի կոծ ըզչարսն 'ի պատիժ գըլեցին սահեալ:  
 Միտքըն խորախոհ յայնցանէ առնուլ կարէ զբարւոք կեալ:  
 Որ կուռ հաստեցաւ 'ի ծանօթութիւն որոց են գործեալ:  
 Հրաման Ա՛րարչէն եղաւ մեզ յիշել ըզպատահսն անցեալ,  
 Առ 'ի խոյս յախտից յողջութիւն հողւոյ անշարժ հաստատեալ:

Կիտեմք զՆախաստեղծն 'ի գործս իւր որդւոց ցաւօք վարակեալ .  
 Բզկեանս իւր երկար դառնութք լինուլ յերկրիս պանդխտեալ .  
 Եղբիւրն արտասուաց գետս իջուցանէր յարահեղ յորդեալ ,  
 Հեծումն հառաչանք էր ցայգ և ցերեկ նըմին ընկերեալ :

Բզմահ իւր հանգիստ թէպէտ և խընդրէր սըրտիւ տենչացեալ ,  
 Բայց նա անկուշէր յերկար 'ի մաշումն ոգւոց գրաւեալ .

Յիշէր ըզՀաբէլ յիւր հարազատէն անպարտ մահացեալ ,

Յիշէր ըզԿային 'ի պատիժ չարեացն յերերի կարգեալ :

Յաճումն յաղեկէզս միոյն առաջի դընէր դամբարան ,  
 Միւսոյն անիծիւք զըրկիլ յորհնընկալ զարմից սերընդեան .

Չէր դարմանատու վըշտացըն ցաւոց իւր անբուժական ,  
 Թէ ոչ մարդասէրն էր տուեալ ըզՍէթ զաւակ ըսփոփման :

Տեսէք ըզչընորհս երկնից խընամոց առ բարիս մարդկան ,  
 Արով յանմահից գերափայլ շողեն հրաշակերտ կայան .

Տեսէք և զաղէտս չարացն 'ի խորին խաւարին գեհեան ,

Աւր հրացայտ կոհակք կիզուն անողորմ յանմահ տոչորման :

Յիշեցէ՛ք յաւուրս նախնոյն մեր Նոյի զարկած պատահման ,  
 Օ խորդ փրկուժիւն և անգիւտ կորուստ անդ ընկերացան .

Վայրագ շամբշէլոց յողողս հեղձական վըտակ ուղխացան ,

Եմբիժ տոհմայնոց յաճումն անընդհատ արկեղ փրկարան :

Աւր ազատութիւն և աղէտք պատժոց արդար հատուցման ,  
 Օանմահ Տիրողին ըզբարձր բազուկ բերեն յանդիման .

Օ ի այն ինչ խեթիւ ակնարկէ յերկիր Աչքն ամենիշխան ,

Իքն 'ի չըբութեան իսկոյն 'ի նախնին փախչին համբարան :

Յիշեցէ՛ք որդեակք և զանցսըն Քամայ Արկուռւոյն հընձան ,  
 Եանարգելն ըզհայր 'ի վիճակն անկեալ հէգ ծառայութեան .

Յիշեցէ՛ք ընդ Սեմ ըզմեր Նախահայր զերէցն հայրաճան ,

Եւ որս հայրենի շնորհացըն բարիք յորդ աղբիւրացան :

Օանցատումն Ին տեսէք ըզպատիժ 'ի շինուած բըրգան ,

Աւր խեռիցըն զուրկ 'ի բընիկ լեզուէս ոչ յոյժ անագան .

Ենդ ցըրօնք ազգաց՝ անդ Իէլ բըռնակալ՝ անդ յանցք անարդման ,

Մարդոց մահացուի փառացն աստուծոյ լինիլ գերփական :

Արու՛մ անհանդուրժ մեր դիմակալեալ յիրաւի խըժդան ,

Ենսաստ մընացի 'ի սուտ սպառնալեացն ամբարհաւաճման .

Օ ի յայս մեր սահման յարեէ հանեալ նետիւք աղեղան ,

Սուտ զատուածութիւն Նեբրովթայ ետու յոտիցն 'ի կոխան :

Իսկ որ ինչ յայսմիկ 'ի սոյն նահանգի գործք հանգիսացան ,

Չեն ինչ 'ի Թագնի լերինք և բըլուրք վըկայել փութման .

Չե՛ղ ասեմ այժմիկ , առ ձե՛ղ բարբառիմ , տոհմբըդ քաջազան ,

Քաջիկ զո՛ւնկըն տուք 'ի լուր կըտակիս սյս հայրենական :

Ի՛նչ իմ Երմենակ՝ ծընունդ անդրանիկ պըտուղ զօրութեան .

Երմըն հաստաբուն արդ ծառաղարդեալ 'ի պրակ ծընընդեան .

Ի քէն աճեսցին ճիւղք բաղմապըտուղք յերկրիս դարաստան ,

Եւնե՛լ հովանի և դադար անբոյժ՝ որոց ընդ քե գան .

Իսկ դու Մանաւաղ մանրիչ հրօրարտացն աւազանբման .  
 Դիեցցես յըստեանց օրհնութեան հօր քո զոյժ յաղթողական .  
 Մանրեցցես զեղջիւրս քոյոց թըշնամեացդ անարժարձական ,  
 Ահ քո արհաւիրք գոռոզացելոց վանիչ վարապան .  
 Խո՞ռ դու ընդ եղբարց խորին խուզարկուք հիմանց շինութեան ,  
 Ի ձեր ձեռակերտ անխախտ զօրասջիք կալ աներկեան .  
 Չեղ մի մեղիցէ ոչ տապ արեւու , ոչ դէպք լուսնական ,  
 Յաղթող հանդիսիւ կացջիք յերկրին ձեր պետ անվանական .  
 Այս իմ օրհնութիւն ձեզ ամենեցուն ձիրք անանցական .  
 Այս ժառանգութիւն ձեզ փարթամութեան գանձ անվտոնական .  
 Յայլ ինչ անցից այժմ որք առ 'ի խօսիլ պարտք են ճնողութեան ,  
 Տալ ձեզ զիմ վերջին աւանդ խըրատու և քաջալերման .  
 Յու՛մ թէ յարասջիք հարազատ հոգւով 'ի գործադրութեան ,  
 Յօրհնութեանց երկնից 'ի ձեզ ծովանան վայելք հանգըստեան .  
 Իսկ թէ հետեւսջիք չըմընալ յուղիղ կարգացրն պայման ,  
 Տուժից ձեր պատճառ դուք էք 'ի մընալ անաստ անհաւան .  
 Ահա լացիք դուք 'ի սերունդքս ձեր զերկիրս ամենայն .  
 Փարթամ ճոխութիւնք անդորրո կենաց 'ի ձեզ յորդեցան .  
 Մի՛ լիցի՛ սրդեակ , ընդ յօրանալ ձեզ 'ի գոյս անցական ,  
 Մոռանալ զոր անդ յերկիրնս գանձին փառք անանցական .  
 Հիմըն հաստատուն բարեկեաց բարուց ուխտն է տիրական .  
 Հաւատ կենդանի , յոյս աներկեան , սէր անկեղծական .  
 Ատուած որ հաստեաց ըզմեզ 'ի պատկեր իւր արարչական ,  
 Յիւր պաշտօն կարգեաց , չարար գերագոյն ինչ ոմն ինքնիշխան .  
 Կացջիք 'ի նրմին , կացջիք հաստատուն յաստուած պաշտութեան .  
 Ատելի համակ ձեզ Ռէլայն լիցին չարիք հետտութեան .  
 Սիրեցէք զԱտուած յամենայն սրբոէ գեր քան զամենայն ,  
 Պահեցէք որ ինչ առ ձեզ շահ օգտի բընիկ պատուիրան .  
 Ի ըծորդ կրօնին և գործքս բարեաց կալջիք միաբան .  
 Սիրել ըզմիմեանս աննենգ խորհրդով կամաց սըրբութեան .  
 Օրր ինչ ոչ կամիք թէ արացցէ ձեզ մարդ գործ տըհաճման ,  
 Առնել ձեզ ըզնոյն չէ յուղիղ կարգի , չէ արարք դիպան .  
 Խընդիր վըրիժուցն է տըկարութիւն ոգւոցն հիգութեան .  
 Իսկ վեհագնէից պըսակ է ներումն գործ գերփառական .  
 Կարգըն վայելուչ 'ի տընտեսականս ընդ պարկեշտ վարման ,  
 Ճոխ փառազարդէ ըզբաղաք ըզտունն և ըզգերդաստան .  
 Վարժումն առ սոսկ կեանս ներգործէ յագիս ոյժ արիական .  
 Փափկութիւն իսպառ թօշնէ 'ի կընատ մեղկումն անարժան .  
 Յաճախ համագամք յոգնագոյն ախտից լինին սերմնարան ,  
 Ըսակպ գեղորայք ծախիչ են կենացն և առողջութեան .  
 Պըճնոյթ 'ի հանդերձս անդէպ է մարդոյ յոյժ ամօթական .  
 Ար ըստ պատկերի Հաստջին ըստեղծաւ յաւէտ գեղազան .  
 Սերկ ծընաւ Աղամ մերկ չըջէր 'ի դրախտն այն ադինական ,  
 Կարիք ամօթոյ չըկայր 'ի միջի առիթ քօզարկման .

Յետ մերկանալոյ զանմեղըն կենաց լուսոյ պատմութեան ,  
 կարօտ մաշկեղէն ցուցաւ հանգերձի 'ի դքօղ մերկութեան .  
 Ար ինչ 'ի պատիժ տուաւ Նախահօր յօձաջամբ խաբման ,  
 Լիցի առ պարծանս արկանել զանձամբ 'ի ցոյց ցոփութեան :  
 Խոշորք ըզգեստուցն են ըստընդիաց մարմնեղէն շնչման .  
 Օրծեն զաւելորդս որ ինչ 'ի ծակտեաց ցընդին ընդ իրան .  
 Իսկ քընքչաց տամաւկք անդրէն ընդ մարմին լեալ ներմածական ,  
 Խօթագին մեղկեն ըզմարմնոյն կազմած , հիմնեն զապական :  
 Ի կըշիւ կացէք, որդեակք, 'ի բարիս երկրի վայելման .  
 Օր յանձինքս ձեր ժիր կանգաղեսցի կարիք զօրութեան .  
 Բնդ նրմին և յայլ բարոյից բերմունս արժանիս մարդկան :  
 Հրրահանգ զանձինս ցուցիք 'ի գործել ըստ վայելչութեան .  
 Կատաղի զայրոյթ զեղծումըն բերէ բարւոք խորհրդեան .  
 Յաչաղք մախանաց զոգին խանձատեալ մաշեն չարագան .  
 Կարօտանքն առ յոյլս իբրու սուրհանդակ գործեն զարշաւան ,  
 Լըկեալ չարաչար 'ի սով 'ի ծարաւ յաղէտս անձկութեան :  
 Ընյագ ծարաւումն յընչիցըն շեղումն առ փառս ընդունայն ,  
 Ընհանգիստ խոշտանգ տայ՝ որոց գերին յիւրն կապարան .  
 Օրնչ բան կարգեցից և յաղագս ախտին բողջախոհութեան ,  
 Ար ըզուք մարդոյ ծուղակէ 'ի հաղբ անբան շամբ շութեան :  
 Ըյս ախտ ըզմարդիկ կերակուր կետից կացոյց յողորման .  
 Ելից ըզգժոխս անդնդոց երկրի սակերօք մարդկան .  
 Ընջիք ինձ առ այս և ըզմայրն ախտից ծընունդ դիւական ,  
 Արոյ չարութիւն մերժեաց 'ի յերկնից զհինն ամբարտաւան .  
 Օրնունդ էք հողոյ լի ցաւօք կենաց աստ ասպընջական .  
 Մի կարծէք յերկրի անվիշտ և անմահ մընալ յաւիտեան :  
 Ըզմաւաւ ածէք զոր ինչ առաջի կայ անդր 'ի վախճան ,  
 Եւ չարութիւն ինչ ձեզ ոչ տիրեսցէ կամ ախտ վիսկութեան .  
 Ըյս են որդեակք իմ ձեզ վերջին խրրատք պատուէր հայրական ,  
 Ընկալ յայսպիսեաց զանձինքս պահել յաշխարհս աղցական .  
 Արով բերկրեսցի հոգիս անդանօր 'ի հարց կայարան ,  
 Խընկեսցէ առ Տէր միշտ 'ի ձեր բարիս նուէր պաղատման .  
 Մայր ձեր Օգրմանդուխտ յաճուրդ սերնդոց չը բնաղ ծիածան  
 Յեթերիս Հարքայ բարեօք կամարեալ յերանգ քաղցրազան ,  
 Խընդասցէ 'ի ձեր մարդկօրէն կենցաղ սերտ և միօբան ,  
 Կընձիւրն Թախձի մի ծընցի յազնիւ նորուն կերպարան .  
 Եա իմ մըտերիմ աւարտահասակ դըշտոյ սիրական .  
 Եա 'ի ձեր սընունդ առատ մատուակ կաթին մայրական .  
 Ինձ լըծորդ ամբիժ ընդիս կենցաղեալ յեռադար շըրջան ,  
 Յիին պաշտաման 'ի ձիրսըն սիրոյ անզոյգ վեհազան :  
 Հանգիցէ ընդիս գութ նորին և սիրտ մինչ 'ի գերեզման ,  
 Արով ծաղկեսցիք յորդիս և Թոռունս 'ի մեր օրհնութեան .  
 Գիտեսցիք զանջափ առ որդիս ըզսէր գութ ծընողական ,  
 Յըստակ խորհրդով անմոռ տըպեցէք 'ի ձեր յուշարան :

Դու իմ Արմենակ յառաջնապետակ արիւն դիւցազնեան ,  
 Բնդ իմ զօրասցիս միասլետ կարգեալ տէր միահեծան .  
 Պահել արութեամբ զայս ժառանգութիւն յանուն Հայկական ,  
 Յաղթող հանդիսիւ կալ բռնացելոցն հրղօր ախոյեան :

Չէ պարծանք յազգէ լինել դիւցազանց ծընունդ սրբազան .  
 Այլ անմեղի հոգւով ընդ շաւիղ գընալ վարուց նախնական .  
 Արիւն հայրենի որ քեզ հաղորդեաց ըզկեանս մարմնական ,  
 Վառեսցէ 'ի քեզ և աշխոյժ հոգւոյ սիրտ փառազնական :

Ահա Բահաղու շիրիմն արութեան իմոյ մահարձան  
 Հընչէ անբարբառ զիմ գովեստ՝ որոց ըզգատտ սենկըն կան .  
 Ահա առ նրմա ձեզ բարեյորդոր և իմ դամբարան ,  
 Օրինակ առջիք յարարուածքս ձեր գոլ ըզգօնական " .

Արդ զայս օրինակ և ևս առաւել յորդոր ըստ կարգին  
 Խօսեցեալ Հայկայ առ իւրսն ամենայն յեռանդ ջերմագին ,  
 Ընդրէն 'ի մահիճս յուշիկ ընկողմնի յուսոյն երկնային ,  
 Յանմրաունչ խոկումն առ ժամս ինչ կալով զուղւոյն անդարձին .

Պատեն ըզնովաւ որդիք և թողունք և որք առ տընին ,  
 Անձայն պըշուցեալ յիրեարս 'ի թախիժ ապշութեան խորին .  
 Արութիւնն անդէն 'ի սիրտ ներգործէր կողկող ցաւագին ,  
 Այլ զողբն արգելոյր պատրոյկն առ կայծեալ կենացըն ջահին :

Արդ մինչ յայս դիպուած կալեալ 'ի ներքին խորոց փրղձկէին ,  
 Ընդ էր ըզնովաւ յանցուածոյն դըստեր փարումն 'ի բազկին .  
 Օրնանէր իսկոյն դալուկ ինչ դըժգոյն յիւր հըսկայ դիմին ,  
 Ի նըկար հանել զողբալին վիճակ մահացու զարմին :

Կափուցումն աչաց և վախճան շընչոյն յայն տեսարանին ,  
 Անշարժ ըզհասակն առնէին նոճեայ հրղօր Հըսկային .  
 Անպարտըն բազկաց սաստիկ ուժգնութիւն 'ի հարուած նետին ,  
 Շարժել թուլանայր ըզսօսի կողերս վարսագեղ մարմնին :

Ազգաճեմ բարձից իւր կըճեայ սըրունք 'ի քայլ պանծագին ,  
 Չըլաձիգ խըզեալ իբրու փայտ անշարժ դընէր յանկողին .  
 Բաղցրախօս լեզուն կաշկանդեալ կասեալ 'ի յօդուած բանին ,  
 Օկղերականաց բանայր ըզբերան յողբերգ տըրտմագին :

Անդ լալօնք կոճոց բըղխումն արտասուաց յիւրսըն գըլխովին ,  
 Օսրդիս ցընծութեան 'ի սուգ անըսիտի իսկ համակէին .  
 Անդ մութ խաւարի աղջամուղք սաստիկք յերամս արփենին ,  
 Ըզտիւրն պայծառ կենացն արեու 'ի ցայգ բերէին :

Յաւագին գոչէր կին իւր Օարմանդուխտ առ խորով սըրտին .  
 “ Աւաղ իմ կենաց , վայ ինձ առանց քո պայծառ արեին .  
 Դու սիւն ոսկեղէն , դու յականց պարիսպ մերոյ աշխարհին ,  
 Դու ընկեր սիրոյս՝ զիարդ զիս լըքեալ թողեր առանձին .

Երանգ է արդեօք զոր կըրեմ դիպուածս այս աղէտագին :  
 Թէ ինձ պատրանաց ցընօրք առ աչօք երեւակային .  
 Արմա ակնունէր շինութեան երկրիս բաղձանք կաթողին ,  
 Յաւելուլ 'ի փառս ընտիր սերընդոց բաղմամբոխ գընդին :

Ի նա ցրնծային լերինք և բըլուբը և դաշտք ընդ հովտին :  
 Նըմա ստեղնէին դաբնիք 'ի պըտակ մըշտայաղթ մարտին .  
 Ի նա ամբարէր մըթեր բարձրութեան Հայկազնեայ ցեղին ,  
 Նովաւ ուռճանայր տունս զուարճալի յերփներփըս ծաղկին :  
 Օխարդ ապրեցայց զըրկեալ յերեսաց անզոյդ իշխանին .  
 Միւսանգամ ունիլ զիմ Ղիւցազն առիս չիցէ՞ հընարին .  
 Տար և զիս ընդ քեզ անժոյժ եմ ցաւոյս անժոյժ բընաւին :  
 Չիք ինձ մըթիթար այլ աճումն ողբոց 'ի կէզըս լերդին " :  
 Բընոյն և որդիք սըրտակէզ կոծով կըցուրդ յարէին ,  
 Ողբումն 'ի բերան , արտասուք 'ի դէմս , տոչորք 'ի փորին .  
 “ Ո՛վ հայր՝ հայր սիրոյ և քան զանձինս մեր սիրոյ և սրատուն ,  
 Պարծանք պանծալի պետ պայծառաշուք 'ի քումըդ սեռին :  
 Յոյս հաստատուն էր յորդւոց քոց այժմիկ սեաղգեաց սըրտին ,  
 Բաղմամեայ կենօք և ևս ըզխնամս վայելել զբոյին .  
 Է՛ր թողեր ըզմեզ առանց այցելուի 'ի ծուփս երկրային .  
 Բնդէր մերժեցեր 'ի քոց կալուածոց զաջոյդ հովանին :  
 Ո՛վ այսուհետև ախոյեան ելցէ պարտել զթըշնամին .  
 Ո՛վ տացէ զօրաց ուժգին խըրախոյս զարութեան ոգին .  
 Ո՛վ յարդարեացէ զահեզ գումարտակ ճակատու խըմբին .  
 Ո՛վ զերկիր լըցցէ աւարօք ազգացն յաղթութեան մասին :  
 Ո՛ւր է խայտակնեայ տեսիլ քո կայտառ դէմք զուարթագին .  
 Ո՛ւր է քո լեզու ճոռոմոյօրդոր մարտկացն երամին .  
 Ո՛ւր է զօրաւոր բազուկդ անպարտեալ 'ի կըռփամարտին .  
 Ո՛ւր ահեզ խիզախդ ազգաց դըղըրդիչ զօրէն տերւին :  
 Բարձան վերացան 'ի մէնջ ամենայն հանդէսք պանծագին .  
 Բնդ քեզ թողին արդ Հայր մեր բարերար 'ի հողըն գետնին .  
 Ընդութն այն գազան որջացեալ առ բուն գիտութեան ծառին ,  
 Գէշ արկ զպանծագոյնն 'ի մէջ դիւցազանց ըզՀայկ անուանին :  
 Ո՛վ մահ անողորմ , անխընայ 'ի շուք մեծիս դիւցազին  
 Օխարդ մախացար բառնալ 'ի կենաց այր զանպարտելին .  
 Մանգաղ քո հատու սըրեալ 'ի ժանիս կեղծեաց վիշապին ,  
 Յոսկեփունջըն հասկ անմահից արկաւ յադին դարտատին :  
 Ուստի զօրացեալ ըսփիւռ փարեցեալ առ ամենեսին ,  
 Հընձէ բարդաբարդ զորայս մարդկեղէն մեր անդաստանին .  
 Յորմէ չիք ազատ օք 'ի բաղմութեանց աստի հողածին ,  
 Եւ ո՛չ որ ընդդէմ դարձցի ըստնանել ժամուն օրհասին " :  
 Յառնէր անդ Քարթլոս բան ըսփոփանաց բերել 'ի կարգին ,  
 Ի մեղմել ըզկանչն ըզճիչ ըզկառանչն եղերականին .  
 “ Շատ են ձեզ՝ ասէր , հանդէսք բարութեան իմ Հարազատին ,  
 Մըթիթարս առէք՝ զարմըրդ գերաբունք , վախճան տուք կոծին :  
 Ո՞ արդեօք ծընաւ անմահ յարանալ 'ի կեանս երկրային .  
 Օ՞ր տեսիք անկալ յանգութ ճիրանաց մահուն հըրէշին .  
 Մեր նախնիք թորգոմ , Գամէր և Յաբեթ ընդ այս փորձ անցին ,  
 Նոյն և Հայրն երկրորդ ընաիր սերմնարան լուսոյ աշխարհին :  
 5 17

Ենովքայ միայն տուաւ մահայաղթ հանդէս սըխրագին ,  
 Այլ հուսկ 'ի վախճանն և նա կարթեոցի 'ի ծուղակ նորին .  
 Այս անցք են բոլոր զարմից մարդկութեան վըճռովն Արարչին ,  
 Այս տուաւ զեղջիչ անմահ չարութեան խիստ ապըստամբին :  
 Յուամէ՞ կըտրեցաւ անկուածն ոսկեթել կենացըն սորին .  
 Ո՞վ արկ դերանդի յանդ սպիտակացեալ մեր այս Վեհազին .  
 Կարանց ոք յէից գէթ ըզմի վայրկեան կարճել ըզհայկին .  
 Չեղէ՛ւ յաղթական գոռող հըսկայիցն 'ի պատերազմին :  
 Շատք յանպարտելեաց 'ի հարուած սորա յարևէ ելին ,  
 Կաղնիք և կընձնիք , և մայրք մարդկեղէնք անկան 'ի գետին .  
 Գործք զգօնութեան զերկրիս շինութիւնն նոր յարդարեցին ,  
 Չեթող 'ի բարեաց զոր ոչ հաստատեաց իւրում կալուածին :  
 Դադարեացէ արդ 'ի ձեր բերանոց ողբն աղէտածին .  
 Կացցէ 'ի յաչաց վըտակն արտասուաց բըղխեալ յորդագին .  
 Սատիցեն դիզարդք զըմբռսել զանձնեայ հասակն ըստ հարկին ,  
 Ի դիր հանգըստեան զետեղել փառօք ըստ իւր արժանին " :  
 Յայս յորդոր ըսթամի փոյթ ուշաբերեալք իւրքն ամենեքեան ,  
 Պատրաստել յարեան որ ինչ 'ի պէտս էր փառաւոր թաղման .  
 Յաւիշկ անուշակ ըզդին քաջալանջ իսկոյն լուանան ,  
 Յանփուտ դեղորայս պատեալ խընամով ըստ հընոց վարման :  
 Արբբարհեստ անկուած ոսկեղէն դարուն փութայ 'ի պատան ,  
 Դարաստանք երփներփն ընծայեն ծաղկունս 'ի զարդ պիտեան .  
 Դաբնիք ձիթենիք ոստ վարսագեղեալ յաղթութեանց նըշան ,  
 Պըսակ մատուցին յանմոռ յիշատակ անմահ իւր անուան :  
 Ի ըսպաս պատուոյ ձեռքըն ժիրաժիրք ամփոփել մատեան .  
 Փայլուն պաստեռուներ զգագաղսըն պըճնեն զարդ զարքայական .  
 Փունջ փունջ գեղերանգ ծաղկաւէտ բուրմանց յոյժ ըզմայլական ,  
 Օտրես դեսպակին ձեռագործ ծաղկոց գործէր Վիւրակնեան :  
 Անդ պար բոլորեալ որդիք և թոռուներ զգահիւն հայրական ,  
 Աթիւ բաղմամբոխ տըխուր հոլոնեալ կային բացական .  
 Աչք ամենեցուն յարտասուս հարեալ մըղձուկ սըրտական ,  
 Վայելուչ կարգաւ իշխանք մեծարոյք ըզնաչն համբառնան :  
 Առ ընթեր կարգաւ իւրքըն տըխրագէմ լուռ իմըն գընան .  
 Յեա նոցա իշխանք շարժին 'ի գընացս յոյժ վայելչական .  
 Ապա զօրականք կուռ ըսպառազէնք 'ի սուր յաղեղան .  
 Օրինօք մարտի ահեղ գործէին զայն հանդիսարան :  
 Ապա սոսկականք վերտ վերտ ընկերեալք 'ի քայլ մեղմական ,  
 Օիւրեանց Սիապետ յուղարկաւորել 'ի ծոց մայրական .  
 Այս հանդերձանք էր 'ի պատիւ փառաց Վիւցաղին թաղման ,  
 Օայս իսկ պահանջէր բաղմամեայ խընամք իւր առ ամենայն :  
 Այլ մինչ իջուցին ըզդին պատուական յանքոյթ գըրկարան ,  
 Անդ էր աղաղակ լալոյ և կոծոյ սաստիկ որոտման .  
 Արձագանգ լերանց դարձագարձ որոտ հընչէր կառանջման ,  
 Դըզըրդէր երկիր գոռային անձաւք 'ի գոչ վայական :



Յայտանակ պատիւ չըբեղ մեծարեալ ըզփառացն արժան ,  
 Կատարեն ապա զնախնի կանոնին զըմբոն պատուիրան .

Օածկեն ըզդահոյս իւրական շիրմի ըզհողա պատեան ,

Պատուեալ նըշանօք քաջարի գործոց յանդրւոյն մահարձան :

Ամահ գովեստից էր վերտառութիւն բոլոր Հայաստան ,  
 Լայնադիր մարզիւք մըշտաձայն քարոզ յանխօս համրութեան .

Տի նա բարիօք կացութիւն կենաց բընաւից մարդկան ,

Բզնորայն 'ի ցոյց բերէր զեղանակ գերըզգօն վարման :

Չէր ինչ դժուարին նոր միապետին յաւելուլ յաճման ,

Նորանոր գիւտովք և ևս յարգարել 'ի կարգ բարեզան .

Սարգաճօխ սահմանք երկնէին անգուլ զընտիր զօրական ,

Եւ ինքն Արմենակ վարժեալ էր ներկուռ յոգի անդ Հայկեան :

Այլ բերումն իրաց տայր Եգրեայ յառնելանդր ատենաբան ,

Ի յարգ իւր եղբօր և 'ի քաջալերս թոռանց (Թորգոմեան .

“ Չեղ ասեմ՝ ասէր , ձեզ ո՛վ հարազատք Ղիւցազինս արեան .

Ո՛ւնկըն մատուցէք հակիրճ բարբառոյս այս յորդորական :

Տոյժ մեծ է երկրիս զոր ետ մեզ Ղիւցազն յիւր հըրաժարման .

Վընաս մեզ համայնց վիշտ անհընարին վէրք անբուժական .

Սեկնեցա՛ւ 'ի մէնջ անդարձ մեկնեցաւ , չիք տես միւսանդամ ,

Առ յերկիր դարձին , անդարձ է վճիռ հակիրճ հըրաման :

Արդ քաջագորով Իշխանիս հոգի 'ի հարցն օթեան

Բերկրամիտ պարէ , խընդայ ընդ նոսին յուսով յարութեան .

Իսկ հողըն մարմնոյն աւանդեալ հողոյս աստ 'ի սոյն դամբան ,

Քաջագիր տումար մեզ կայ առաջի անմոռաց յիշման :

Հայեսցո՛ւք յըստակ օրինակ առնուլ քաղաքավարման ,

Այօթ մեծ է գուլ ալիւն հըղօրի և ո՛չ համաջան .

Օջրութիւն զգեցցուք 'ի յարացուցէս այս անմահական ,

Կացցո՛ւք բարեկեաց , կացցուք քաջագործ լեալ զիւցազնական :

Ահա համասիրտ որդին Արմենակ բազուկ զօրութեան

Սիապետ կարգեալ յաջորդ հըսկային հայր գորովական .

Պիտի՞ ձեզ հանգիստ , պէտք են ճօխանաց ձեզ փարթամութեան ,

Հընազսնդ կացէք ընդ ձեռամբ լերուք հըլու և հաւան :

Կարէ՞ արդեօք տուն և կամ տէրութիւն կալ 'ի շինութեան ,

Ս'ինչ ոգին պառակ ձրգէ 'ի յանձինս զանյարիր բաժան :

Քանդ է տէրութեան ուր չեն մարդորեարք յարեալ 'ի յիշխան ,

Սա էաճ զաւեր չարաչար անկման յորդիս խեռութեան :

Այր էք զօրաւոր ծանրագոյն վըշտաց փորձ և տեական .

Սիասիրտ ձեր կապ յամենայն դիպուածս ցուցցի յաղթական .

Այս է իմ առ ձեզ խըրախոյս բանի յազգակցացդ օճան ,

Օայս խընդրէ ձեր Հայր քաջայաղթ հըսկայս այս անզուգական .

Կացէք արդ բարեաւ , յարգեցէք ըզօէր սերտ և սեռնական .

Տուք մեզ դարձ առնել յիւրաքանչիւր մեր գործ կառավարման .

Հոգի մեր ընդ ձեզ անքակ լըծորդեալ յաւէտ միական ,

Բազկակից մընամք յամենայն 'ի գործըս ընդ ձեզ՝ միաբան ” :

Յայս բան խանդ սիրոյ սաստիկ բորբոքեալ 'ի սիրտ Ագրեսին ,  
 Գոչեաց մեծաձայն առ եղբօր դամբան զողջոյնն վերջին .  
 “ Աղջնն քեզ ասէր , մե՛ծըդ դիւցազանց յայդ նըսեմ յարկին ,  
 Նըշխար օրհնութեանցդ մեզ բարգաւաճիչ անվրժար բաժին :  
 Աղջնն քեզ չքքեզ դահ հըսկայակիր 'ի ծոց ծաղկածին .  
 Շողեսցին 'ի քեզ շնորհաց փայլմունք փառացն երկնային .  
 Հըռչակ սըխրալի գործոցն որ 'ի քեզ պերճ Միապետին ,  
 Յուշածք անմոռաց 'ի քում նըկարեն ճոխ գանձարանին :  
 Աղջնն քեզ սափօր դիւցազն ոսկերաց իմ Հարազատին .  
 Արոյ քաղցր էր ինձ վայրկեան մի աւուրց քան ըզդարս անձին .  
 Արք աստ են քոյինք 'ի պատիւ դըրից քոց մըխիթարին ,  
 Մեզ հեռաւորաց զսնուանդ ըզփառս տնւր յըսփոփման մասին :  
 Աղջնն քեզ և Հարք չքքնաղ ձեռակերտ Աշխարհաշինին .  
 Յորում զամս ութսուն ճոխ ձեմեաց իշխան քո Հայկ անուանին ,  
 Ի ծործորս հովտաց 'ի բարձունս լերանց 'ի դիրքս դաշին ,  
 Նըշխարք վաստակոց անթառամ փայլեն Հայկայ դիւցազին ” .  
 Արդ այսու կարգաւ ըզգործ վըճարեալ թաղման հանդիսին ,  
 Այր իւրաքանչիւր 'ի բընակ իւրոյ դառնայր աշխարհին  
 Բարթըոս և Ագրէս , Բաղ և Խոռ յիւրեանց կալուած առանձին .  
 Մանաւաղ տեղի կալեալ 'ի բընակ հայրենականին :  
 Արմենակ դիմէր յիւր քաղաք ամուր առ Արագածին ,  
 Օմիապետութեան վարել տէրութիւն ըզՀայկեան ազգին .  
 Իսկ այլ իւրոյին Հայկական սերունդք յայլ կողմանս երկրին ,  
 Ի փառօք զաշխարհ գործեն ըզՀայոց յաւէտ պանծագին .  
 Չէր անդ դիւական ոգի պառակտիչ միութեան սըրտին .  
 Ա՛ջ 'ի զուր կեղէք ոք հարըստահար իւրումն ընկերին .  
 Սէր յըստակ գահոյք արկեալ էր սըրտիւ 'ի Հայաստանին ,  
 Բողբք միասիրտ հոգւով առ միմեամբքն ջօլորէին :  
 Բա՛րէ սըխրալի զօրութեան սիրոյ 'ի սիրտ հողածին ,  
 Արով մահացուք յանմարմնոց պարեն միասիրտ խըմբին .  
 Սա մեր նախահօր չքքոյ ետ հանդէս յաւուրս իւր բնաւին .  
 Սա ըզնա վառեաց 'ի պաշտօն փառացն Ամենակալին :  
 Սովաւ համագունդ աւագորերոյ 'ի Հարքայ շինին ,  
 Յարժանեօք պատիւ յուղարկաւօրման Հայկայ հաւաքին .  
 Սովաւ զեղք բանից յորդորք 'ի գովեստ անդ պայծառագին ,  
 Սովաւ և դառնալ անցնիւր պետութեանց յիւրեանցըն տեղին :  
 Յայս և Արմենակ հուժկու միապետ հայրենի ազգին ,  
 Մեծամեծ գործոց անխոնջ պարտպեալ յիւր Արագածին .  
 Սովաւ 'ի մահուան զպետութիւնն յանձնէր Արմայիս որդին ,  
 Պատուիրեալ գընալ ընդ հետըս նախնեաց յօգուտ աշխարհին :  
 Ի սոյն յայս պըճնէր և Արամայիս զերկիր գըլխովին ,  
 Շինեալ հրաշակերտ քաղաք զԱրմաւիր զեղերք Բեհովնին .  
 Աւր արքայական գահոյք փայլեցան Հայկազնեայ տոհմին ,  
 Մինչև 'ի բարձումն ահեղ յաջորդացն 'ի տանէ Հայկին :

Յայն Ամասիա Արամայիսայն հարազատ որդին  
 Ուղիաճեմ փայլէր 'ի չքքնաղ շինուածս անդր Մարարադին .  
 Սովաւ ընդլայնէր Գեղամ Ամասեան 'ի Հայաստանին ,  
 Ի կուր մեծ գետոյ ձրգեալ ցտահմանսն կասպից ծովին :  
 Սովաւ և Հարմեայ որդւոյն Գեղամայ փառք վայելչագին ,  
 Հընչէլ տայր երկրի վքսեմ պերճանօք զերգ ներբողինին .  
 Արգ սոյն մեր նախնիք մինչև 'ի Մարամ յայրըն հրաշալին ,  
 Աիրով շողկապեալ զերկիր համօրէն բարեզարդեցին :  
 Կրթեցցուք և մեք 'ի սոյն միութիւն սերտ և կաթողին ,  
 Փառք մերոյ նախնեաց մեզ ահա յորդորք , ո՛վ աղգ հայկածին .  
 Աէր մըտերմութեան գանձարան բարեաց ճոխանք աղգային ,  
 Մի աղարտեցի առ մեր կորճանու մն յորդուց բանսարկուին :  
 Եւանդն աղգասէր աղգասիրացն է պըտակ պանծագին .  
 Ի գլուխ կապեցցուք սերտեալ ընդ միմեանս յաննենգ խորհրդին .  
 Օխարդ կոչեցցուք մեք աղգ ընտրութեան ծընունդ գիւցազին ,  
 Թէ շիջցուք 'ի սէր , որ բարեօք զերկիրն ելից զադենին :  
 Յառաջ մատերուք խրրախոյս բարձէք յայս բարեաց մասին ,  
 Չըլտնել յաղգէ զօգուտն որք 'ի սոյն կարգէ ծընանին .  
 Չէ մեզ հընարին 'ի գիւտ կորըստեան մեր գալ վերըստին ,  
 Թէ ոչ ըզղամպար սիրոյն վառեցցուք անչէջ 'ի սըստին :

The first part of the book is devoted to a general  
 description of the country, its climate, soil, and  
 productions. The author then proceeds to a  
 detailed account of the various tribes and  
 nations which inhabit the country, and  
 describes their manners, customs, and  
 constitution of government. He also  
 mentions the different religions which they  
 profess, and the various arts and  
 sciences which they are capable of  
 cultivating. The second part of the book  
 contains a history of the country, and  
 a description of the different wars and  
 revolutions which have taken place  
 since the discovery of it. The author  
 concludes with a chapter on the  
 present state of the country, and  
 the prospects which it holds out for  
 the future.

# Հ Ա Ն Գ Ի Ս

## ԱՇԽԱՏԱԿԱՆ ՄԵՐՈՅ ԱՐԱՄԱՅ

### ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

## ՄԻՆՊԵՏՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԱՅ ԵՒ ՀԱՆՈՒԹԻՆ

### Գ Լ ՈՒ Խ ԵՐԿՈՏԱՍԱՆ ԵՐՈՐԴ

**Ա**ՍՏ նոր նուագ եկն ինձ 'ի ճառ հազներգական  
 Ի հանդիսից մերս Արամայն վեհազնութեան ,  
 Օով իմաստից ծայրածաւալն առատութեան ,  
 Յեղցեալ 'ի լանջ պերճ Հայկազնիս և յուշորան :  
 Խիզախըն իւր քաջագօտի յանյաղթ մրցման ,  
 Օ Աթենասայն մեզ բերէ ցոյց ակն յանդիման :  
 Ի սուր հատու յանգրծելին նետից վահան ,  
 Արրաւառեալ գոռ զօրավար անդուգական :  
 Անդ Արագած 'ի գահոյս իւր արքունական  
 Ահեղասատ կարգ յարդարէր յարեաց վաշտկան :  
 Ամենեքին հուժկու մարտիկ անըմնական ,  
 Ի զոհ իւրեանց Միապետին անձնազրական :  
 Իսկ ինքն յազգին վայելչութիւն կուռ ժրտաջան ,  
 Օարդ հայրենեաց 'ի ճոխութիւն գերագրական :  
 Հըռչակ բարեաց հարեալ յուրտս ընդ երկրաստան ,  
 Յամենեսին զոգիս ազգէ զյարողութեան :  
 Կալուած երկրին իւր հայրենի ընդհանրական  
 Գայ ընդ ձեռամբ յօժարասիրտ և ինքնակամ :  
 Ի կովկասու լեռանց զերկրին իւր ըզսահման  
 Լայնէ մինչև ցլերինսըն Տորոսական :  
 Գող թըշնամիք որք սողոսկեալ 'ի Հայաստան  
 Յաւուրց Հարմեայ մասն ունէին զիշխանութեան ,  
 Օահի հարեալ յուժոյ բազկացն անկրրկնական ,  
 Ինքնահալած գաղթեն 'ի բաց փախըստական :  
 Նեղիչք ազգին գան ընդ լըծովն ըստըրկութեան ,  
 Վանեալ 'ի սար իբրու զօտար անազգական :  
 Յօգտաւէտ կարգ գործոցն եկեալ տրնտեսական ,  
 Ի բեզմն ազգին յաճախեն յոյժ 'ի շահեկան :

Ի կովկասու լերանց սառինսն ցրտական  
 Որ ըղբնակչօքն ածէր սարսուռ ինչ զսիական ,  
 Սերմին ջանի .ք առնէ կակղել զանդ գայգեստան ,  
 Լմենեցուն բերել յագուրդըս լիութեան :  
 Վէրբն խոփոյ 'ի սիրտ հողոյն թափանցական ,  
 Բնդ շարաւոյ բերք արգասեաց ետուն մարդկան .  
 Դաշտացն դէմք 'ի զարդ կանաչ պրճնեալ համայն ,  
 Բարբսրութիւնն 'ի բաց թողին ըզմերան :  
 Լերանցն դիրք 'ի նոր անտառս դեղերփնական  
 Բարբատունկ դրախտին բերէր ըղկերպարան .  
 Սօսիք ախորժ հովանաւորք բազմածիւղեան ,  
 Լայնատարած թևովք բաղարիկ բղբօսարան :  
 Ընդր ձօնեալքն անցեալ 'ի վէհ ինչ աստիճան ,  
 Ի վարկ ազգացն երևէին որ սրբազան ,  
 Ընդ ընծայիւր և մեր գիւցսղն Կուշուան ,  
 ԸզՍօսանուէր անուն առեալ վերտառական :  
 Կնտառք որսոց լի երէօքն որոճական ,  
 Վարժըս մարտից հաղորդէին առ ամենայն .  
 Ընդ էր յրստակ անդսրութիւն անմեղական ,  
 Ընդ բընակէր վարք մարդկօրէն բարեկրութեան :  
 Իշխան Մարաց Նիւբար հըսարտ խրոխտացեալ ,  
 Ի յուժանութիւն բազկին 'ի զօրս ապաստանեալ ,  
 Երկու ամօք յառաջ յերկիր Հայոց դիմեալ ,  
 Յաւուրս Հարմեայ ըզմասն ինչ յինքն էր գըրաւեալ :  
 Յորմէ և ևս դիմել 'ի ներքս յորդորս առեալ ,  
 Բստուար զօրօք 'ի յարշաւանըս պատրաստեալ ,  
 Դայլ ծարաւի յանպարտ աղինս մարդախանձեալ ,  
 Ի գիշատումն հօտին դաժան ժանիս սըրեալ :  
 Ըզգայ Արամ ըզկամս նորին զանյագացեալ ,  
 Գունդ պատրաստէ յիսուն հազար զօրացն ընտրեալ ,  
 Որոց մէն մի ահեղ մարտիկ հըսկայացեալ ,  
 Յաղեղն 'ի սուր և 'ի նիզակ կուռըն վառեալ :  
 Ի Նիւբարայ կողմնն դիմէ առիւծացեալ ,  
 Յօտին ներքոյ ածել բազկել զազգն անսաստեալ :  
 Օօրքն ամենայն սերտ խորհրդով միաբանեալ ,  
 Ըզբուն երկիրն 'ի շորթողէն զերծել կանգնեալ :  
 Նոյն և Նիւբար ահեղ բանակ համախրմբեալ ,  
 ՕԱրամն իսպառ նըկուն առնել խիզախս արկեալ :  
 Ըզսահմանս իւր ըստ պիտոյին ամրացուցեալ ,  
 Յանձնապատտան զիւր յաղթութիւնն անշուշտ կարծեալ :  
 Իբրև այսպէս կողմանքն երկու սպառազինեալ  
 Օիրեարս մաշել 'ի սուր 'ի տէգ առատացեալ ,  
 Հընոց ցասման ժամ 'ի ժամէ բորբօքս առեալ ,  
 Վառէր համակ ըզսիրտ զօրաց զարեան պասքեալ :

Միշերոյն ժամք դար ընդերկար անդ համարեալ,  
 Յանկան լուսոյն փայթ 'ի մըթոյն լինել մերկեալ:  
 Շըրջան արեան որ ընդ մարմին զողխս ցանեալ,  
 Աեղէր ըզսիրտ արեաց խըմբիցն անհանգուրժեալ:  
 Դեսպանք մահուն խըմբէ 'ի խումբ սուրհանդակեալ,  
 Ղեպ գուժարկու վազվազէին խընդամըտեալ:  
 Արտաքս ոտոչէր 'ի յանդընդոց վագրըն սովեալ,  
 Լափել զարիւն անդր անկելոցըն տապացեալ:  
 Չար աղջըկան անդ բաղանիս նոր ջեռուցեալ,  
 Կարմըրերփնեան ջուր 'ի հովտին սան եռացեալ,  
 Աորոգ կոչունք հին վիշապին անդ հանդերձեալ,  
 Շամփրով տիգաց խորովք մարդկան անգութ արկեալ:  
 Ղախրեն անգեղք դըժխայինք թեապարեալ,  
 Յանկանեկեաց գիշիցն 'ի հոտ աճապարեալ:  
 Իսկ սիրտ զօրացն ապըստամբիցն 'ի քուն թըմբրեալ,  
 Օանձանց կորուստըն երագեն խիտ յամառեալ:  
 Ահա այսպէս երկու կողմանք յոյժ զայրագին,  
 Արպէս առիւծ ինչ կատաղի մըռմըռէին:  
 Աքք յարշալոյս ձեռն 'ի նիզակ 'ի կապարձին,  
 Յիրեարս ծընունդ մահու անխիղճ անդ երկնէին:  
 Մինչ հըսկային երկնից ընդ ձեմս արշալըրջին  
 Օօրս լուսեղէնս մընայր ցըրուել յերեսս երկրին,  
 Վանել ըշտապ 'ի համբարանս աղջամըղջին  
 Բղըրունութիւն ցայգեայ զօրացըն խաւարին,  
 Ախք վըրիժուց 'ի սիրտ մարակաց զայրանային,  
 Բաղխել սաստիկ 'ի կոտորուած ընդդիմակին:  
 Պատրաստութիւն երկուց կողմանցն ահեղագին,  
 Բոց բորբոքէր հընձել զօրայս մարդկան անդին:  
 Երկու լերինք անդ ընդ միմեանս բաղխեն ուժգին,  
 Հիմնակործանս դըղըրդելով ըզսիւնս երկրին,  
 Ժայռք անմատոյցք մանըր փըշըեալ 'ի հարուածին,  
 Բզվայրըն զայն լընուն բեկորք ապառաժին:  
 Տասպարահարք մայրաւորացն յոյժըս բազկին  
 Հասակաքանց զանտառս առնեն ըզսարոյին:  
 Անշունչ դըրակք անշարժ անկեալք յասպարիզին,  
 Անարկողաց քըստմընականք են սոսկագին:  
 Շողիւնք փայլմանց սուսերամերկ զօրաց գընդին  
 Հըրածգութիւնս երկնից անդէն բորբոքէին:  
 Կոփիւնք հարմանց կատաղելոցն անհընարին,  
 Ի քարանձաւս ահեղաձայնըս գանչէին:  
 Անդր աղաղակ քաջորերոյն 'ի խիզախին,  
 Անտանելի գործէր շըռինդն 'ի բանակին:  
 Աւր նուազումն արանց վատիցն ողորմագին,  
 Հեծել առնէր արիւնաներկ հողոյ գեանին:

Արամ դիւցազն անդ շահատակ գեր ըզնախնին  
 Նախճիրս ածէր յապրստամբաց հուժկու զօրունին .  
 Օերթ հողմ սաստիկ արագ հարուած իւրոյ ձեռին ,  
 Թուժըս մարդկան յերկիր Թափէր անդր 'ի մարտին :  
 Սանգաղ սրոյն 'ի հունձս արկեալ մարդացանին ,  
 Բարդ բարդ զօրայսըն դիզանէր յանդըս դաշտին .  
 Անդր ոսկեփունջ ծիղբ ցորենոյ դալկահարին ,  
 Որպէս խըռիւ տարուբերեալք 'ի ծործորին :  
 Յայսրմ դիպուած գաղթէ Նիւքար հըպարտ հոգին .  
 Որպէս ճընճղուկ 'ի բաղէէ ընդ ծերպ վիմին .  
 Սառչի արիւն՝ լըքանի սիրտն առ երկիւղին ,  
 Բզգոյն մահու յինքն ըզգենու գէմքըն գեղնին :  
 Արագախոյս ընդ զառ 'ի վերսըն դըժուարին ,  
 Վազս արձակէ զօրէն փըցուն նապաստակին .  
 Այլ ընդունայն , զի ոչ ամբոցն ափափային  
 Պահել մընայր 'ի ցասմանէ սէգ առիւծին :  
 Սուր խոյանայ որպէս արծիւ Արամն արին .  
 Չըտայ նըմա ժամ փախըստեանն ինչ 'ի հեռին .  
 Չայն արձակէ ահեղագոչ ձայն զԱրէսին ,  
 « Արձանացիր՝ ասէ , այ վատ արանց չընչին :  
 Կայց տեղի՛ առ , զի՛ խուսափես սիրտ 'ի բըռին .  
 Ոչ դու ես այն խըրոխտ Նիւքար գող մեղացին .  
 Օչաչխարհ Հայոց գաղտուկ շորթեալ քո ըստ մասին ,  
 Յանդըզնեցար բըռնի տիրել և բողորին :  
 Չէր շատանալ քեզ արդեօք պարտ իսկ 'ի քոյին ,  
 Օոր շնորհեաց քեզ տեսչութիւնն երկնից բաժին .  
 Չառե՞ր 'ի միտ զարժանահաս տոյժ Ներբովթին ,  
 Օոր իրաւունքն հատոյց 'ի ձեռն վէհ Նիւցաղին :  
 Բզգաստանալ բարւոք էր յոյժ գալ 'ի յուշին ,  
 Կըռեւ ուղիղ զոր յիրաւանց մեղ հրամային .  
 Վըրէժք այլոց ագահելոցն յինչս օտարին ,  
 Չետո՞ւն քեզ միտս անշեղ մընալ 'ի սահմանին :  
 Արդ զի օցտեալ յընտրութենէն զիրաւացին ,  
 Վէհ երեւիլ քան զամենայն եղեր յանձին ,  
 Բարձրացուցից ըզբեզ տեսիլ 'ի դիտակին ,  
 Անցաւորացն ամենեցուն յիմուճս երկրին » :  
 Օայս ասացեալ պըրկէ 'ի կապ անխըզական ,  
 Անարգանօք յիւրըն բերեալ 'ի կարաւան .  
 Անդ ձայն զերգոց զուարճ հընչեն ըզյաղթական ,  
 Սարդ 'ի պըսակ բողորելով Պետին Հայկեան :  
 Ի Սեղսցւոց յառս և յաւարս լի ճոխանան ,  
 Անդրէն ողջամբ յերկիր իւրեանց փառօք դառնան ,  
 Անդ հրամայէ ցից երկաթի շամփրանըման ,  
 Բնդ Նիւքարայ վարել ճակատն ամբարտաւան :



Անդ էր տեսիլ սէգ վիսկոտին եղջերական ,  
 Ար ուժգնակի ցրնդէր ցրրուէր զուղղոյն աման .  
 Անդ յաշտարակըն պարըսպի Արմաւիրեան ,  
 Անցաւորացն 'ի տես վարսիւր ակն յանդիման ,  
 Տես դու ինձ աստ զերկնից Վեհին ըզդատաստան ,  
 Օխարդ խըստիւ պատժէ ըզխեռ յանձնապատան .  
 Օ, ի որ ընդ ձեռն ածել կամէր ըզՀայաստան ,  
 Մերկեալ յիւրմէն կայ 'ի դըսրով և յամբաստան ,  
 Օ, ի ցՕտրասպ լեռաքն Մեդաց զիւրն երկրաստան ,  
 Տայր 'ի նուաճ Միապետին մեր Հայկազեան .  
 Բնդլայնէին Հայաստանու զիրք և սահման ,  
 Առատաբեր բարեօք փայլէր 'ի ճոխութեան .  
 Գրաւէ Արամ զերկիր յիւրում իշխանութեան ,  
 Եւ հանձարով հաստէ անդ կարգ քաղաքական :  
 Յանձն արարեալ յարի որդիսըն Սիսակեան ,  
 Կալ պատուիրէ 'ի բարեպէս կառավարման :  
 Եւ ինքն 'ի ջանս իւր կալուածին բարգաւաճման ,  
 Անխոնջ տըքնեալ լնու փառօք փարթամութեան ,  
 Բզգունդ զօրաց յոյժ ըստուարեալ 'ի վարժ մըրցման ,  
 Յողորտս երկրի ահ տարածէ ըզպակուցման .  
 Ազգացն առ նա դիմելն ախորժ վաշտկան վաշտկան ,  
 Բզրայնութիւն խըռնէ զերկրին 'ի բնակարան .  
 Ամենեքին փոյթ ժըրաջանք 'ի շինութեան ,  
 Եւ առ 'ի մարտ յաջողաձեռն անվանական .  
 Բնդ այն աւուրս Արբէլ երկրորդ Ասորեստան ,  
 Կերտէ քաղաք առ բըլուր մի ըսա իւր անուան ,  
 Իսկ ոմըն սէգ Բարչամ անուն Բաբելական ,  
 Հըզօր մարտիւ առնու զայն շէն զԱրբէլական .  
 Յայս խրոխտացեալ կազմէ ըստուար ինչ կարաւան ,  
 Քառասնհազար հետեակաց քաջարութեան .  
 Հինգ հազար ևս հեծելազօրս յարեալ ընդ այն ,  
 Գոռ խիզախէ 'ի գերբ երկրին Թորգոմական .  
 Լուեալ Արամ զանսաստ բերումըն Բարչամայն ,  
 Առնու զվառեալսըն իւր յաղեղն և 'ի նըրան :  
 Եւ պատահեալ նըմա յանկարծ 'ի յարչաւման ,  
 Ջընդէ ցրրուէ զայն դումարտակ գազանական .  
 Լեբինք Կորդուաց յորս առիւծուցն էր որջարան ,  
 Եւ բոցաշունչ սէգ վիշապացըն կայարան ,  
 Արդ ճագարաց ցուցաւ ամուր ինչ գաղթարան ,  
 Արոց խուճապ և աղկաղկացն էր ծաղրական .  
 Օ, օրք Բարչամայ վայրավատին ձեպեն համայն ,  
 Յայնս անկանիլ յահէ սրբոյ մերս Արամայն .  
 Բայց ուժգնութիւն Հայոց գընդին անհամանման ,  
 Չըտայ նոցա դուլ և դադար յայն ամբարան :

Հանէ ցրուէ ընդ Լսորւոց դաշտ լայնական ,  
 Ի սուր մաշեալ ըզբաջորեարորն Բաբելեան .  
 Ներկին երեօք դաշտին 'ի յորդ վըտակ արեան ,  
 Լողան 'ի նմին լափլիզականքն լեռնական :  
 Բափրը ձիոց 'ի հոտ մարտին անկուշական ,  
 Մանրէր զոսկերսն տապաստից կիսակենդան .  
 Վայ և եղնկ թաւագլորիցն սղորմական ,  
 Եւ յանդընդոցն 'ի կատաղիս բերէր կական :  
 Ընդ վահրոտեալ Բարշամ յերկիւղ սըրտի լըքման ,  
 Թողու զանկարդ իւր խիզախումն ամբարտաւան .  
 Ի զերծ անձին օցտեալ 'ի բաց փախըստական ,  
 Իբր օդաչու թըռիչս առնէ թեթևական :  
 Թափուած զօրացն յերես դաշտին 'ի փախըստեան ,  
 Որպէս տերևս հողմահարեալս յաւուրս աշնան ,  
 Օրավարին իւրեանց տային ըզթե ջըզջկան ,  
 Թըռիչս առեալ թագջիլ անտես 'ի խորշ մըթան :  
 Ընդ երևէր ոմն Եւսիղաս արագոտնեան ,  
 Որոյ գընացքն ոչ տըպէին 'ի հող նըշան .  
 Կամ Եսայէլ թեթևաքայլ ըստ այծեման ,  
 Յորոյ փախուտ սէպ քարածայռքն դաշտանան :  
 Երին Երամ 'ի ճապողիս անգըր արեան ,  
 Որ ուղիսացան խոխոջաներկն էր Վրկլաթայն ,  
 Ընդ տեսանեին ըզգաղթ նորա զերկեզական ,  
 Վարազախառն ըզհետ պընդի հողմանըման :  
 Չայն որոտայ ըզանթընկէցն Արմըզդական ,  
 Յորոյ սաստից սարսին լերինք հիմնատատան .  
 “Յէ վատ՝ ասէ , ճետ կանացի Բաբելական ,  
 Ո՞ւր խուսափես 'ի պըսակէն քո նախնական :  
 Ընդոյգն 'ի քաջս իմ նախահաւ թորգոմական ,  
 Ինձ ընդ արեան ետ ըզբազուկն անկըրկնական .  
 Ըզհըպարտից հոսել զեղջիւրս գոռօզութեան ,  
 Չըտալ նոցա մուտ 'ի կալուածքն Հայկական :  
 Չէր բաւական քեզ օրինակ ըզգուշութեան  
 Ետուածքն քո և նախահաւ Վամաղնական .  
 Որոյ հասակ մայրօրինակ վաթսընկանգնեան ,  
 Ի կեր օձից յիմումս երկրի 'ի հող լուծան :  
 Չառէր ըզուր բըռնախոյեան իմ պայքարման ,  
 Որովք լըցան յերկիր արհօրք զըմբազական .  
 Մեծ իմն էիր քան զՆիւքար Մեզացն իշխան ,  
 Որ կայ ցայսօր ցից 'ի ճակատ նոր տեսարան :  
 Եւ չէ վայել քեզ ըստ նոցա առնուլ վախճան ,  
 Որ խառնախորդ ծընունդ ես վատ ոչընչական .  
 Ընդամայօշ լեր յաւազուտս անշինութեան ,  
 Ի խաղ մըրջմանց և յորդնակուրս աղտեղական :

Կեանքս խընդրել ընդ ողոր Գոյ յաղերսական ,  
 Ար վայրկենի միոյ կենացն էր անարժան .  
 “ Օ, արմեա՛ ասէ , դըթոտ սրբտինն դիւցաղնական ,  
 Օրնուենդ աղնիւ ժառանգ շնորհաց հայրենական :  
 Շնորհեա՛ ինձ կեանս , զոր այժմ ունիս 'ի քոյդ բըռան ,  
 Ի քէն կախի կենացս արե , քաջիկդ Արամ .  
 Սարտիւ յաղթելն իմ Արբէլայ յայս արկ դարան ,  
 Բնդաբոյսն իմ սիրտ հայրենի արար վիսական :  
 Արդ գիտացի զիմ սիգուծիւն տարապայման ,  
 Բզփորձ առեալ զանպարտ ձեռինն քո արուծեան :  
 Իմս արեուն տուր յիս շողել արդ միւսանգամ ,  
 Յահէ իմմէ մի՛ լըքցի դաշտս այս բաբէլեան :  
 Ահեղ էր իմ Բարշամ կոչումըն վեհազան ,  
 Լիցի՞ մանկուոյն 'ի բանս անուն ինչ վատուծեան .  
 Թէեւ քեղ ո՛չ այլ որք աստ են ցեղ մարդկուծեան :  
 Տուր ինձ խըրոխտ իշխել 'ի փառս իսկ քո անուան :  
 — Չէ՛ ընդունակ քոյ այդ աղերս աղեղնաբան ,  
 Ասէ Արամ մեր և իշխան միահեծան .  
 Գիտեմ ըստոյդ զի քո կորուստ անգրտական ,  
 Ի Բաբելոն տացէ առնել տօն ցընծուծեան :  
 Ես որ հանուրցն եմ իմայնոց պատըսպարան ,  
 Օխարդ ըզքեղ 'ի տոյժ թողից անմեղ մարդկան :  
 Սիրտ խըստագոյն հաստեալ 'ի քեղ և վիսական ,  
 Չըտայ երբէք ըզհետ վարիլ խաղաղուծեան :  
 Մեռցիս դու աստ անգամ անդամ գէշ դըծճական ,  
 Օ, ի յայն երկիր հանգիստ զեղցի անդորրական .  
 Ըտուածըն քո արիւնախանձ 'Է ամբարտաւան ,  
 Իբրև ըզքեղ խընդրէ ըզզոհ հաճոյ ինքեան ” :  
 Օ, այս ասացեալ յօշէ ըզնա անգամ անգամ ,  
 Տըրուեալ ընդ հող և յաւազուտս երիթական .  
 Անդ յորդնակերս ապականի դին անպիտան ,  
 Անդ չորացեալ մընան ոսկերք խըռուանըման :  
 Չէր որ յիւրոցն 'ի լինիլ անդր եղերական .  
 Յաւիլ ումէք չեհաս վասն իւր թըշուառ մահուան .  
 Յաւեաց միայն չար իշխանին գեհենական ,  
 Օ, ի մահ նորա խափան որսոցն արկ դիւական :  
 Արդ հատուցեալ անըզգամին վըրէժ արեան ,  
 Տիրէ երկրին, կարգէ զօրէնս վայելչական .  
 Յանձնեալ 'ի խնամս ընտիր ցեղին կադմէական ,  
 Յայլ ինչ պարապ պիտանեգոյն բերէ ըզջան :  
 Մերս Արամայ նոր աստ ծագեալ օր հանդիսին ,  
 Տայ յարեմուտս փառօք փայլել յոյժ պանծագին .  
 Մուծ բըռնուծեան Կայրստամբաց Քամայ գընդին ,  
 Օ, անդորրուծեան մերժեալ էր լոյս յաղանց երկրին :

Յարե նոցա մեր Միապետ խաղայ ուժգին ,  
 Բարձեալ 'ի թևս իւր զուղղութեան ցոյս արփենին .  
 Քառասնհազար իւր հեռեակ զօրք բանակին ,  
 Երկու հազար ևս այրուձի սերտ ընդ նոսին :

Դիմէ այսու պատրաստութեամբ զօրականին  
 Ի բռնութեանց զերծուլ զերկիր Ասպադովկին .  
 Ընդ Պայաբիս՝ ոմըն Քաղեայ սերունդ Քամին ,  
 Ըհեղ զօրօք գայ 'ի պայքար ընդդէմ նըմին :

Սա բռնացեալ յերկուց ծովուց անդ միջոցին ,  
 Սեոյն ասեմ և Միջերկրեայ Պեղագոսին ,  
 Ի նեղ լըծեալ զորս 'ի նոսա բընակէին ,  
 Ճընչէր իսպառ ըստ Քամայնոց անգութ սըրտին :

Ընդ պատահեալ նըմա Արամ մեր սաստկագին ,  
 Գէշ արկանէ զընտիրս արանց բռնաւորին .  
 Դէզք դիականց խիտ խիտ անկեալ անդր 'ի գետին ,  
 Մայթ մարդկեղէն գործեն յետեղ ասպարիզին :

Իսկ մընացորդք զօրաց գաղթեալ վայրավատին ,  
 Յանձին 'ի զերծ մըտաբերեն սոսկ առանձին .  
 Նոյն և փախուստ Պայաբիսայ 'ի շաւակին ,  
 Բզուունչ առնուլ տայ յԱսիոյ ծովուն կըղզին :

Իսպանայ դիւցազն Հարմեայն փառօք յաղթանակին ,  
 Տիրէ կողմանց Ասպադովկեայ ըստ հաճոյին .  
 Կարգ յարդարէ 'ի շինութիւն բնակչաց երկրին ,  
 Հրաման առնէ բանավարել լեզուաւ Հայկին :

Յազգէն իւրմէ Մըշակ անուն զայր անուանին ,  
 Տասըն հազար զօրօք իշխան կարգէ նոցին .  
 Եւ ինքն անդրէն դարձեալ 'ի կողմն իւր աշխարհին ,  
 Եւս յարդարուն տայ ուղղութիւնս քաղաքային :

Այլք ևս կողմանք երկրին ըղձիւ 'ի նա յարին ,  
 Գան ընդ ձեռամբ 'ի հըլութիւն մեր Իշխանին .  
 Արոց բնաւից տայ ըզվարումըն մարդկային ,  
 Յարդարաշուք փայլեալ 'ի փառս Հայաստանին :

Նորին գործոց հանդէսք այնչափ վեհ երևին ,  
 Մինչև յայլոց յանուն նորա կոչիլ ազգին .  
 Վերտառութիւն զոր ունէր ազգն ըզՀայկազնին ,  
 Լեզուք ազգաց փոխեն 'ի կոչըն յԱրմենին :

Մըշակ մարդպան 'ի գործ եկեալ շինակերտին ,  
 Պարըսպաւոր կանգնէ քաղաք վայելչագին .  
 Ընուն գընէ նըմա կոչումըն զիւրոյին ,  
 Իշխանանիստ գահ յարդարեալ Ասպադովկին :

Օրր անընտել Հայ բարբառոյ ցեղք Գամերին ,  
 Ուղիղ ըզնոյն բերել 'ի խօսս ոչ բաւէին .  
 Ուստի ծեքեալ զայն 'ի Մաժակ կոչ խուժային ,  
 Ետուն 'ի գիր սեպհականել պատմաբանին :

Այս նոր կալուած 'ի մեզ կոչի Հայք Առաջին .  
 Օհ նախ քան զայլս եկն արտաքուստ 'ի մեր բաժին .  
 Այլ զի ապա հետըզհետէ և այլք մըտին ,  
 Երկրորդ Երրորդ Հայք կոչեցան ըստ պատշաճին .  
 Քանզի Արամ ծովէ 'ի ծով ըստ բոլորին ,  
 Յինքըն գրաւեալ ելից բնակչօք հարըստագին .  
 Եդեալ իշխանս և կառավարս առ 'ի բարին ,  
 Հրաման տուեալ խօսիլ միայն ըզՀայացին :  
 Այսպէս ահա Վիւցազըն մեր հըզօրացեալ  
 Օյորով կողմանս երկրին ընդ իւր ձեռամբ առեալ ,  
 Հատ շինութեանց և օգտու թեանց պատճառ կացեալ ,  
 Պատշաճ կարգօք համեստ կենաց ամրացուցեալ :  
 Մանկուէք ըզգաստք ըզհըլութեան պաշտօն պատուեալ ,  
 Արք քաջազունք 'ի դիմամարտս առիւծացեալ .  
 Օտրոց հանձար 'ի խրատ բանի աղբերացեալ ,  
 Կանայք պարկեշտք յառարնին գործսն պարասեալ :  
 Կուստութեան ոգին յերկրէն տարամերժեալ .  
 Վեհանձնութիւն զաթոռ իւր անդ հաստահիմնեալ .  
 Գատարկութեան կարիք համակ դատասարտեալ ,  
 Գործասիրաց արդիւնք առաա բեղմնաւորեալ :  
 Աինոսըն մեծ Ասորական գահ յաջորդեալ ,  
 Օլթուր քաղաք նոր յիւր անուն պայծառ կերտեալ .  
 Օրւժեղ մանկունս բարեհասակս համախըմբեալ ,  
 Ի զինաշարժ հրահանգ վարժել խընամս տարեալ :  
 Աւստի անթիւ կրթեալ զօրաց գունդ պատրաստեալ ,  
 Մինչ 'ի Հընդիկս և Ազգիպտոս գոռ խիղախեալ .  
 Ի հին մատեանս ըզՀայկըն մեր երբ ընթերցեալ ,  
 Ախահաւուն իւր Նեբրովթայ սպանօղ գըտեալ :  
 Գայ 'ի զայրոյթ անհընարին գաղանացեալ ,  
 Դիմել 'ի Հայս գաղգն 'ի միջոյ խաղառ ջընջեալ .  
 Ո՛վ այն այն՝ ասէ , ծընունդ անարդ դիւցաղնացեալ }  
 Անմահ հաւուն իմոյ Քէլայ ոսոխ կանգնեալ :  
 Կամ ո՛վ Արամ այն նորուն զարմ ընդարձակեալ .  
 Ի յազգայինս մեր յաղթութեան հանդէս առեալ .  
 Ազդեցից զերկիր նոցա յարիւն յորդեալ ,  
 Յագցին սուսերք մեր ծարաւիք զովս ընկալեալ :  
 Աւագանին իւր սերտ ընդ սերտ զգուշացուցեալ ,  
 Տան նահանջիլ 'ի խորհրդոյն յառաջագրեալ  
 Օհ մի համբաւ իւր առ բազումս պերճ հըռչակեալ ,  
 Գայցէ 'ի լեթ յայսրմ մասին յոյժ վատթարեալ :  
 “ Քո զօրութիւն , ասեն , բաղձօք բարգաւաճեալ ,  
 Ի Բակորիա և 'ի Հընդիկս հըռչակ հարեալ .  
 Թէ Արամայ յուժոյն լիցի անդ ներգեւեալ ,  
 Օհնչ քեզ սարձանք յանշուք վախճան կայցէ գաղեալ :

Յայտնի են քեզ առ 'ի նմանէ գործ վըճարեալ,  
 Որովք զբազուկս իւր տարածեաց յազգ հեռացեալ:  
 Արկուն արար ըզբռնութիւնս զապրտամբեալ,  
 Խաղաղութիւն բաշխեալ որոց յինքնն յարեալ:

Իւր քաջութիւն ընդ միասիրտ զօրաց սերտեալ,  
 Անշուշտ յաղթող հանդիսացի ըզբոյգ ընկճեալ:  
 Հան 'ի սրտէ զեռանգ ցասման քո բորբոքեալ,  
 Շահեա 'ի սէր զայրն հըղօր վեհաղնացեալ”:

Յայտըմ բանից ըզգուշութեան յուշի եկեալ,  
 Եւ յարութեան գործոց նորա զահի հարեալ,  
 Խաղաղութիւն և սէր ընդ նա անլոյծ կապեալ,  
 Երկրորդ իւր գոլ և բազկակից պայմանադրեալ:

Աստ Արամայ մեր դիւցազնն շուք պարծանաց,  
 Յօլորտս երկրի արփիահրատ փայլատակեաց,  
 Երկրորդ լինել գոռ արքայից նախագահաց,  
 Բզվարսակալ փողփող կրրել 'ի մարգարտաց:

Ի եառն Արագած 'ի գով նորա ուժգին հընչեաց,  
 Բզբրաբիոն բերեալ անտարտ իւր մըրցանաց,  
 Օանմահ անուն նըմա գըրեն հըմայք սօսեաց,  
 Յիշուած անմոռ յարաբերեն մատեանք ազգաց:

Սոյն այս Ղիւցազն յայսքան հանդէս միայն մընաց,  
 Յեւ պարծելիս 'ի փառս ազգին ոչ յուռաջեաց,  
 Կարի շատ են զոր իւրայնոց բերս յաճախեաց,  
 Եւ յոգնագոյն բուռն գոռողք զոր ջսխջախեաց:

Թէ զամենայն 'ի վէպ առցուք ըստ արժանեաց  
 Բզայկազուն արանցն ըզգործս փարթամ բարեաց,  
 Բանիս ընթացք ճեպէ յերկար ճառից դիզուած,  
 Սեր կարճաբան քերթողահօր է ասացուած:

Արդ յայսանակ պայծառութիւն վեհաղնական,  
 Յոյժ գերակայ փառաւորեալ ըզայաստան,  
 Գայ և նըմա ժամըն հանուրց հուսկ 'ի վախճան,  
 Յորում յերկրէքն անդրէն յարգանդ մօր յըղանան:

Իւր ծերութիւնն արծաթափայլ ալեծածան,  
 Բոլորակեալ զայտիւքըն գիրգ և գեղազան,  
 Կորով ուշոյն սուր և ազգու 'ի խորհըրդեան,  
 Ի շահեկան գիւտըս վըսեմ և բեղմնական:

Յիսուն և ութն ամօք վարումն իշխանութեան,  
 Չէ առ յիմիք արատ կեղտոյ ինչ սըխալման,  
 Ուստի և արդ յերկրէ աստի 'ի հրաժարման,  
 Այն հանճարով կարգէ որ ինչ ըզկընի գան:

Կոչէ առ ինքն որ իւր էին խորհըրդական,  
 Բզկին, զորդիս և զընտանիս իւր զամենայն,  
 Ի ճառ արկեալ զյորդորակս 'ի վայելման,  
 Օրինակ զայս ամենեցուն բերէ ըզբան:


« Աւաղորեալք իմ քաջափոյթք 'ի բարեաց ջան .  
 Ասխ ձեզ ասեմ որ ինչ առ ժամս է պիտեան .  
 Ի ուր էք բազուկ այս տէրութեանս միահեծան ,  
 Ի ուր բերդ ամուր բընակելոցն յայս երկրաստան .  
 Թէ միութիւն ձեր պընդակապ է ընդ իշխան ,  
 Չէ որ որ ձեր բարւոյ իմիք արկցէ խափան .  
 Յամենայն իրս յառաջ խաղայք աներկեան ,  
 Իրժնեայ պարեխք 'ի ձեր հանդէպ հարթ դաշտանան :  
 Գոհ եմ ըզձէնջ յայսքան գործածս արիական ,  
 Ար ոչ ցայս ժամ ցուցիք յիմիք սիրտ վատութեան .  
 Չեր արշաւանք 'ի դիմագրաւ խիղախութեան ,  
 Բազում պըսակս ինձ մատուցին պետիս Հայկեան :  
 Աւղևորեալ իմ արդ ըզհարցըն պողոտայն ,  
 Անդարձ մեկնիմ առ 'ի տեսոյ զգալի ական  
 Բայց կամ հողւով ընդ ձեզ յաւէժ իսկ անբսժան ,  
 Կան և արարք իմ ակներև ձեր յանդիման :  
 Յուշի լերուք միմեանց կացէք սերտ միաբան ,  
 Օ ի այսքան ջանք ձեր մի լիցի ինչ ընդունայն .  
 Գիտէք ըզսէր անհուն բարեաց գոլ գանձարան ,  
 Յայն հաստատուն կալ ջիք զանձինս անդըրդուական :  
 Գիտէք նաև զատելութեան զեղծիչ տուգան ,  
 Մի բընաւին տաջիք ըզսիրտ նըմին կայան .  
 Արով պատիւ տանըս Հայկայ արևանման ,  
 Աշէջ ցոլումն ծաւալեսցէ յաշխարհ համայն :  
 Ահա Արայ ծընունդ վեհազն և գեղազան ,  
 Բնդ գեղ դիմացն և սիրտ առատ ունի յինքեան .  
 Այժ քաջարի ընդ հայրենին ձըգեալ արեան ,  
 Չեզ միապետ 'ի դըժուարինս բըռնախոյեան :  
 Հըսու կացէք որ 'ի նմանէն բարեաց հրաման .  
 Օրէնք նորա ձեզ միշտ կացցեն ընդունական .  
 Աջակցեցէք նըմա 'ի մարտ վաւերական ,  
 Վանել զոր յեղծ անդորրութեան երկրիս փութան :  
 Խընդակցեցէք նաև 'ի ցինձ վայելչական ,  
 Ի զքօս և յորս՝ որ քաջացն է պատշաճական ,  
 Բզգործ երկրին մի լըքանէք իբր անպիտան ,  
 Օ ի նա հանուրց մայր է առատ և ճոխարան :  
 Թէ կան դեռևս սահմանք տեղւոյ ինչ անդարման ,  
 Չեր ժըրութիւն ձեռաց լըցցէ 'ի տոհմական .  
 Յուղղոյն երկրի պարարտութիւն ձեզ մարմնական ,  
 Եւ 'ի շնորհաց երկնից ճոխանք ձեզ հոգեկան :  
 Եւ դու որդեակ իմ գեղազէշ անզուգական :  
 Կուն զօրացիր լինել ուշիմ և խոհական .  
 Միբեա՛ ըզքոյսդ յըստակ սիրով ընտանեկան ,  
 Պատուեա՛ զալիսըն հինաւուրց որպէս արժան :

Գործ՝ որ արդ քեզ յանձրն լինի իշխանական ,  
 Գիտեա՛ն , զի տուրք է երկնաւոր առատութեան .  
 Որ ետ զարդիւնս խրնդրէ նորին ըզշահեկան ,  
 Եւ զոր վատնէն՝ մերժէ յանլոյս խոր կապարան :  
 Մի՛ տիրեսցեն ՚ի քո վերայ կիրք անձնական .  
 Օղզին բարին մի՛ փոխարկեր ընդ մասնական .  
 Համակարիք լեր անկեւոցն յանպարտ վրդեան ,  
 Խրնդրեա՛ն վրէժ յորոց զըրկենն անգըթական :  
 Ի բարկութեան մի՛ տար վրձիռ թէև պատկան .  
 Բարւոք կըշուեա՛ն ըզպարագայս՝ որովք յանցեան .  
 Յիրաւանց դատ որ ճըշդըրտիւ գայ յերևան ,  
 Յայն հակեսցի մէտ կըշուորդի քոյոյ դատման :  
 Մի՛ նընջեսցես ըզթըմբըութիւն անհոգական ,  
 Յորժամ պէտք են ըսթափի և ժիր ըզգաստութեան :  
 Մի՛ պարապիր յոչ արժանիս դիւցաղնութեան ,  
 Օ՛ի մի՛ պարճանք խաթարեսցի քո նախնական .  
 Գիտեա՛ն ըստոյք , զի զօրաւոր է դատաստան ,  
 Որոց փառաց տուաւ պաշտօն վեհաստիճան .  
 Մի՛ չարակներ յայլոց բարխըն սեպհական ,  
 Օ՛ի կատաղի ախտ է անձին խանձողական :  
 Փառք ըզմարդոյ զգեցըն՝ յարարս քո ամենայն .  
 Մերկեալ իսպառ՝ յորոց են գործ անբանական .  
 Հայր կարգեցար հասարակաց կառավարման ,  
 Ըն ամենայն ցուցըիր ըզքեզ գորովական :  
 Յիշեա՛ն զնախնիս քո զարժանիս անմոռ յիշման  
 Ի բանս ՚ի գործս նոցա ջանա՛ն լինել նրման .  
 Եա զի՛ յաճումն են յաւէտ իրք կենցաղական ,  
 Յառաւելլուլ գնն գործեսըիր յորս այժմըդ կան :  
 Ըն ՚ի բարւոք կառավարել զգործ պետական ,  
 Բարձրագունից պէտք են խոկմանց և խորհրդեան .  
 Իեզ զի եհաս առաջնորդել ազգի մարդկան ,  
 Չէ՛ ՚ի մանուէս ունիլ պատաղս ըզբաղական :  
 Ընձամբ առնել զորս են մանուէք յիրողութեան ,  
 Տայ թարթափիլ միայն յարարս ներկայական .  
 Սպառէ զոգին ՚ի մանրախոյզ քըննողութեան ,  
 Թողեալ անգործ ըզկարեւորն և ըզպիտան ,  
 Ընտրեա՛ն դու քեզ արս յաջողակս ՚ի պաշտաման ,  
 Ի գործ կարգել մասնաւորացըն կատարման .  
 Լեր արթնասիրտ համար առնուլ յոյժ ճըշտական ,  
 Եւ յանդորրու կացցէ աթոռդ միահեծան :  
 Սիրեա՛ն զեղբարս քո համարիւն և դիւցաղնեան .  
 Մի՛ տըրտմեսցի յիմիք նոցուն սիրտ քընքշական .  
 Ընսպէս վարեաց , զի գբև գայցեն ամենեքեան :  
 Եւ զօրասցի բաղդ քո հըզօր և անկործան :



Բազմօք լուեալ է քո յառաջ զայսպիսի բան .  
 Եւ այժմ ահա երկրորդեցի ըստ բաւական .  
 Տուր զունկն 'ի լուր , դիր 'ի սրբափղ հաւանութեան ,  
 Երգիւնք գործոյդ պըսակեցեն յոյժ բարեզան .  
 Մայր քո գըթոտ 'ի սրխալմուէնս քո մանկական ,  
 Բնդ ջինջ արեան ետ և չքնաղ քեզ կերպարան .  
 Մի մոռացիս զառ քեզ վաստակսն ըզտըքնութեան ,  
 Արով հասոյց յաւագոյթ յայդ տիտանական :  
 Կալ 'ի պատուի , հանգն ըզսիրտն աղնուական .  
 Ար թողու արդ որպէս տատրակ զիւր վարուժան .  
 Չէ փոքր տոյժ , թէ երախտիք ծընողական  
 Ա՛ջ ընկալցի ըստ արժանւոյն սէր 'ի փոխան " :  
 Յայսպիսի բան Դիւցազն ըզգօն անդ ճոխ ղեղեալ ,  
 Ի շունչ վերջին գայ հանդարտիկ ընկողմանեալ .  
 Յառոյգ անդամսրն թալիութիւն մահու սրփուեալ ,  
 Բզլքճարման 'ի կենցաղոյս կէտ համբուրեալ :  
 Ա՛ւր այն լեզուն որ այժմ հարուստ պերճաբանեալ .  
 Ա՛ւր այն բազուկք յանթիւ քաջաց արիւն ներկեալ .  
 Ա՛ւր Տիտանեան հասակ կը շիռ վերուղերձեալ ,  
 Ա՛ւր սիրտն առատ յազանց կարիսն օժանդակեալ .  
 Ժանիք մահու խորտակեցին յանգործս եղեալ .  
 Ա՛ջ ևս Երամ , յորմէ աշխարհ յահի սարսեալ .  
 Կըլսու երկիր զահեղ դըրակըն դիւցազնեալ ,  
 Օ անուն միայն թողեալ անմահ մատենագրեալ :  
 Ընդ կոծ սաստիկ յեղերականս սըգազգեստեալ ,  
 Ճիչ և կառանչ աղաղակի դըզուրդ արկեալ .  
 Իւրքն ամենայն յաղետոչոր սուգ վարակեալ ,  
 Աղբ ցաւագին ըզցընծութիւն սրբափ մերժեալ :  
 “ Եւուրք կենացդ արև էր մեզ մետուղփացեալ  
 Եսեն բընաւքն , յարտասուաց հեղս գետահետեալ .  
 Վեհանձնութիւնդ 'ի դըժուարինս խըրոխտացեալ ,  
 Տայր հեծելոցդ զալիս կոխել ըզլեռնացեալ :  
 Երհօր էր ոյժ քո զօրութեանդ՝ որոց հեստեալ .  
 Սիւն ոսկեղէն քո տեսութիւն զօրացդ հաստեալ .  
 Ընուանդ միայն երկիւղ զաղինս ցընդէր խըմբեալ ,  
 Մեք առանց քո այժմիկ անզօր եղեաք լքեալ :  
 Լայ Երագած զ՛շխանդ իւր մեծ զանդարձ մեկնեալ .  
 Աղբս առնուն դաշտք ըզզարդ իւրեանց նոր կորուսեալ .  
 Տերեաթափ սըգան սօսիք անշքացեալ ,  
 Օ ի ըզՏընկողդ նոցին եհար հողմ հըրացեալ ” :  
 Եզա սղոց տըխուր ջայլից գաղար տուեալ ,  
 Գան 'ի թաղումն յոյժ փառաշուք կարգաւորեալ .  
 Յաւանդարան շիրմին ըզգոյշ իմըն գանձեալ ,  
 Յորմէ յառնել կայ անկորուստ՝ որ հողացեալ :

Քրիստոս թեանց իւր նըշանակսն արձանակեալ,  
 Պայծառ գովեստ ընդ եղերերդս ներդաշնակեալ.  
 Օղջոյն վերջին դիւցազնակիր յարկին ձօնեալ,  
 Դառնան կարգել ըզնոր իշխանն որ նըշանեալ:  
 Այս աւասիկ մերս Արամայ շուք փառադնեալ,  
 Յայս տըքնեցաւ միշտ անվեհեր շահատակեալ.  
 Քրիստոս ազգին առ ընդհանուրս փայլեցուցեալ,  
 Օրկրին հանգիստ ՚ի թըշնամեացն ապահովեալ:



# Հ Ա Ն Գ Ի Ս

## ԱՌՆԻՄՈՒՄՆ ՄԵՐՈՅ ԱՐԱՅԻ

ԵՐԳ ԵՐՐՈՐԴ

## ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԱՐԱՅԻ

ԳՆՈՒԽ ԵՐԵՔՏԱՍԱՆ ԵՐՐՈՐԴ

Յ Ե Տ կատարելոյ ըզհանդէս թաղման Արամայ վեհին ,  
 Բաղմսխումբ ատեան անդրէն բոլորեն որեարք աշխարհին .  
 Յառնէր ոմն 'ի մէջ այր ճարտարաբան 'ի տանէ Հայկին ,  
 Բանս 'ի մէջ առնոյր զոր դէպք եղելոց բարբառիլ տային .  
 “Դուք աւանդորեարք իշխան էք , ասէր , յերկրիս կալուածին ,  
 Բաղմամարտ արքնեալ 'ի շինուած չքքեղ Հայկեան սահմանին .  
 Դիտակ էք փորձիլ զոր ինչ մեր նախնիք գործ կատարեցին ,  
 Օխարդ բաղմամարդ ազգաց սերընդ ովք հարուստ գործեցին .  
 Նոյ մեր նախահաւ աստ կեանքս վարեաց իւր զազատածին .  
 Յետ որոյ և այլք 'ի զսորդ աշխարհիս ընդ քիրտըն մըտին .  
 Իսկ Միւցազըն մեծ պայծառ պրսակեաց քան զամենեսին ,  
 Արուժեամբ բազկին լայնեալ ըզպատիւ Հայաստանս ազին .  
 Ապա և այլք ևս 'ի նոյն վաստակեալ յերկուսնս բարեգին ,  
 Յոգնածին զարմից չքքնաղ ճեմարան ինչ յարդարեցին .  
 Իսկ որ մեր էր հայր Միւցազն երջանիկ փառք Հայաստանին ,  
 Տեսէք իսկ աչօք քանի՞ բարձրագոյն գըտաւ 'ի բաղդին .  
 Կանգնեաց ըզբաղաքս յօրինեալ կարգօք կիրթ զօրականին .  
 Վանեաց ըզնեղիչս , մերժեաց զապրստամբս , զերծ ըզհայրենին .  
 Պոնտոսք և Բամիլքք և որ այլ բընակ Միջերկրականին ,  
 Ի ծովէ 'ի ծով ջիրդ ըզհայացի լեզուաւ խայտացին :  
 Արդ այժմ և ճընունդ նորին հրաշագեղ պատկեր երկնային ,  
 Ունի տիրանալ յոյժ արժանապէս հայրական գահին .  
 Աչ ինչ յերկուանամ ընդ ազնիւ արեան և սիրտ Քաջազին ,  
 Յիւր չքքնաղ դարպաս մարմնոյն զետեղեալ յաւէտ պանծագին .  
 Սիրտ հօր 'ի նրմա մեծագործ փայլէ յօգտաւէտ բարին .  
 Եթէ միասիրտ յարեցուք 'ի նա գործել զարժանին ,  
 Չեռն միայնակ տեսէք ծափահար 'ի պարս կաքաւին .  
 Կամ քար անշաղախ ըզպարիսպ կանգնել ամբական բերդին .

Մեծ է զօրութիւնն որպէս և գիտէք մեր Միապետին ,  
 Բայց ևս զօրացի եթէ և մերքն իսկ նրմա կըցորդին .  
 Եկայք հաստատուն դաշն կըռեսցուք ուխտ զանջըրեւին ,  
 Կենօք և մահու մընալ անբաժանն 'ի վստակ օգտին :

Առջիք օրինակ սերտուր պընդեալ ըզկար գեռկըղին ,  
 Որ մերժէ զխըղիւն թէև բազմագոյնք ձըկտեսցեն ուժգին .  
 Գըտցի՞ ոք երբէք մեր քաջորերոյ ընդդէմ կալ ուժին ,  
 Երբ միասըրտեալ ախոյեան ելցեն թըշնամեաց գընդին " :

Յայս բան միաձայն զանքակ միութիւն ուխտեն յատենին ,  
 Սըտերիմ հոգւով ճըգնիլ 'ի նըսրաստ նորոյ իշխանին .  
 Միամիտ սըրտիւ անսալ և գործել որինչ հրամային ,  
 Որով փայլեսցին փառք և ճոխութիւնք Հայկոյ նահանգին :

Աս ընդարձակէր սիրտ ամենեցուն յաշխոյժ ջերմագին ,  
 Մերժել ըզսառնոյթ զոր սաստիկս ազգեաց վախճանն Արամին .  
 Շըքեղըս կազմեն ըզհանդէսն անդէն յԱրմաւիր շինին ,  
 Օարդ վայելչութեան ըստ դարուց նախնեաց գործեալ անդըստին :

Գահըն հայրենի գիրկս արկանելով անդէն առ նրմին ,  
 Ի ծունկըս բերէ կեցցէ՛ մեր իշխան գոչել խըմբովին .  
 Օեղու ցընծութեամբ անու շակըն կիրք հըրճուանս 'ի նոսին ,  
 Գուշակել ըզճոխ բարձրութիւն 'ի փոռս կողմանցն ադենին :

Օառուտք վարսագեղք պըսակ բոլորեն յոսաց դաբնային .  
 Նըշան գըթութեան ճեղ մըշտագալար ձօնէ ձիթենին .  
 Կոտայցըն վըտակք ծաղիկ գերերփնեն 'ի բոյր հեշտագին ,  
 Օմայլումըն խըմբին կոյտառըս կոյթէ 'ի պարս հանդիսին :

Խոխոջք Արասխայ 'ի գեղածիծաղ վէտս աստարիղին ,  
 Չիարձակ ճեմէր զըղջիւն գըրընդել 'ի քարավաղին .  
 Քասաղ Ախուրեան ընդ Հըրազդանայ կըցորդք 'ի բաղդին ,  
 Յընծակից փարմամբ ականն ադինայ գիրկս արկանէին :

Օ,ի Միւցազըն քաջ գահերէց բաղմեալ յայնմիկ սահմանին ,  
 Շըքեղել ունէր հարուստ շինուածովք զափունըս նոցին .  
 Ուր բազմամարդեալ հովոաց սուղմունք յառուաց գետածին ,  
 Նախաբուղիս ական բեղմնաբեր զառաջըն պըսակէին :

Այրուձի զօրացն հանդէս յորդարեալ իբր 'ի բանակին ,  
 Անվէր արշաւեն ըզմիմեամբք եկեալ նիզակ 'ի ձեռին .  
 Կոփիւնք վահանաց գոռ նահատակաց նուադ էր հեշտին ,  
 Քաջագործ խաղարկ նըշան ինչ յաջող յաղթական բաղկին :

Անդ և հետեակք գունդ գունդ 'ի պայքար խաղու խըմբակցին ,  
 Շառաչմամբ նետից զապարանս Հերայ գըղըրդեն ուժգին .  
 Յորմէ շըրտու ցեալ ցոլածոյ զօրաց ցերեկեայ պետին ,  
 Յայդ հովանաւոր ըզմիջօրէիւն առնեն 'ի դաշտին :

Յազգախումբ հանդէս բաղմեալ արժանեօք յաթոռ պետական ,  
 Իսկ և իսկ ըզկարգ հաստել թեարկէ նորասքանչ վարման .  
 Կացուրդ բազմահոյլ խըմբեալ յաւադացն յընդարձակ տտեան ,  
 Խօսի տիրաբար որինչ 'ի ժամուն երևէր արժան :

“ Ազնաւ իմ որեարք հայրենի գահիւ յայս մեր երկրաստան .  
 Ո՛ւնկըն մատուցէք խորին խորհրդով, զոր ասեմս 'ի բան .  
 Լ'նմահ Տեսչութիւն՝ որ զիս բարձրացոյց յայս գահ տիրական ,  
 Նոյն և տայ խօսիլ զի՛նչ պէտք են խօսիլ յաշխարհիս օձան .

Սարմնոյ քաղաքի որպէս և գիտէք գըլուխն է իշխան .  
 Իսկ այլքն ըստ կարգի օգտաւէտ անդամ նըմին միաբան .  
 Որ հաստեաց զիշխանս Իսկութիւնն աննենգ յաւիտենական ,  
 Կարգ զայս հաստատեաց ըստ անձին չափել զհասարակութեանն .

Գըլուխ բարձրագահ 'ի վեր բոլորեալ արքայանըման ,  
 Թանց զգայարանաց զընդակ է մըսոյ իմիք անպիտան .

Յայս տիպար առջիք և զոր միապեան է անօգնական ,  
 Ուժամթափ լըքեալ անկար 'ի բերել բարեաց տոհմական .

Չէ 'ի ձէնջ թաղուստ մեր այս աշխարհի փառքն ըսկըղընական .  
 Լաւագոյն գիտէք յի՛նչ առիթս եկաց ցարդ ևս անասան .

Ընդոյն հայրենին վարել զուժգնութիւն ձեզ կայ ապաստան ,  
 Թէ յակաստանի մընալ կամեսջիք զամթոռս այս Հայկեան .

Կապ անխըզելի հոգին պետութեանց մայր երջանկութեան ,  
 Խընդրէ ըզձեր սիրտ պընդել անփեռեկ յաննենգ միութեան .

Կալ մընալ ընդիս յօդեալ 'ի վաստակ երկրիս շինութեան ,  
 Եկամուտ նեղչաց ազգիս քաջալանջ կանգնիլ ախոյեան .

Օ, ի ձեր իսկ սւխախւք զիս այժմ ընկալեալ գահըն նախնական ,  
 Պարտս անհրաժեշտ զընէ աշխատիլ 'ի գործ շայեկան .

Լ'նդորրել զերկիր 'ի վըրդովմանէ չարաց կեղեքման ,  
 Խոր խողաղութիւն հիմնեալ ընդ հանուր աստ 'ի Հայաստան .

Լ'րդ՝ թէ սչ գըլոցի ձեր բազկակցութիւն ընդիս սըրտական ,  
 Իցէ՞ ինձ հընար բարեքել պատուով զհիմունս լաւութեան .

Իուք այս տէրութեան սիւն անգըրդուելի խարխիս ամրութեան ,  
 Չեօք պիտառնութիւնք երկրիս յաջողակ առնուն ըզվխսձան .

Ուխտեցէք աստ ինձ ուխտ երգմընակուռ հաստատուեն պոյման ,  
 Գործոց աշխարհիս իբր անձնականին կալ 'ի հըլութեան .

Օ, ի և յիս գայցէ հանձար բարձրագոյն խորին խորհրդեան ,  
 Կարգել ըզներկայս ընդ որս առ յապայն ծընցին յերևան .

Օ, ի ուշադրութեան սուր ազդեցութիւնք խըրթնի խամբանան ,  
 Թարթափմամբ զորովք և այժմ աստ մանուկք են և մասնական .

Սինչ պետն ըզհամայնն ինքնին կատարել ըզդեցցի ըզջան ,  
 Շատք յօգտաբերացն և 'ի պիտանեաց զերևին խափան .

Բաջ նըկարագրի գործոց զիւցաղանց 'ի պատկերատան ,  
 Տըպին գաղափարք յաւէտ գերաբունք և վըսեմական .

Ըզդու թափանցէ երևակոյմամբ 'ի դարս յամենայն ,  
 Ըզվաղութաղեալն 'ի վիհս անցելոց աձել յանդիման .

Արծարծ ներկերանգք՝ որ յայլոցըն ձեռս են պատրաստական ,  
 Սատամբ նըկարչին տան հողացելոց տիպ կենդանական .

Համեմատ կըրիցն բերեն 'ի պատառն և ցոյց բաղաղան ,  
 Ի լոց 'ի ծիծաղ 'ի խաղս 'ի ծըմբանս փոխեալ զուրուական .

Ի սոյն ինձ առջիք ըզպաշտօն ազգաց քաջ կառավարման ,  
 Թէ կամք են պետին ըզպարծանս տոհմին չրտալ խաթարման .  
 Տըքնի նա յաւէժ 'ի խոր մըտածմունս գործոյից համայն ,  
 Բայց առ յաջողուածս ոչ է անկարօտ օգնականութեան :  
 Իմ կամք են այժմիկ ըզկարգն որոշել յատուկ պաշտաման .  
 Տալ ձեզ ըստ կարգի գործոց տեսչութիւն զհասարակութեան .  
 Որով դուք ընդիս նոյն և մեք ընդ ձեզ միասիրտ հաւան ,  
 Հետ և բարեշուք փայլեսցուք 'ի փառս յերկրիս Հայկազնեան :  
 Անցնիւք որ 'ի մէնջ հոգացի սիրով զիւր վայելչական ,  
 Բզիառս և զօգուտ ազգին իւր կալեալ ջանից դիտարան .  
 Պահեսցուք զերկրի մեր բընակս յիրեարս հաշտ և միաբան ,  
 Լըցցուք և զանչենս շքեղ շինուածովք բնակութեան մարդկան :  
 Թէ որ 'ի խիզախ ելցէ յարտաքնոց ընդ մեզ պայքարման ,  
 Համարձակ ելցուք ջարդել ընդորայն յոյն եղեգնական .  
 Մի ագահեսցուք 'ի յազատութիւն այլոց սեպհական ,  
 Մերս առատապէս բերէ մեզ պատիւ ճոխ և բաւական :  
 Որք կանրն ըզմեօք այլևայլ ծընունդք տոհմից մարդկութեան ,  
 Եղբայր են իսկ մեր 'ի միոյ հողոյ ծընունդ բանական .  
 Ի կարիս նոցա ցուցցուք ըզխնամս երբ 'ի խընդրել գան ,  
 Օանիրաւ նեղիչս նոցուն վանելով ուժով պընդութեան :  
 Այսպէս շահեսցուք և ըզսիրտ նոցա կալ խաղաղական .  
 Դոխանք աշխարհիս չարկցէ ըզնորօք հոգի յաչաղման .  
 Թէ պէտ և նոցա չիք այն ուժգնութիւն գալ մեզ 'ի խըժգան ,  
 Բայց որոց կամինն , խոճիճ կարգեսցեն 'ի բաց խըրտուցման :  
 Առցուք 'ի հրահանգ և զերկրիս մանկունս յաջողակ մըրցման .  
 Ի մատաղ տիոց արբցեն ըզհոգի գոռ շահատակման .  
 Փոխան սընտի անօգուտ խաղուց նոցին մանկական ,  
 Յերագ շարժութիւն ջըլաց պընդեսցէ վարժըն խաղմական :  
 Իսկ զորս չեն 'ի դէպ 'ի մարտից տարժանս վատքն յարիութեան ,  
 Յայլ գործոց 'ի պէտս կարգեսցուք յերկրիս բարեաց պիտեան .  
 Բնութիւն հանճարով չարար զամենայն առ մի զուգական ,  
 Իւրաքանչիւրոց պաշտօն յարմարեալ ըստ բարուց բեղման :  
 Վաստակն երկրագործ չէ վորժ ըստորին յարգասիս բեղման .  
 Մի և առաջինն 'ի կարեորացն է պիտանեկան .  
 Յուցցեն և նորա զուժգնութիւն հոգւոյն 'ի մըշակութեան ,  
 Եահաբեր անգամ մեր այսմիկ եղեալ զարմիս Արամեան" .  
 Արդ այսու կարգաւ նորոգ Միապետն հանդիսաբանեալ ,  
 Խայտայ անդանօր սերտ հաւանութիւն 'ի խըմբին հընչեալ ,  
 Ուխտ անջըրելի երդմամբ 'ի միջի կըռեն հաստատեալ ,  
 Կենօք և մահու կալ անանջըրպետ միասիրտ ճըգնեալ :  
 Առ մէն մի պաշտօն զարբս պիտանիս անդէն որոշեալ ,  
 Կարգէ հաստատուն 'ի գործ աշխարհին ինքեան վիճակեալ ,  
 Հըրաման ազգու որոց ընտրեցան հաստատուն տուեալ ,  
 Եռանդնոտ որբտիւ յարգել ըզպաշտօն ուղիղ պաշտակեալ :

Ե Մի՛ ձեզ տիրեսցէ՛ ասէ, թըմբբութիւնն անհոգս արարեալ.  
 Մի՛ գրրաւեսցեն ըզձեզ աչառանքն ՚ի թիւրս առածեալ.  
 Կառավար կացիք ձեր համատուհմից յերկրիս բընակեալ,  
 Ի գութ ազգային կալ ջիք զամենայն բարւոք տընտեսեալ.  
 Ի գատ զըրկելոց անշէղ դիտեսջիք զերաւըն վըճուեալ.  
 Յիրս երկբայականս մի՛ փոյթ վաղվաղէք ըստ բաւին բընեալ.  
 Գահալէժ գատման ուղիղ երևոյթ գէպք է պատահեալ,  
 Ընհամար խելացն է լինել անզուսպ յորս ՚ի խոկ առեալ.  
 Գործոցն առտընին փոյթ կալ ջիք լինել բարւոք յարգարեալ.  
 Ըլելորդք ծախուց հաստատ օրինօք ՚ի տանց արտաքսեալ.  
 Մարդիկ ամենայն յօգտաւէտ երկունս գայցեն պարապեալ,  
 Մի՛ վայր ինչ գետնոյ անգործըս լըքցի խոպան կոշտացեալ.  
 Ի երինք և բըլուրք ոսկեփունջ հասկօք զեղցեն ատոքեալ,  
 Հեղգութիւնն իսպառ ՚ի մեր այս երկրէ կացցէ վըտարեալ.  
 Սընուենդըն խաշանց նախրացն անգէոց զօրասցի յարգեալ,  
 Խայտասցեն գառինք գունդ գունդ ՚ի ըստինս մարցըն խրախուսել՝.  
 Ըզգու հրամանին գործով կատարումն իսկոյն պըսակեալ,  
 Ըյր իւրաքանչիւր յիւր անդր ՚ի պաշտօն աչալուրջ տըքնեալ.  
 Ընդ էր տեսանել զողջոյն Հայաստան ՚ի բարիս զեղեալ,  
 Ըտեանք իրաւանց յուղղութեան կանոնս արդար չափակցեալ.  
 Եր նոր գումարտակ ընտիր հեծելոց առնաղէն վառեալ.  
 Հուժկու հետեակք յասպար և ՚ի զէնս ըսպառազինեալ.  
 Կերթ աղեղնաւօրք ըզհաւուն իւրեանց վարժիւքըն բերեալ,  
 Կըշուակի թըռոյցք նետին ՚ի մաղէ իսկ ոչ վըրիպեալ.  
 Ըրտավար երկունք քըրտանց հոսանօք զերկիր ոռոգեալ,  
 Ըրգանդ խոփահերձ յարկելոց սերմանց բեղուն սաղմնառեալ.  
 Բուսոցն երևոյթ յերանգ կանաչին քաղցրիկ ցօլացեալ,  
 Հողմաշարժ ջովուց առ միմեամբք ջոլորք տըծածանեալ.  
 Բարդաբարդ որայք ՚ի հունձ գերանգւոյ լեռնակոյտ դիղեալ,  
 Ըտոք ցորենով խորափիտ քանդուկք լիուլի լըցեալ.  
 Երկիրն հացալից ՚ի դարման մարմնոյ համայն յըզփացեալ,  
 Ըռատ և որոց ունէին կարիս յագուրդ մատուցեալ.  
 Ընդ էր և լերանց ծառատունկ թաւովք յուռթի զուարճանալ.  
 Կըշուակի տընկոց վերընձիւղ գըրիւք երկնից ըսպառնալ.  
 Վարսաւոր ճիւղից շուրջ տարածելոց վըրտն ձեանալ,  
 Ի զովոյթ՝ որոց ներքոյ տաւաղին խիտ հովանանալ.  
 Բըլուրք յայգեստանս գինեբեր որթոց յուռթի ուռձացեալ,  
 Յոտինըն Մասեաց նախատունկ այգւոյ ձըրիւք պըսակեալ.  
 Զուրք ականակիտք անդ որակայեղ հրագոյն բոսորեալ,  
 Ընձանց հոգածից ցըրման տըխրանաց դեղ մատուռակեալ.  
 Մարգարօտք հովտաց ՚ի ձայնս անգէոց արձագանգս հընչեալ.  
 Մակաղք ոչխարաց խոյախաղ մաքեօք ՚ի ծին խայտացեալ.  
 Երամակք այժեաց պարծաքայլ քօշիւք ՚ի կայթս ոստուցեալ,  
 Գառինքըն մատաղք ՚ի բընքուշ մարմանդս հեղիկ ճարակեալ.

Ահա այսպիսի փայլ էր երկիր մեր յաւուրս Արային :  
 Յամենայն սահմանս իւր թագաւորէր պերճութեան հոգին ,  
 Խաղաղիկ կենացն անդ զեղոյր վճտակն ոսկեղէն դարին ,  
 Այն հարըստահար որ երբէք ումէք յառնէր անդըստին :  
 Կարգըն վայելուչ օրէնքն օգտակար 'ի բարիս ազգին ,  
 Գովութեան հրոչակ շուրջ փողէր հանուր յազգըս աշխարհին :  
 Կուռ ըստառաղէնքն 'ի տարժանս մարտից կիրթ ամենեկին ,  
 Երկիւղ պակուցման էին համօրէն ազանց 'ի կրուռին :  
 Անդ էր վայելել 'ի յաղատ հանգիստըն զուարթագին .  
 Անդ իւրաքանչիւր 'ի վաստակ ձեռաց իւրեանց խընդագին .  
 Անմուրց յաղթանակ օր քան զօր փայլէր մեր Միապետին ,  
 Յամենայն կողմանց խուռըն դիմելով ընդ թևօք նորին :  
 Արութեան հանդէսք մերոյն Արամայ վեհանձնեայ պետին ,  
 Վարսակալ զարդուք մեծին Աննասի երկրորդ կարգեցին .  
 Նովին մեծարեալ 'ի նոյն արքայէ և չըքնաղս Արդին ,  
 Ապա ինքն իշխէր թագաւորաբար իմն ոհեղազին :  
 Շինուածք քաղաքաց և ձեռակերտից նոր նոր հիմնէին .  
 Բնաիր բընակչօք յոյժ բազմամարդէր նահանգն առաջին .  
 Այնքան հրոչակիւր բազմագով բանիւ համբաւն Արային ,  
 Մինչև աշխարհին ըղկոչումն առնուլ յանուանէ նորին :  
 Կալուածըն նախնի Արագած անուն մերն Արմենակին ,  
 Այլովբըն հանդերձ Արարադ ձայնի յանուն այս պետին .  
 Յուշ ած ինձ զասել մեծին Արեմեայ սուրբ մարգարէին ,  
 Այն ինչ յերեսաց Տեառըն բարբառի ըզքանդ Ռաբելին :  
 «Պատուէր տուք յինէն ասէ Վնն Աստուած , բանիւ Տեսողին ,  
 Թագաւորութեանցըն Արարադեան 'ւ Ազքանաղ գընդին .  
 Պատնէչըս կանգնել նետակալս խըմբել 'ի մարտ զայրագին ,  
 Յեղծ և յաւերած բերել ըզՌաբէլ քաղաք պան ծալին » :  
 Գեղոյն և բարուցն հանգէտ ցոլանայր և Նուարդ տիկին .  
 Յորոյ յամենայն շարժմունսըն տըպէր փառք պայծառագին .  
 Բզգաստ և աշխոյժ 'ի տընտեսութիւն գործոցն առ տընին ,  
 Բոլորից կանանց տիպ ակնածութեան 'ի համեստ բարին :  
 Յարարս իւր շընորհքըն թևապարիկ տայր ըզհաճելին ,  
 Բաղցրութիւն մեղու կաթէր 'ի շըրթանց ընդ բան հրամանին .  
 Բարեաց գաղափար երկոքումբք կանգնեալ կանանց աշխարհին ,  
 Տընարար օգտից սիրտ տըպաւորէր 'ի ճակերամին :  
 Յաղջկանց հըրահանդ հոգալ մըշտաշխատ հանգիստ էր նըմին ,  
 Նիւթել ոստայնել 'ի պէտս որերոյ հանդերձըս նըրբին .  
 Համագամ խահիցն 'ի պատրաստութիւն գալ ըստ պատշաճին ,  
 Չըվատնել յուճպէտս զորս յերկրէ բարիքն են հարըստագին :  
 Այսպիսեօք ահա երկոքին սոքա յեռանդ սերտակամ  
 Օօգուտ հայրենւոյն անդ յաճախէին ջանիւքն անկարկամ .  
 Անդ էր տեսանել 'ի նոր զարդ բոլոր զերկիրն Հայաստան ,  
 Յամենայն բընակս զեղեալ խընդութիւն յոյժ համեստակա՛ն :



Յայս կարգ վայելուչ պերճ հանգիսացեալ յամս չորեքտասան,  
 Յերկուց ճոխ ականց աղբիւր վրտակէ ծընունդ գեղազան .  
 կարգոս դիւցազնեայ իւրոց ծընողաց տիպ համանրման ,  
 Յերկնուստ հայրենի գահին պարգևեալ ժառանգ ընտրական :  
 Յարժանի սընունդ նորա երկոցուն անդրէն անբաժան ,  
 Բերեն յառաջել մանկանն 'ի գործած շքեղ պարապման .  
 կաթըն՝ Նուարդայ կայտուէ ըզկարգոս դիմօքն՝ Ատրղկան ,  
 Օրէնք Արայի նըշոյլս արձակէ յողւոյն դիտարան :  
 Տարերցըն ծաղկօք իւր խըմորեալ սերտ խառնուած դիւցազնեան ,  
 Բշտապ 'ի շարժումն՝ արագ 'ի գործել բայց և խոհական .  
 Աջ ընդհատ երբէք ունիլ ըզպարձանս մընայր տուն Հայկեան ,  
 Բան զոր ընկալաւ յաւուրս վեհանձնեայ նախնեաց տէրութեան ,  
 Տէս ինձ աստանօր զՂչխանին բարւոյ կարգ վաւերական ,  
 Ար միշտ ըզդիտումն ունի առ հանգիստ իւր ժողովըրդեան .  
 Ա՛ջինչ վայելմունք հարուստ ճոխութեանց նրմա քաղցրանան ,  
 Արոց չէ հայիլ 'ի բարիս աղգին հասարակութեան :  
 Հայր էր հայրենեաց հըզօր միապետ Արայն Արամեան .  
 Մայր բարեգորով էր Նուարդ տիկին թառանցըն Հայկեան .  
 Յորդ խաղաղութիւն զեղեալ անդըստին յերկիրն Ադեմեան ,  
 Տայր ամենեցուն փառօք պըսակել ըզգըթտան Իշխան :  
 Ի բռեցին յաւուրս մերըս Վիւցազնի ձայնքըն խաղմական .  
 Հեշտալի հըրձուանք լըցին օրինօք զաշխարհին սահման .  
 Բայց անհետ իսպառ արարի՛ն անտի զոգին արութեան .  
 Մերժեցի՛ն համակ զեռանդ հըրային յաշխոյժըս վառման :  
 Ա՛ջ, ո՛չ 'ի բանց տար , հաստատ էր յերկրին արմատ քաջութեան ,  
 Անփուտ շառաւիղ զորերոյն ձըգեալ ըզսըրտիւք համայն .  
 Թէպէտ և չէր մարտ , այլ անքոյթ կենաց հեշտ ըզբօսարան ,  
 Ա՛յլ զինուորութիւն էր կուռ 'ի զըրահ յաղեզն 'ի նըրան :  
 Արսոցըն պարապ կազդուրէր ըզսիրտն 'ի տիս մանկական ,  
 Վանումն ամեհեաց պընդէր ըզհոգին յոյժս արիական .  
 Խանչիւն վարազաց դուռիւնըն գայլոց վագերց կատսղման ,  
 Յանահ մարտընչիլ փո՛ղ էր առ նոսա յաւէտ հեշտաձայն :  
 Ա՛յս էր ասպքէն որ 'ի շըրջակայ ազգացըն վաշտկան ,  
 Երկեղս արկանէր մարտիւ յարձակիլ 'ի տուն թօրգումեան .  
 Գիտէին բարւոք թէ յանդորրաւէտ յայնրմ դագարման ,  
 Պընդեալ են 'ի մարտ և զանվանելի ըզջիլն ուժգնութեան ,  
 Վասն որոյ նոցին խոր խաղաղութեան հանգիստըն դիւրման ,  
 Էր մըշտակըռիւ հանդէս առնազէն խըրոխտ խիղախման .  
 Նոյն և տարժանումն յանըմբերելի գործըս պայքարման ,  
 Հարսանեաց էր տօն նոցայն առաջի 'ի կայթ խընդական :  
 Օարթիւր , Հոյաստան , զուրթիւր և հայեանց յորդուցըրդ կական ,  
 Օարդիս տարագիր ցընդելոցն յօտար աշխարհաց սահման .  
 Իցէ՞ օր արդեօք , յորում ամփոփեալ 'ի քոյդ գըրկարան ,  
 Խընամըս կալցի որ ցըրուեաց Բաղուկն յաւիտենական :

Նախկին քո բարբառ մեծարեալ յայնքան բաղձազգի բերան ,  
 Արդէն և քոյքդ իսկ 'ի զբոյց դընել չառնեն իսկ արժան .  
 Բառազարդ հանդէսք ճոխ ասացուածոցդ ընկալաւ խափան ,  
 Մուրածոյք 'ի շուք մուծան բաղձանօք յազգայինդ ատեան :  
 Վիշտ ազգասիրաց , հոգ հրմտացելոց բուն փարթամութեան .  
 Օոր այժմ և ծեքից տեսանեմք ստորև իբրու զանպիտան .  
 Թողից առ տեղեալս որ ինչ է այսմիկ բան պատշաճական ,  
 Ի պըսակ հանել կալայց զառաջին ոճ հագներգական :

## ՊԼՏԵՐԸՕՄ ՇԼՄԻՐԵՄԸՅ ԲՆԴ ԱՐԸՅԻ

ԳԼՈՒԽ ԺԴ .

Ի յորդ լիութիւն բարդաւաճ բարեաց  
 Մինչ յուռթի պանծայր երկիր Հայկազանց ,  
 Ո՛չ նեղիչ կալեալ իւր զոք յօտարաց ,  
 Եւ ո՛չ ընդդիմակ ինչ յայլոց ազգաց :  
 Բստեղնէր անդէն յարմատոց չարաց  
 Դառըն շառաւիղ բերոց անբարեաց .  
 Օւղոյր 'ի պըսկունս պըղտոր շփոթմանց ,  
 Ժըխորել զամպակ ծաղկունս յաջողմանց :  
 Յայնժամ գըրաւեալ ըզգահ Նեբրովթեանց ,  
 Ինքնիշխան տիրէ մայրըն պոռընկաց .  
 Շամիրամ ծընունդ դից Ասկաղոնաց ,  
 Ի բացընկէցս իւր սընեալ յաղաւնեաց :  
 Սա նախկին արքայ 'ի սեռըս կանանց ,  
 Հըզօր Թագուհի 'ի մարտըս մըրցմանց .  
 Ի գիւտս աջողման խոր հընարիմաց ,  
 Մեծագործ շինիցն 'ի կարգ խորազգաց .  
 Օանմահիցն առեալ յինքն ըզվարկ սերմանց ,  
 Խանչայ միշտ 'ի ճաշ հեշտալի բերմանց .  
 Իւրոց հոմանեաց ըզվիճակ անանց ,  
 Խոստացեալ անշուշտ զանմեռ վայելմանց .  
 ՅՆձոնին Դիայ 'ի բաղդին իւր հարց ,  
 Բզգուշակս առնու յաւէտ գերազանց .  
 Յետ մահուանն , 'ի կարգս անմահ դիւցազանց  
 Պաշտիլ յԱրիա ըստ դից պաշտամանց :  
 Դիմէ 'ի Հընդիկս բաղմութեամբ զօրաց ,  
 Յինքըն գըրաւել զերկիր հեռակաց :  
 Դարձեալ 'ի Բակտրի լիք անյաջողուած ,  
 Ապա 'ի Նինուէ յաթոռն հայրենեաց :

Աստ մեզ նոր յառնէ արկած գիւտական  
 Արայեան գահու բերել ըզտասան .  
 Օ, ի մինչ կայր յանքոյթս 'ի գործ իւրն արժան,  
 Հընչէ հըրաւէր ճակին յաւանական :  
 Եօթնագէ շամբուշ գիճասող գազան ,  
 Դըշխոյն Շամիրամ անգունդ վաժաշման .  
 Ի գարշ տըւփանաց իւր ջուրց պըղծութեան ,  
 Յորձեռանդն ուղխէ ընըկղմել զԱրայն :  
 Վիշապն ապըստամբ ոգին դաւաճան ,  
 Որ յերկնից անկաւ միշտ մեզ ախոյեան ,  
 Յերկրակուլ ջըրոյն անտի փորձութեան ,  
 Վարար իւր դըստեր լընոյր զորովայն :  
 Որով ողողեալ զերկիր ամենայն ,  
 Լընոյր գարշութեամբ իւրով մօլեկան :  
 Ի յագուրդ պորտոյն իւր գժոխական ,  
 Դիւաղոհ գային գէմբըն գեղազան .  
 Արդ՝ զի Արայի գեղն անգուգական  
 Հարեալ էր հըռչակ ընդ աշխարհ համայն,  
 Համբաւ իւր սըրտի յոյժ հաճոյական ,  
 Աղուաձայն փողէր անդր 'ի լըսարան :  
 Ի կարգըս խօսից իւր ընտանեկան ,  
 Օ, ըրոյցք ըզգեղեաց 'ի վէպըս մատեան .  
 Կիսոց զոմն առեալ 'ի գով դըրուատման ,  
 Այլք զայլըցըն գեղս բերեն յանդիման :  
 Իսկ ոմն 'ի նոցունց լիբբ շողումբան  
 Ի հաճոյս լագին կացեալ վիպասան ,  
 Ներբողէ ըզնոյն 'ի գեղ սըխրական ,  
 Համագեղ նըմին և յաւէտ զԱրայն :  
 « Դու ո՛վ թագուհի՝ ասէ , ինքնիշխան .  
 Որոյ գէմբ վըճիտ գեր քան զԱստըղկան .  
 Իսկ աշխոյժ սըրտի ընդ գիրգս հեշտութեան ,  
 Հարուստ հաղորդեալ յանուշակդ արեան .  
 Օ՛րնունդ ես վեհից մարդկային բնութեան ,  
 Արիւն Դերկետայ դից մեր նախնական .  
 Բեզ քաղցր 'ի վայելս ախորժ 'ի փարման ,  
 Արայն զամենիւք չըքնաղ կերպարան :  
 Կամիս՝ ո՛վ դըշխոյ , տիպ նըմանական  
 Դոյն կերպագրութեան , արա՛ ինձ հրաման .  
 Օ, ի բաղձալի յոյժ զայրըն գիւցաղնեան  
 Ունիլ քեզ ընկեր 'ի կեանս անվախճան :  
 — Սըտերիմ՝ դու ինձ 'ի բարեաց պայման ,  
 Լսէ թագուհին՝ առ այս պատասխան .  
 Գո՞յ 'ի քեզ արդեօք հաւաստի նըշան  
 Բեր 'ի ցոյց յայտնի նըմանագրութեան :

— Յուցակ ըզգալի իցէ՞ բուական ,  
 Որչորտիւ ըզնոյն բերել յերեւան .  
 Բայց որքան է կար՝ զըշնոյ վեհազան ,  
 Ի նըկար հանից , ասէ շողոմն այն :

Վաղցրութիւն 'ի նմա շնորհք անթառամ .  
 Փափկութիւն յանձին յաւէտ քրնքչական .  
 Արրտաձիգ մագնիս յիւր թարթիչս ական ,  
 Աստուածոցն անգամ գոյ ըզմայրական :

Թէ յաստուածուհեաց ընտրութեան ատեան  
 Ոք 'ի տես ամէր զԱրայն Արամեան ,  
 Բոլոր իսկ տեսիլ զիցն անմահական  
 Առ գեղով նորին առնուին վախճան :

Ո՞ր տես զԱրայն յիւր վայելչութեան ,  
 Եւ ոչ գերեցաւ յանլոյծ կատարան .  
 Ո՞ր լուաւ ըզբանս նորին գեղգեղեան ,  
 Եւ ոչ խանդադրատս եղաւ 'ի զմայրման :

Հասակ իւր չքքնաղ նոճ կենդանական  
 Կըշուակի ձրգեալ ընդ Հերայն կայան .  
 Նըրբին տարերաց ծաղկունքն 'ի շողման ,  
 Լուսարփի ցուէն ձիւնափայլ յիրան :

Մարմին իւր բոլոր տիպ զարմանազան  
 Յողաձոյլ քրնքուչս համակ աղուական ,  
 Գունոյն վըճտութիւն ջինջ և սեռնական ,  
 Չափակից անգամքն առոյգ 'ի շարժման :

Դէմքն վառվառուն յարփի սըխրական .  
 Կաթնածով ակունք հարեալք 'ի ծածան .  
 Բուրգն է փրղոսկրեայ հաստուած իւր ուրան ,  
 Շընորհքն 'ի շըրթանց կաթէ ըզշուշան :

Դէսք մարգարտազարդք առ հըսկայ թիկան ,  
 Օարծաթի ուսովք ալեշարժ ծըփան ,  
 Օջրէն կայլակի լուսոյ առ տըպման ,  
 Յայժեայս Սեդացւոցն 'ի բարաշխական :

Արունքըն բարձից կըճեայք 'ի փայլման ,  
 Դորկ ճախարակեալ յարհեստ բընութեան .  
 Եւ բոլոր մարմնոյն գիրք գիւցազնական :  
 Յանմահից տեսիլ սերտեալ յիսկական " :

Յայս լուր գովեստից գեղոյն Արայեան ,  
 Հուր համատոչոր վառէր 'ի յինքեան .  
 Չեռնոյր Շամիրամ յեռանգըն գեղձման  
 Ըստ կարգ անցանէր նաև լըկնութեան :

Կաթումըն սըրտին առ անձուկ տըռփման ,  
 Մաշէր զորովայնն յանձախ հըրգեհման .  
 Չէր հանգիստ երբէք և ոչ մի վայրկեան ,  
 Լայնութիւնք երկրի նըմա անձկացան :

Համանեացըն իւր փայլումն ուրուական ,  
 Խոր իմըն գիշեր անդ նըսեմացան ,  
 Օսգուած գեղարփւոյն 'ի տանէ Հայկեան ,  
 Խաւարեաց ըզդէմս գեղեայցն Ասուրեան :  
 Թառաջս 'ի խորոց հանեալ հեծութեան ,  
 Լընոյր ըզդարպասն յերգըս թորթորման .  
 Թալկանայր գընէր անդ կիսակենդան ,  
 Արայն էր միայն իւր գեղ ապարման :  
 “ Ա՛վ դիք , անգն թ դիք , գոչէր մեղկաձայն .  
 Բըմէ չողորմիք իմ թշուառութեան .  
 Ա՛ինչ ետուք հարուստ փափօք հեշտութեան ,  
 Բնդէր և զԱ՛րայ չեղիք համակեան :  
 Ա՛րայդ մազգեղանց գէմք արփիական .  
 Դնլ գոնէ զըրաւ տուր իմ առչորման .  
 Գըթա՛ն 'ի գերիս սիրոյդ վայելման :  
 Օարաւն իմ 'ի ջուրդ է եղջերուական :  
 Աղբալի է ինձ վիճակս անձկական ,  
 Թէ չիցէ դիւրիչ Ա՛րայն Տիտանեան ,  
 Չէ՛ ինչ ինձ այս թագ բուռն արքայական ,  
 Ա՛յն ինչ Ա՛րային կապեցայ զընտան :  
 Ա՛վ չըքնաղ հասակ անմահ կերպարան .  
 Յերբ զիս կիզուցուս 'ի հուր գեղձական .  
 Ա՛ տայր ինձ պատիլ զորէն բաղէղան ,  
 Զըլորիլ գըրկել յաւերժ անբաժան ” :  
 Խընդացին գըժօխք յայս տապ կաթագին .  
 Կայթեաց բեւիար 'ի տարտարոսին .  
 Եւ ևս 'ի հրատապ ջեռանս բընաւ ին ,  
 Ի ներքուստ հընոց վառէր չար ախտին .  
 Բըխանդ մօլեգին յաւել 'ի նըմին ,  
 Ի յոյզ տագնապել ցընորման սըրտին .  
 Յերևակայմունս դիմաց դիւցազին ,  
 Սաստկանայր տանջանք անզուսոյ վարարին :  
 Խըրախոյս բառնայր սըղծութեան ոգին ,  
 Գոչէր առ իւր գուստը 'ի խորս անդ ներքին .  
 Փութալ 'ի լըլկանս պագչոտ գըշխոյին ,  
 Չըտալ ինչ գաղար հըրդեհման խանդին :  
 “ Այն այս մեղ՝ ասէր , ժամ յաղթանակին ,  
 Աովին դէք յարիւն մարդկան լողացին .  
 Ա՛խորժ է այս մարտ , գնուստը իմ , հօր քոյին ,  
 Ար զուրկ 'ի փառաց կայ աստ 'ի մըթին ” :  
 Յայտեաց զերթ փայլակն 'ի դահ Ա՛ինուէին ,  
 Պատիր շողոքօրթ ճընուենդ խաւարին .  
 Լընոյր վա՛վաշմամբ գեր քան զառաջին ,  
 Ի կըրակ յեղոյր զայն գէճըն մարմին :

Բերէր յանդիման զդէմսըն Արային :  
 Անոյշ փայլածով վառ և պանծագին .  
 Անհամբեր 'ի նոյն ըզթառանջ սրբաին ,  
 Փողար յարդարէր կրօնց հընոցին :  
 Բնկըզմէր դըշտոյն 'ի խորս խորհրդին ,  
 Բերել 'ի տեսիլ զիւրըն բաղձալին .  
 Իսկ խուսափ չըքնաղ դեղձուկ ըստուերին ,  
 Կոծ կըսկըծանաց երկնէր դառնագին :  
 Հեծէր անդադար աւաղէր անձին ,  
 Յայլոյ խելս եղեալ ջամաչէր 'ի նըմին :  
 Ուր այն Շամիրամ դըղըրդիչ երկրին .  
 Յաղթեցաւ 'ի կրից , բուռն առնէ յոգին :  
 Անդ իւրք մըխիթար բերեալ ըստ կարգին ,  
 Ասեն՝ « Դու անմահ հըղօր 'ի բաղդին .  
 Լէր իցէ մաշել քեզ սիրտ 'ի բըռին ,  
 Երբ չէ առընթեր չըքնաղ սիրելին :  
 Անդ արձ է պատգամդ ըստ բարձուդ գահին ,  
 Սիրոյդ հըրաւէր փառք է Արային .  
 Կոչեա՛ 'ի հեշտանս քո ըզմայլագին ,  
 Եւ նա փութասցի 'ի թըռիչս արծուին ” :  
 Հրաւէրս արձակէ անդէն առ նըմին ,  
 Ի կոչ փութասցէս պարկեշտ իշխանին՝ .  
 “ Լուայ ըզգեղոյդ , ասէ պանծագին ,  
 Հարաւ 'ի հոգիս վէրք անհընարին :  
 Դիւրարարք սըրտիս յիրան քո դանձին ,  
 Դու ինձ քաղցր արև , դու անմահ բաժին .  
 Ե՛կ զուարձութիւն մատո՛ հեշտագին ,  
 Պերձ թագաւորեալ յաթոռ Աբերովթին :  
 Կամ լի՛ց ըզփափաք իմ զայս տըռփանաց ,  
 Կացեալ ժառանգորդ հեշտին հըրձուանաց .  
 Դարձ տուեալ անդրէն ռոճկօք պարգևաց ,  
 Եղիցին ինձ սէր յաւուրս մեր կենաց :  
 Ո՛չ փոքր ինչ փառք են Իշխանդ դեղապանձ ,  
 Ունիլ զիս 'ի սէր քոյին շըղթայած .  
 Թագուհիս հըղօր սարսիչ աշխարհաց ,  
 Կոչեմ 'ի վայելս ախորժ բերկրանաց :  
 Արդ փութա՛ սիրով ընդ հրաւիրակաց ,  
 Եւ մի բաղբաղէր պատճառս սընտեաց .  
 Անձուկն իմ առ քեզ բոց է հըրդեհաց  
 Բե զովայթս առնուլ մընայ անկասկած :  
 Գիտեա՛ զիս 'ի սէր այնպէս շողկապած ,  
 Օ՛ի չիք ինչ ումեք բերել ըզխըղուած .  
 Թէ անտես առնես զըղձին իմ հայցուած ,  
 Աճես 'ի յերկրիդ քանդ և աւերուած ” :

Մախնդ որոտայ յայս բան դեսպանաց ,  
 Յովսէփն առաջին տիպն ողջախոհաց .  
 Որոց և միջոց իւր ժամանակաց ,  
 Իննեւտասն ամօք թուի նախընթաց :  
 “ Ի իմ կենակից՝ ասէ , ՚ի կանանց .  
 Պարգև ինձ երկնից մասնակից կարեաց .  
 Օխարդ ընդոտնել զօրէնսըն նախնեաց  
 Լիցի բընաւին պետիս Հայկազնեաց :  
 Որ զայս ետ ինձ գահ բարին աննախանձ ,  
 Հաղորդեաց ընդ նոյն և հոգի անխանձ .  
 Օ ի որ կառավար կարգեալ է ազանց ,  
 Պիտի նըմա սիրտ ախտից գերազանց .  
 Իշխան որ ՚ի կիրս է սորոտոյն անսանձ ,  
 Շնն է արտափառ ՚ի շուք գերապանձ .  
 Օխարդ ըզմօլեացն զառ փարաք կաղկանձ  
 կարճել կարասցէ յիւրայնոցն անձանց :  
 Ոչ այդ գարշութիւն հին հընարք գիւաց  
 Օաշխարհ համակուլ ուղիսիւք ողողեաց .  
 Իա զազանց ըզսերմն եհեղձ կրրձատեաց ,  
 Նոյ միայն անկալ յոյս երկրի մընաց :  
 Գիտակ եմք ըստոյդ յաւանդից հարանց  
 Յայսմիկ ըզպատուէր անլոյծ կասանաց .  
 Ըրմատ մարդկութեանս յայս յարակայեաց ,  
 Ըզնոյն թելադրեալ իւրոց յետնորդաց :  
 Օ ինչ գոյ ինձ նուազ ՚ի պայծառ շնորհաց .  
 կամ զինչ բաղձալի յերկրաւոր բարեաց .  
 Իսկութիւն անմահ հարուստ ընձեռեաց ,  
 Որ ինչ փափկագոյն վայելք են փառաց :  
 Ըլ թէ և էր ինձ կարօտ պիտանեաց ,  
 Ընհընար էր գալ զախտիւդ գարշանաց .  
 Օխարդ այն ինչ լի փառօք յըզիացած  
 Մատնեցայց կամօք յայդ մահու յանցուած :  
 Գընացէք ասել նըմա համարձակ .  
 Թողցէ՛ զայդ խորհուրդ ՚ի մըտացն արձակ .  
 Մի՛ ըստիպեացէ զայր դիմագարձակ ,  
 Ոյր կամքն ՚ի վաւեր ձըկտէ զուղերձակ :  
 Մայրօրէն խնամոց կարգեցաւ դայեակ ,  
 Ըռաջնորդ գօլով ՚ի գահ գերունակ .  
 Սիրտ դիցէ բարեաց գօլ դաստիարակ ,  
 Ի համեստ վարմունս եղեալ օրինակ :  
 Ըստ թէ յայդ ախտ չար այսպնակատակ  
 կալցի վավաշմամբ զուշոյն յիշատակ ,  
 Իւր գործոց իսպառ գըտցէ հետեակ ,  
 Օեղծեալ զամենայն յայդ գործ անառակ :  
 Կ

Օ ի՛նչ այլ յաղտեղեացն իցէ գրծընդակ ,  
 Քան մեծին լինել գարշիցն օժանդակ .  
 Ուղղութեան ելով կանոն ամրափակ ,  
 Գործովն աղմըկել միշտ 'ի խոտորնակ :  
 Փառք է իշխանին ունիլ հըստատակ ,  
 Ի սէր սըրբութեան հըլու և կամակ .  
 Երբ իշխան ղեղծցի յաղտեղիս համակ ,  
 Ուր համեստութիւն կալցի իւր բընակ :  
 Աւանգ քեզ Նինուէ վայր քաջաբանակ ,  
 Որ այժմէն խողիցն ես գահաւորակ .  
 Վանջ քեզ Բաբելոն տուն լագախառնակ ,  
 Որ միշտ պըղծութեան ջամբես ըզբաժակ :  
 Այդ անկղիտանաց պարապորդ յարակ ,  
 Դիցէ ըզՊաբէլ յանշէն աւերակ .  
 Այդ գրծսխային հըրդեհեալ կըրակ ,  
 Կիզցէ ըզՆինուէ իսկ առ հասարակ :  
 Այս է իմ զըրոյց 'ի բանիս պըսակ ,  
 Եսացէք առ նոյն գարշութեան բըսակ .  
 Չեն իմ կամք իսպառ յայդ գործ խայտառակ ,  
 Թէ և ինձ հասցէ մահ երազ երազ " :  
 Ունայն 'ի յուսոյն դեսպանաց դարձեալ ,  
 Պատմեն ըրութեամբ զոր ինչ անդ լուեալ .  
 Եսեն՝ « Ա՛յլ գըշխոյ , այրըն ցանկացեալ  
 Յայդ հրաւէր ըզսիրտ չունի յօժարեալ :  
 Առ մեծիդ հրաման յամենուստ խընկեալ ,  
 Ախորժակ եցոյց յոյժ ըստամբակեալ .  
 Ժայռ է հիմնաւոր անշարժ հաստատեալ ,  
 Առ ոտին զալիս փըշրէ զլեռնացեալ :  
 Կամք աշխոյժ է իւր միտք հըրահանդեալ ,  
 Բայց յօրինաւորս ամրակուռ սերտեալ .  
 Ի վաւերականս գիւրընտել վարժեալ ,  
 Իսկ 'ի տարօրէնս գըժխեմ՝ դագացեալ :  
 Ի հաճոյսըն իւր մեղք է քաղցրացեալ ,  
 Իսկ 'ի յանհաճոյս լեղի դառնացեալ .  
 Նուարդ իւր տիկին 'ի գեղ սըխրացեալ ,  
 Հրճուանք է նըմա 'ի գից ընծայեալ :  
 Որոյ քաղցրութիւն անձին փառազնեալ ,  
 Նազելի փայլէ անզոյգ երևեալ .  
 Իսկ համեստ բարուց շընորհք ծաւալեալ ,  
 Պըճնեն զօրիորդս երկրին բարեքեալ :  
 Սեղուազոյն ակունքն քաղցրատես հաստեալ ,  
 Ի շուրջ նըկատելն արեգ 'ի թաւալ .  
 Դէմք գեղածիժաղ վարդագոյն վառեալ ,  
 Կըռածոյք վարսից խարտեալ ծածանեալ :



Իսկ համեստ շարժմունքն 'ի գործ տընտեսեալ,  
 Գերքան զամենայնց նըմին հաղորդեալ.  
 Օ, անուանի տիկնաց ըզբունն ընկալեալ,  
 Կեանք է Արայի յերկիր իւր ընտրեալ:

Մի ընդ վայր ջանար ըզճըգան հարեալ,  
 Մի մաշեր ըզսիրտ յանհասն առձըգեալ,  
 Հեշտանք բաւապէս գոյ քեզ յաճախեալ,  
 Ի քոյոց այտի որ ըզքե փարեալ”:

Ի կարգ զբուռաց նոր հարցուած մուծեալ,  
 “Օ, ի՞նչ՝ ասէ, տեսիք յայրն հըռջակեալ.  
 Օգրմէ համբաւի գեղըն դիւցազնեալ.  
 Իցէ՞ 'ի պանծանս որպէս ներբողեալ:

— Արփի է՝ ասեն, 'ի յօդ թանձրացեալ,  
 Չիւնափայլ կայլակ վարդերանգ ներկեալ.  
 Բոլոր անդամօք յարմար ձեացեալ,  
 Որում համեմատ չիք ումեք տեսեալ:

Մինչ 'ի ըսկըգբան մեզ յերևս յայտնեալ,  
 Տուլածն երեսաց եզ ըզմեզ գերեալ.  
 Պըշնոյթ աչաց մեր յայնում բեւեռեալ,  
 Ի սիրտ մեր ըզխանդ կաթէր հըրդեհեալ:

Բայց զի անսաստ է առ սէր հրաւիրեալ,  
 Եւ չիք ինչ հընար 'ի հաւան անեալ.  
 Թո՛ղ և մի խընդրեր զայր դըժկամակեալ,  
 Բստգիւտ մի գայցէ յանձնըդ մեծարեալ:

— Ա՛յ, ո՛չ, չառնում յանձն ըզձերըդ զայդ բան,  
 Օ, անձինս չըկասիմ խնդրել սիրական.  
 Ինձ երջանկու՛թեան համոյն ծայրական,  
 Նա լիցի, ասէ դըշխոյն շամբշական:

Գեղոյդ այդ շընորհք չըքնաղ տեսարան,  
 Չիրք է անմահից յարիւն դիւցական.  
 Որում ժառանգորդ յեիցն երկրական,  
 Չէ ումեք լինել ըստ վայելչութեան:

Իմ է այն բաժին վիճակ սեփական,  
 Որ դիցն յարենէ դուստր եմ վեհազան.  
 Չըտամ զայն ումեք յայս կենաց սահման,  
 Չընեթեմ ըզնա ունիլ Աուարդայն:

Ի սէր լուսաթոյր գեղոյն Արայեան,  
 Օրհեցից բոլոր իսկ զԱսորեստան.  
 Կորիցէ եզճցի պատուոյս գաւազան,  
 Միայն զի ըզնոյն անից ինձ հաւան:

Մատիցէ ինձ այսր նոր ոմըն գեսպան,  
 Ի տանէն Սիմեայ այր ազնուական.  
 Պարգևք մեծամեծք յօղերձ մեծարման,  
 Ըճցին պըսակել զիմ չըքնաղն իշխան”:

Գիմէ փոյթ ընդ փոյթ միջնորդ զօշական ,  
Թեթե սրբացեալ անդր 'ի Հայաստան .

Սեծարեալ զԱրայն յօժտութիւնս փարթամ ,  
Կսէ և զիւրոյ դըշխոյին հրաման :

« Թագուհին հըզօր փառքն Կսուրական  
Հարեալ 'ի քո սէր անչէջ 'ի վառման ,  
Բզքեղ յիւր վայելս կոչէ տիրական ,  
Օորով խիստ է քեղ դալ 'ի նըշկահման :

Կստուածոցն արիւն հոգի լայնական  
Հաղորդեալ նըմին յոյժ հարըստական .  
Որում չիք ումեք կանգնիլ ախոյեան ,  
Եւ ոչ որ կացցէ բանին ներհական :

Արդ՝ պատուեալ է քո ձըրիւք վերնական ,  
Ի գեղ սրխրալի և անզուգական .

Ունիս ըզհանձար հասու նըրբական ,  
Թափանցես 'ի խորս՝ որոց ենն արժան .

Ճոխութիւն հանգէտ գեղոյդ աննըման ,  
Գահն է Նինուէի աթոռ նախիշխան .

Բնդէր անկուշես կամօքդ անհաւան ,  
Օոր բաղդն յաջողէ քեղ աներկեան :

Ճակատագըրեալ յայս սիրոյ դարան ,  
Օորով և անմահք չըբերեն խափան .

Օ՛ր է քեղ ընդ վեհսըն դալ 'ի խըժգան ,  
Աղարտեալ ըզկարգն որ անդըրդուական :

Հաճեաց 'ի վայելսըն վեհաստիճան ,  
Երջանիկ փայլեալ 'ի սեռի մարդկան .

Ապա թէ կացցես յայգմիկ յամառման ,  
Մի՛ յուսար մընալ յանքոյթ հանգըստեան .

Խանդ Շամիրամայ առ քոյդ գըրկարան ,  
Իղձ է գառնենի յըստին մայրական .

Օոր ոչ հուր , ոչ սուր , ոչ այլ արգելան ,  
Լըուել 'ի մայից աճեն ինչ դարման .

Բաշխոյք անմահից ձիրք են բարութեան ,  
Յօգուտ երկնայնոց փարթամք 'ի զեղման .

Օայդ վայելչութեան շընորհք գեղազան  
Տացես քում երկրի պատճառ աւերման :

Դըշխոյին մերոյ յահէ զօրութեան  
Սարսեցալ երկիր , դողաց Հընդկըստան .

Բաղումք յարքայից 'ի գոռ պայքարման ,  
Ի հարուած նորա զըրաւ ընկալան .

Ուժգնութիւն 'ի դիցն առեալ անսահման ,  
Տիրէ ընդ երկրաւս իսկ միահեծան .

Գուցէ զայրացեալ յըմպահկումն ինքեան ,  
Յաղարտ վարեսցէ զերկիր քո համայն :

Թէ զերկրիդ հանգիստ խընդրես գիւրու թեան,  
 Թէ կամիս ըղշուք քեզ գերագրական,  
 Հաւանեաց ընդ այս կոչ հըրու իրման,  
 Պըսակեալ զանձուկն իմ Շամիրամայն” :

Յայս բան մերս Արայ ՚ի դէմս անձիծաղ,  
 Գոչեաց մեծաձայն՝ “ Վ՛նչ, եղո՛ւ կ ե ձ՛նդ .  
 Օ ի՛նչ այս նոր կըքանք, զի՛նչ բարբըս ճիււղ,  
 Յոր այլանդակի դըշտոյն դիմաքաղ :

Աւնդ քեզ Նինուէ, հազարիցս աւաղ,  
 Օ ի բեկուճըն քո գայ քեզ վաղ ընդ վաղ,  
 Իրըշտոյն քո յուղից պըղծութեան ՚ի խաղ,  
 Ժահրից պըտոյտքէ յորձանս անյապաղ :

Կայանս եդեմայ չէ արջոց կաղաղ .  
 Հըրուլ ցանկութեան դու հոգեփաղաղ .  
 Այլ վայր է մարդկան յայնմ ախտէ խաղաղ,  
 Ի համեստ բարիս համակ հոգեշաղ :

Նախ իսկ ասացի առ այդ հրաւէր սղաղ,  
 Ես յօրինաւորն ունիմ ըղկանդաղ .  
 Յողմամիտ վարմունս ժիր եմ ՚ւ անդանդաղ,  
 Իսկ առ անվաւերս յոյժ անշաղաքաղ :

Մի՛ ես ընդունայն լինիցի աշխատ,  
 Իրըշտոյն ձեր անկարգ հերատուկ ե վատ .  
 Փառքն իմ յայս բընիկ աթոռս Այրարատ,  
 Պայծառ շողողէ ՚ի գործս անարատ :

Իայցէ՛ ինչ Նինուէ ընդ Հայս ՚ի Ռազդատ,  
 Ար տունն է մուլեաց միշտ ինքնանախատ .  
 Օ ի՛նչ փառք Ասորոց ՚ի դըշտոյն շուայտ,  
 Ար ընդ դարշականս է յարատուայտ :

Անբեր է պըտողոց ուռե՛նւոյն արմատ,  
 Թէ ե ոռոգիչ իւր իցէ Նփրատ .  
 Այսպէս ե ՚ի ձեր թագուհին զակատ,  
 Յորձանք գիջութեան ՚ի փառացն անքատ :

Ինքնակապ գերի է նա անաղատ,  
 Իայռ դազանակոխ անչէն անաղատ .  
 Օ ին՞րդ զիմն ըզբուն զուտ ե պայաղատ,  
 Ղիւղէլ վարսեցից յանդ անցանկապատ” :

Այսպէս գըլխակոր դարձեալ դեսպանին,  
 Պատմէ զոր լուաւ իւրում դըշտոյին .  
 “ Ընկար է՝ ասէ, գալուստ Արային,  
 Թէ ե օշխարհի հիմունք վանդեօցին :

Ի կամըս յեցեալ իւր յամառագին,  
 Նըշկահէ զուժովդ ըզգերմարդկային .  
 Յորգորք կամ երկեղք ջաղդեն ինչ նըմին,  
 Սիրտ զանդամանդեայ կալեալ է յանձին :

Թէ 'ի ճառ արկից ըզբանսն ըստ կարգին ,  
 Օր լուայ ասել յոգի սաստկագին ,  
 Չըժուժայ լըսել ունկըն սոսկային ,  
 Քանթէ Թագուհւոյդ բարգաւաճս աղին :  
 Արդ Թէև իւր գեղ տիպ է երկնային ,  
 Բայց 'ի քո խընդիր անշարժ բընաւին .  
 Եթէ ինձ լըսես , սվ տիկնաց տիկին ,  
 Թ'սղ և մի խընդրեր զանընտել հոգին :  
 Օրնչ օգուտ 'ի սէր գեղաշուք դիմին ,  
 Ըերումն ածել բընակչաց երկրին .  
 Այն , անդոյդ է նոյն նա յաշխարհին ,  
 Բայց զորովքն առ քեզ չունի զաւելին :  
 Ընտրեա՛ 'ի գեղեայց յորդուոցն Ասուրին ,  
 Որք քաջագօտի հըսկայք են յուժին .  
 Նոցա տուր վայելս հըրճուանաց սըրտին ,  
 Ի մէնջ զօրացի պարճանք մեր ազգին :  
 Օսնօթ ես անցից մեր նախահաւին ,  
 Որ հիմն էր այսմիկ նախաթոռ գահին .  
 Օխորդ խիզախամբ 'ի վերայ Հայկին ,  
 Նետահար յերկիրն անկաւ հըպարտին :  
 Սոյն սա իսկ սերմն է նորուն Հըսկային ,  
 Յամառեալ 'ի կամս իւր յանհակելին ,  
 Գուցէ 'ի խաղալդ առնուլ զօտարին ,  
 Տացես 'ի կորուստ՝ զոր կայ 'ի ձեռին :  
 Ոչ բարւոք է քեզ քոյովքն 'ի քոյին ,  
 Վառել ըզկենցաղ յոյժ զուարճագին .  
 Քան յանակընկալ յանըստոյդ բարին ,  
 Իընել ըզհեշտանս քու՛մ զգայականին :  
 — Տըհաճ է իմ սիրտ յայդ յորդոր տըկար .  
 Առանց Արայի կալ ինձ չէ հընար .  
 Նոր հսյթայթեցէք գալոյ նորին ճար ,  
 Ասէ և ասէ Թագուհին վարար :  
 Աէր իմ առ Արայ հուր է մըշտավառ ,  
 Նա միայն սըրտիս դիւրիչ անըսպառ .  
 Յերևոյթ հոգւոյս գէմք նորին պայծառ ,  
 Ե իջոցըս բերէ յայլ գեղոց վըտառ " :  
 Կըրկին և կըրկին դեսպան բանավար  
 Յայս ողոք յըղէ յըղձին իւր կատար .  
 Բայց բոլորովին զուր և վայրասրար ,  
 Օր ոչինչ յԱրայն ցուցան ազգուարար :  
 Ի կարգըս բանից գոյր լիահանձար ,  
 Եւ 'ի սպառնալիս անշարժ որձաքար .  
 Հեգնէր աւաղէր ըզնոյն ուժգնաբար ,  
 Սերժէր ըզբաղձումն այնմիկ չարաչար :

Հըրեչտակութեանցն երբ ելք փակեցան ,  
 Եւ զուր ամենայն իւր ջանք վատնեցան ,  
 Ի դայրոյթ բըրդի գըշխոյն մուկեկան ,  
 Ի գուրս մարդկային ելանէ բերման :  
 Սատակ առիւծու գողցես ինչ նըման ,  
 Սինչ զորձ իւր կորզեն 'ի շաղաշարման ,  
 Գոռայ մըռընչէ վըրուենջ վալաշման ,  
 Հուր և կայծակունս շանթէ ընդունայն :  
 Կիրքն երկու 'ի մասն անդր ըղգայական ,  
 Սէր և բարկութիւն 'ի կըռիւ յարեան :  
 Սին վառէր ըզսիրտն 'ի գորով խանդման ,  
 Իսկ միւսն 'ի վըրէժ ընդ իւր անարգման :  
 Ընդ էր տեսանել 'ի մի յայն ատեան ,  
 Երկուց ներհակաց տըգեղ տեսարան ,  
 Նոյն էր որ զեռանդ բորբոքէր զըղձման ,  
 Եւ նոյն որ ըզբոց կատաղի արեան :  
 Յերկուցս 'ի միջի վատնեալ 'ի վարան ,  
 Սերթ քաժ 'ի քըծնի , մերթ առիւծ դաժան :  
 Յուսալեաց սըրտի իւր հանգըստարան ,  
 Գըտանել խընդրէ տաղտապի յինքեան :  
 Այլ իւրն ըմպահականք հուսկ անդր 'ի վախճան ,  
 Բորբոքս արձակէ դիւային ցասման :  
 Հըրամանս առնել զորաց գուժարման ,  
 Բըռնի իւր կամաց բերել 'ի հաւան :  
 Գունդ գունդ հաւտըեալ հըսկայք Տիտանեան ,  
 Դիմեն բազմութեամբ յերկիր Հայաստան :  
 Արոց զորավար գըշխոյն թօնական ,  
 Յանձին ըզհոգի զգեցեալ դիւական :  
 Լըսէ մերս Արայ բարեսէր իշխան ,  
 Բնդդէմ ելանէ հուժկու ակոյեան :  
 Բանակք երկոքին 'ի դաշտն Արայեան ,  
 Դէմ առ դէմ կանգնին յարիւն խանձական :  
 Ընդ պատգամաւորք նոր հանդիսանան ,  
 Հաճել զԱրային սիրտ զանդամանդեայն :  
 “ Աջ բարւոք է քեզ՝ ասէն , ո՛վ գեղեան ,  
 Յարև խընայել բազմութեանդ մարդկան :  
 Օ, ի՞նչ շահ՝ թէ յայդ քո գեղ զարմանաղան ,  
 Ի սուր զոհեցի բանակդ ամենայն :  
 Արոց պարտաւոր կացեալ իսկ արեան ,  
 Եւ քոյինդ կենաց եղծ տաս խաթարման :  
 Սերայս թագուհւոյ մըտացն ուժգնութեան ,  
 Աջ հանդարտեցին հըսկայք Բակտըրեան :  
 Դու զհարդ կորես փափուկ դիւցական ,  
 Կալ ընդդէմ նորին խըրոխտ խիղախման :

— Հաստատ է իմ սիրտ առ համեօտ բարին ,  
 Ըս է Սիապեան Հայկեան մեր ազին .

Յայսմիկ կամ 'ի կեանս , յայսմիկ 'ի մարմնին ,  
 Փոխել չըկամիմ ընդ կեանս վատագին :

Առ ամբողջ զօրէնս պահել զհայրենին ,  
 Անմահ ինձ կեանք է , մահ 'ի սոյն կըռուին .

Իսկ ձեր այդ դարշանք կեանք գազանային  
 Սեռելութիւն է միշտ յանուան մասին :

Օրդուումըն տաղտուկ գայ յիս բնաւին ,  
 Լքել ըզորդորդ զայդ ցանկասիրին .

Պատրաստ եմ 'ի մարտ յիղձ եռանդագին ,  
 Թէեւ մահ իցէ ինձ յայնքմ բաժին :

Կընացէք ասել ըագոտ գըշխոյին ,  
 Հերիք է յորդորդ յայդ գործ մոլեգին .

Եթէ լինեսցի 'ի բան վերբատին ,

Ո՛չ բան՝ այլ սուր տայ ըզպատասխանին ” :

Անդ էր տեսանել զայրոյթ բորբոքեալ ,

Հըրդեհել զանտառս քաջաց գումարեալ .

Անդ հողմն ահագին ըզծովորն յուզեալ ,

Ալիս կուտակէր յոգիս փրփրբեալ :

Շանթընկէցս առնէր ճակըն պագշտեալ ,

Յաճիւն զԱրայեանս բերել տոչորեալ .

Փրփրայր Արայ հողմով փոթորկեալ ,

Յանդունդ սուզանել զազգ վիրագացեալ :

Ի աղխին ընդ միմեանս զօրքըն կատաղեալ ,

Որպէս ըզլերինս սերտ հիմնահաստեալ .

Թանձրութիւն գաշտին դողայ զըզըրդեալ ,

Օջրէն տերեոյ հողմով տատանեալ :

Շըռինդն ահագին յերկոցունց հընչեալ ,

Թընդէր զխորածորս լերանց շուրջ պատեալ .

Շառաչմունք նետից յօդ փոշեզանդեալ ,

Շանթարկս երկնային անդր եռացուցեալ :

Անդ քաջաց յարշաւս վարազախառնեալ ,

Ի զգունդ գունդ զօրացն յերկիր կործանեալ .

Ուր վատացըն սիրտ յերկիւղ վահրտեալ ,

Անձնապուրծ լինել ըզվայրօք յաճեալ :

Յառաւել ջեռնուլ արկածից մարտին ,

Թալկանայր յինքեան սիրտ Շամիրամին .

Յողորս բերեալ գոչէր ցաւագին ,

Խընայել յարե մերըս Վիցազնին :

Պարզե խոստանայր պատիւ պանծագին ,

Որ զայն ողջանդամ մատուցէ նըմին .

“ Չըկարեմ՝ ասէ , ժուժկալ տագնապին ,

Թէ անկցի Արայն 'ի պատերազմին :

Յիշատակ նորուն չըքնաղ պատկերին ,  
 Աղմբէ որ յիս զընտրութիւն բանին •  
 Մի՛ մեռցի գեղեայն , մի՛ մեռցի արին ,  
 Տոյժ մեծ է անձինս մահ լուսադեղին ” :

Այլ ոչինչ օգնեաց իւր բան հրամանին :  
 Չազդեաց ինչ նըշոյլ յարեն Արային •  
 Ընկաւ գեղսդէշն յազմուկ խուժանին ,  
 Մէգ նըսեմացոյց ըզփայլ զարփենին :

Գեղն երկնաախարար ըսկիղըն էր մարտին ,  
 Նոյն և վախճանիչ խըրոխա խիզախին •  
 Նոյն վիշտ անդարման ՚ի սիրտ զոշտտին ,  
 Եւ նոյն անկենդան մահ լուսիրշ գեղձին :

Ահա ոսկեձոյլ կընիք համեստին ,  
 Որ անքակ մընաց յուժոյ վարարին •  
 Լնխախտ պահպանել զոր ինչ ձեզ աւանդք են բարենրչան .  
 Օ՛ի որ հայրենի ցանկոյն է քակտիչ , ասէ Սուրբ Սատեան ,  
 Խայթ խարամանւոյն է պատիժ նրմին մահ սատակչական :  
 Թէ ընդ հարց դայցես ո՞վ են իմ նախնիք բարեաց օրինակ ,  
 Արոց հետեիլ յօգտաբեր վարմունս գըտայց համարձակ .  
 Օ՛մարմնաւորն ասես՝ թէ ըզհոգևորն , ասա՛ ինձ , որդեակ ,  
 Օ՛ի որոց անգէտ երեխոզ այժմիկ արարից տեղեակ :  
 Բայց դիտեմ տենչման 'ի քեզ վառվառիլ բոց բաղմակըրակ ,  
 Օ՛լստ մարմնոյ նախնեացդ ունիլ 'ի հանդէպ գործոցն ըզցուցակ .  
 Ե՛յս ես զերկոցուն ճոխ և բացայայտ բերից յայս պըրակ ,  
 Այց ըզհետ երթմանն ինքնին քեզ բացցի դիւրին եղանակ .  
 Բստ հոգւոյ ծըննդեան հարց սըրբազանիցն ես ընտիր զաւակ .  
 Սըրբոյն Թաղէի և Բարթողոմեայ յատկագոյն վիճակ .  
 Արք 'ի հունձ Փրկչին յերկրի մեր կարգեալ նախարդիւն մըշակ ,  
 Երոմանց չարին սըրբեցին սիրով Հայկեայն զագարակ :  
 Ետոք ցորենոյն երկնաւոր սերման ուռձացաւ յըստակ .  
 Լնըսպառ բարեաց զՀայաստանն արար զեղուն համբարակ .  
 Կարձեցան կացին չար մըշակողաց բերմունք հակառակ ,  
 Թախարդ պատրողին մերկացաւ յայանի զեղծ և խայտառակ :  
 Աէրն աստուածային անչէջ արծարծեալ անդր առ հասարակ ,  
 Ի նախանձ Լին վառեաց ըզբազում զօրեղ նահատակ .  
 Օ՛աւար գերողին կապտել յաջողէր փոյթ ըզբովանդակ ,  
 Թէ չէր կուրութիւն ոմանց յամառեալ յախտըն դըժընդակ :  
 Ե՛յլ սակայն և այս վերին Տեսչութեան էր խորք անյատակ ,  
 Եանընդունակացն ամիսփել զիւրոյ շնորհին ըզվիճակ .  
 Ի նոր ինչ պահեալ մեզ բարեգործել զեղումն անապակ ,  
 Մաքրեալ համօրէն զերկիրն 'ի ժանտիցն այնց անընդդիմակ :  
 Եարեաւ ըստ որոց ապա նոր ծընունդ պայծառ արեակ ,  
 Սըրբոյն Թաղէի նըշխարաց պարգև տիպ լուսատեսակ .  
 Երթուն Հովուապետ անձնադիր յազգին բարեացըն վաստակ ,  
 Հովուել 'ի շուշանս լուսակիզն ըզհօտ Հովուին հետեակ :  
 Օ՛րացան ընդ նոյն և գումարք հովուաց յերկըս յաջողակ ,  
 Հոգւով ուղղութեան տածեցին զամբիծ գառանց գումարտակ .  
 Սուրբն Երիստակէս , Վըրթանէս , Եուսիկ , Աերսէս և Սահակ ,  
 Եւ այլ շառաւիղք սըրբոյն Գրիգորի բարեաց բերունակ :  
 Փայլեցաւ անգէն ընտիր Թարգմանչոց վըսեմ հանգանակ ,  
 Երկնատուր տառիւք շըքեղ զարգարել զազգին հրապարակ .  
 Աւր Սուրբըն Մեսրոպ կենսաբեր իւղոյն իմաստից սըրուակ ,  
 Եհեղ 'ի Հայկեան ծընընդոց հոգիս բուրումն անուշակ :  
 Հոգեշունչ մատեանն 'ի տառ հայացի յոճ բարձրահրուշակ ,  
 Իսկոյն հայախօս մանկանց ճոխանայր սուրբ դաստիարակ .  
 Աոյն և այլ արդիւնք արանց իմաստնոց 'ի մըտաց ճարակ ,  
 Ի բընիկ բարբառ ըզգօն գործէին զուշողիր համբակ :

Սոփեամբ 'ի վիճմունս հայերէն գըրովք բոլորեալ բանակ ,  
 Յեղծումն աղանդոց իսկապէս տարան փառաց յաղթանակ .  
 Հայեաց 'ի Ազնիկ յաշտին Օրբուանայ պերճ բանահիճակ ,  
 Տէս ինձ Աշտիշատ քարոզս ուղղութեան գունդ հանրահրնչակ :  
 Սոքա մեր նախնիք կրրկնակի աչօք արփի լուսաւոր ,  
 Էւ որք յետ սոցա պայծառ փայլեցան յերկունս հոգեւոր .  
 Եղգին պերճութեան հեղինակք եղեալ սերս եռանդնաւոր ,  
 Օրինակ բարեաց ետուն յետնորդաց գընալ անխոտոր :  
 Եյամ հոգըս տարցին՝ որ պէտք են ազգին յիղձ բազմայորդոր ,  
 Վրրագէտ զարդու ըզմիտորն մանկանց գործել գեղաւոր .  
 Եղգասէր ջանից այս իսկ է ըստոյգ բերք արդիւնաւոր ,  
 Որով Հայաստան ճոխանայր երբեմն յորդիս շնորհաւոր :  
 Ուր թէպէտե զուրկ 'ի գըրախեցից լեղուն բընաւոր ,  
 Յոյն և Եսորի և Պարսիկ գըրոց ծեքէր 'ի գըլոր ,  
 Եյլ սակայն և յայն իսկ պիտառնութիւնք իրացըն բոլոր ,  
 Ըստ պարտին 'ի յանգ ելանէր յըստակ լեղուաւն անմուլոր :  
 Եպա երբ եղեալ երկնատուր տառիցն իսկ ժառանգաւոր ,  
 Համարձակ 'ի Սուրբ Մատեանսըն ճեմէր պարզ և անպըղտոր :  
 Հարուստ հաստեցան գըպրաց վարժարանք 'ի կրթութումն նոր ,  
 Օերացան մանկունք յիմաստըս գըրոց յոյժ հանձարաւոր :  
 Ենդ մատաղութիւն գեռաքերթ տիոց նաղէր կարգաւոր ,  
 Ենդ կրրօնն ամբիժ պերճ լուսաբանէր 'ի բեր փառաւոր .  
 Փախեան գաղթեցին մուրածք աթութայց առ հէգըն շամօր ,  
 Իրնիկ ճոխութիւն զեղաւ 'ի բարբառ մեր ըսկըզնաւոր :  
 Կարճեցան ճրգանք երկար տագնապիչք զանձն աշխատաւոր ,  
 Դաշտացաւ գըժուարն յընթացս ամենից հեշտ և դիւրաւոր .  
 Մի պատճառեցի առիթն ընկըրկիչ ծուլութեանն 'ի խօր ,  
 Մի ընդ վայր լըքցի եռանդնոտ բերումն 'ի կիրթ կարեւոր :  
 Մատիցեն մանկունք նախ 'ի հայրենի վարժըն գըրաւոր ,  
 Եմբարել 'ի միտս ըզնախնեացն ազգիս զարդիւնս օգտաւոր .  
 Ի մարզ մալեցի աշխոյժըն թարմիկ 'ի տես անդ համբոյր ,  
 Մինչև է անթէք զայն գահացուցեալ ախտին հըրապոյր :  
 Օրնօղք մարմնաւորք , թէև չէք ծանօթ գըրածան շնորհին ,  
 Մի անգըրագէտ թողուք ըզմանկունսն 'ի թարմ հասակին .  
 Ուսցին ընթեռնուլ ըզբընիկ լեղուն ուղիղ ըստ կարգին ,  
 Վարժեցին 'ի դիր վայելուչ ձևով տողել 'ի քարտին :  
 Մօտեցին ապա բառասերտ ջանից 'ի նիւթ քերթածին ,  
 Փորձեցին 'ի գործ սըրամըտութեան յառածսըն դիւրին :  
 Որով հանձարոյ մըթերս ամբարեալ յուշարան սըրտին ,  
 Թեւակոխեցին յաջող 'ի յուսմունս ազատականին :  
 Բերթութեան հանդէս անդ պայծառանայ ախորժ և հեշտին .  
 Ուղղութեան կանոնք յըստակ շողշողեն 'ի կարգ քան զարփին .  
 Ենդ ըսկիզբն առնու ընտիր շարագիր քաջ վիպասանին ,  
 Ենդ գան անվըրէպ 'ի չափ 'ի քանակ բանք տաղաչափին :

Սահմանք եղերաց փականք են ոսկի 'ի մուտս իմաստին ,  
 Առանց որոց չիք տիրանալ ումեք հոգեճոխ գանձին .  
 Սերտեսցին ապա առ ցոյցըս խընդրոց պատրաստ 'ի ձեռին ,  
 Յորոց թեւակուռ մըխիլ ախորժեն 'ի հանձար նըրբին .  
 Անդ քերթողահայրն իսպառ բերկրեսցի յիւր հըրահանգին ,  
 Օ իւր թէնդորոսս 'ի գըրուած գըգուեալ ճարտար ասածին .  
 Անդ քաջ արշաւէ նոր 'ի մասթէնէս 'ի զարդըս բանին ,  
 Ախորժ հեշտութիւն զեղեալ 'ի հոգիս կացըրգականին .  
 Անդ և Կիկերոնն այն կորովաբան 'ի վէճս ատենին  
 Հըզօր ախոյեան կացցէ ջատագով որոց զըրկիցին ,  
 Հանցէ յերևան զոր ինչ հըրապոյրք նենգից ծածկեցին ,  
 Բզփղձուկն 'ի սիրտ յորդեալ լըսողացն 'ի վերջաբանին .  
 Յայտսիկ հըզօր նըպաստիչ ահա հանդէսք հռետորին ,  
 Ուղղել ըստ կարգի զոր թերութիւնք են 'ի բընականին .  
 Յարացիր համակ 'ի բան և 'ի գիր կըրթեալ 'ի նըմին ,  
 Արով քերթածոյ քոյին շարագիրք զարդու պըճնեսցին :  
 Չէ քեզ դիւրաւոր , մանուկ մըտացի , ճեմել դիւրագին ,  
 Թէ նախնեաց կանոնք գործադիր վարժիւք քեզ չըքաղցրացին ,  
 Օ օրացիր ապա 'ի ջոնս հետեման յառսն ըստ կանոնին ,  
 Անխոնջ տըքնութիւն կուռ տարրացուսցէ 'ի քեզ զերկոսին :  
 Սովաւ յաջողի վերելք 'ի սըրահ անդ ճեմարանին ,  
 Ուր Արիստոտէլ յուսմանցն ըսկըզբունս հորդէ իսկ զուղին  
 Կանոնք իւր նըրբինք սերտ 'ի յուշարան հոգւոյդ տարրացին ,  
 Եւ գործոցն արդիւնք 'ի վաստակ մատանց քոց առատացին :  
 Անտի թեւածեալ յիմաստից բարձունս բընաբան վարժին ,  
 Ի բարոյական զարդուց պանծացի մարդըն քո ներքին .  
 Բընազանց կըրթմանց գըտեալ հըպատակ անդ վայելչագին ,  
 Աըխեսցիս ուժգին 'ի յոյզ խորհըրդոցն աստուածաբանին :  
 Աւր անգուհըք անհաս խորութեան 'ի սքանչ հոգւոյդ քո բացցին ,  
 Բնդ նըմին և սէր 'ի բոլոր սըրտէ առ միակ բարին .  
 Անդ ըզմայլեսցիս յերջանիկ վայելս անանցականին ,  
 Անդ հոգիդ և սիրտդ աղաղակեսցեն , Աստուած իմ բաժին :  
 Սեր նախնեացն այս էր ճըշգըրիտ պայման լիարդիւն ջանին ,  
 Յայս աշխատեցան որք կանոնադիրք հետեման կացին .  
 Յայս ջանա՛ և դու յելարն բեղմնաւոր ուղղեալ անձնովին ,  
 Յորմէ լիացի կարօտ քոց մըտաց յօճան սոփեստին :  
 Բընիկ քո երկիր տուն արևելեայ սահման եղեմին ,  
 Բարւոք զետեղեալ 'ի կիսագընդիս բարգաւաճ մասին .  
 Ամրակուռ հաստէ ըզջիլսն 'ի մարմնի և զոսկերոտին ,  
 Օ անդամոցն առոյգ 'ի շարժման սերտեալ կաղմածն անդըստին :  
 Պետըն ցերեկեայ յառատ իւր բաշխոյս կարեաց կորովին ,  
 Ախա անդըր զեղու 'ի բոյսս և 'ի տունկս զօրութիւն ուժգին .  
 Բըրքմազգեստ դըստեր վարդացան մատունք 'ի դալ ծընողին ,  
 Ի գըլուխ Սասեաց նախասփիւռ ցոլմամբ լուսարփի վառին :

Քաջողջիկ սրբոտին 'ի խորոց կայռտէ կենսական ոգին ,  
 Արով կենդանին 'ի զօրեղ շարժմանն է թեթևագին .  
 Ի հովուտս ուղղոյն զբոսումըն ոգւոյ կենդանականին ,  
 Օրաց գաղափարս պայծառ նըկարէ յունական կային :  
 Օրնուենդ յայտանակ քեզ յաջողեցաւ յարգաւանդ երկրին ,  
 Տիպքըն տեսակաց 'ի պատկերատանդ վըճիտ արծարծին .  
 Բընաւոր լեզուիդ ճոխութիւն հարուստ քաղցրութիւն միջին ,  
 Յարմար գրրախեցք յամենայն հեգմունս գան ըստ պատշաճին :  
 Ըպա մի լիցի քեզ ըզհեղգութիւնն յարգել անարժան ,  
 Ար այնքան յաջող բարեշնորհութեանցն ես ասպընջական .  
 Պանն նախագոյն յուսումըն լեզուի քո հայրենական ,  
 Ըպա յայլ լեզուաց վարժումըն գայցես ըստ վայելչութեան :  
 Ընկարդ եռանդն է զոր ունին ոմանք 'ի շաւիղ ուսման ,  
 Լըքեալ ըզսեպուհն զօտարացն ունիլ ըզգենուն ըզջան .  
 Յորոց ամբարեալ ըզպէտս և զանպէտ անդր 'ի յուշարան ,  
 Օղղափաղփիւն մըտօք պարծին 'ի յանձինս գոլ գաղղիական :  
 Եւ որ խորդացն է բարոյք անհամբոյր ապաշնորհութեան ,  
 Յատուկ բարբառոյն իսկ պարսաւագիրք խեռ գըժնէանան .  
 Խուժագուժ ասել կամ բընաւ աղճատ ինչ գըռեհկական ,  
 Արուժ յայլ աղանցն 'ի համազգածից շատ են գովասան .  
 Խոտել չեն ինձ կամք զուսումըն լեզուաց այլոց շահեկան ,  
 Ըպա եթէ ոչ՝ էր ինձ արատել ըզշնորհ վերնական ,  
 Իխտեմ զայնպիսիս յօգուտս ազգային լինել պիտեան ,  
 Բայց որք ուղղասիրտ յայն բերին չափով բարեփառութեան :  
 Ի միտ առ ինձ աստ զոր ծառ գիտութեան կոչեմք ըստ բերման ,  
 Տընկեալ 'ի յաղին 'ի փորձ անձնիշխան մարդոյն հըրութեան .  
 Ըյժմ ըզնոյն հընարք պատրողին տընկեաց Ալբրոպեայ սահման ,  
 Արով ակնաբաց ոմանք չարասիրտք անզեղջ կուրացան :  
 Ըզմուար անուն կըրթեալ զեղխաբար ըզհետ գիտութեան ,  
 Յայնչափ խորութիւն անանցանելեաց չափ արկին սահման ,  
 Արով խորասոյղ անյայտ ընկրուզեալ գործին իմացման ,  
 Չարաչար զեղծումն անդր 'ի հաւատոյս եբեր յերևան :  
 Չէր նոցա 'ի միտս խորին այն առածն Ազեկիլէլեան ,  
 Աւղևից տաճարին առն չափարկուի չափ հազարական ,  
 Աւր անցք յաջողէր ընդ երիս չափմունս ուխին յորգութեան ,  
 Ի նըկարագիրն , 'ի բարոյականն , և որ յայլաբան :  
 Իսկ չափըն չորրորդ յորգէր յորձանուտս հեղեղանըման ,  
 Բնդ որ անցանել մըտաց չափողին էր անմարթական .  
 Օ՛ի անդ էր անդունդք խորին խորհըրդոյ սուրբ Արրորդ ութեան  
 Կախասահմանման և ծանօթութեանն անհաս զինչութեան :  
 Թէև չափ ձըգին անդ հազարաթիւ կատարեալ խակման ,  
 Բայց հասողապէս ընդ նոյնս անցանել չէ մըտաց մարդկան .  
 Ըն երկիւղածի յայսմիկ վայելէ չափ ըզգօնութեան ,  
 Չըձըկախլ յանհասն 'ի վընաս անձին , և որք են վերձան :

Յայս ծառ գիտութեան գրտանեմք զոմանս յայնց յանդ ըզնական,  
 Չափել 'ի գրրիչ որ յաստուածայինս են խորք անսահման :  
 Յոր ոչ ժամանեալ բերել ըստ կարգի ինչ ծանօթական ,  
 Սուր յայլեայլ աղանգ գըլորին անգ կոյր ըզկուրայն :  
 Ի զի և համակ 'ի յոյզս յամառեալ յոյժ յիմարական ,  
 Յանաստուած խորհուրդս ընկըզմին իսպառ իբրև զանըզամ :  
 Ի դէպ ժառանգեալ, զոր Պօղոս ասէ, պատիժ չարագան ,  
 Յոր մանեաց Մտուած ըզմուր գիտունս հեթանոսական :  
 Արք ոչ իբր Մտուած փառաւորելով զոր աստուած ծանեան ,  
 Ի կարիս անարգ անարժան գործոց գերի կապեցան ,  
 Եւ որք առ ըզգօնս ունէին զինքեանս՝ յիմարեալ գրտան ,  
 Կնձնանարգ չարեօք 'ի խորհուրդ իւրեանց երևեալ խոտան :  
 Յայսպիտի գըրոց 'ի բայց տար ըզբեզ, մանուկ Հայկազեան ,  
 Օ ի մի 'ի յորձանս անդր ընկըզմեացիս 'ի հոգւոյդ վրդեան :  
 Յողորկ տեսութիւն այնրմ գըրուածոցն է օձ 'ի դարան ,  
 Ի պատրանս չարին զառածել ըզմիտոգ անդր 'ի հայեցման :  
 Բարք հողածնելոց յերկրաքարչ բերմունսն է դիւրահաւան :  
 Եւ որ շողմէն , զայսոյն ըզեզուն ունի զաղուական :  
 Արում հաւանեալ 'ի հաս վերնային բարեաց յաստիճան ,  
 Չարաչար զանկումն իսկոյն կործանիս 'ի ներքին գեհեան :  
 Մի վըստահացիս 'ի հաստատութիւն մըտացգ անկործան ,  
 Մի մուտըս տացես սողոսկիլ 'ի ներքս ուխտին գիւական :  
 Կըլուիս է օձի խրոկեալ ընդ լանջօք թեփ կըռուողական ,  
 Ի մուխն առ անգամ արտաքըս հանել է տարժանական :  
 Հայեանց 'ի բազումս որք յանձնապաստան ողորմուկս անկան :  
 Կործանումն այլոց քեզ առիթ լիցի կալ 'ի գանդաղման :  
 Ար կայ հաստատուն ըզգոյշ եզիցի, Պօղոսի է բան ,  
 Օ ի մի 'ի կայից իւրոց սահեցի յաղէտ հիգութեան :  
 Բնթերցիր ապա զայլ աղգացն ըզգիրս ըզպիտանեկան ,  
 Օայլոցն հանձարոյ վաստակ քեզ օգտից արարեալ մառան :  
 Իսկ որք 'ի գըրուածն են վատախորհուրդ լիրք և մօլեկան ,  
 Իբրև 'ի ժանտէ փախիր յայնցանէ, լեր տարակայան :  
 Եւ յսպէս յարգեսցես բարեպաշտութիւն քո ըզնախնական ,  
 Սոյլմբ պանծացիս զաւակ գոլ ընտիր հարց վեհազնական :  
 Օ ի մեր երջանիկ ճընօղք 'ի սըմին միշտ եդին ըզջան ,  
 Յայս աշխատ եղեն չարատել ըզկարգն երկիւղածութեան :  
 Տէս ինձ ըզնախնիս յեղծումն աղանգոց հուժկու ասոյեան ,  
 Տարագիր յերկրէն մերժել ըզհերձուած Թէոզորիտեան :  
 Տէս և զ( )ձնեցին ողջախոհ բանիւք լի բշտեմարան ,  
 Յանխառնակ անգոց բաշխիչ քաղցելոց ըզմաքուր ցորեան :  
 Հայեանց յերջանիկ դուռնդըն զև սնդեանց հոգւով խրախուսեալ ,  
 Եւ սուրք հաւատովն ըզկեանս աշխարհի յոչինչ համարեալ ,  
 Արով գոռողից զեղջիւր փըշրեցին գոռ գիմագրաւեալ ,  
 Յաղանգոյն Պարսից զերկիր սըրբեցին բընաջինջ բարձեալ :

Տես ըզ՛նորհալին վերնաձիր շնորհօք հարուստ ճոխացեալ,  
 Սուրբ զեկեղեցւոյ մեր զաւանդ մաքուր յայտնի հըռչակեալ.  
 Հըզօր երգահան նոր ոմն Հովերոս յազգիս երևեալ,  
 Բ՛զՄատեանըն սուրբ ՚ի չափ ներդաշնակ մեզ քաղցրացուցեալ:  
 Նոյն և զորս մըտօք ողջախոհութեան սոցին հետևեալ,  
 Ի զարդ Հայկազանց յերկս աշխատեցան միշտ նահատակեալ,  
 Նոցա՛ լեր, մանուկ, սիրով հետևօղ ՚ի նախանձ շարժեալ,  
 Բ՛զնոյնս ընդզըրկեա՛ հոգւոյդ առաջնորդ յիմաստ զարգացեալ:  
 Համայն նախահարք առ ՚ի հոգևորն մեզ ծընօղ կարգեալ,  
 Ի բարեաց շաւիղ անդր հըրաւիրեն գործով քարոզեալ,  
 Հետևեա՛, որդեակ, անշեղ հետևեա՛ ուշ ընդ կուրծս ածեալ,  
 Օ՛ի ընտրագոյն հարց զաւակ զարգացիս հարազատ ընտրեալ,  
 Յիմաստիցն աղբիւր նոցին դիմեսցես ՚ի հոգւոյն բըղխեալ,  
 Բ՛զհոգւոյդ ծարաւ զովացուցանել ՚ի նըմին վարժեալ:  
 Օ՛այն մատուակեա՛ և որոց յազգիդ անձինք ծարաւեալ,  
 Օ՛ի այր ազգասէր փայլեսցիս յերկրի փառօք պերճացեալ,  
 Չէ ջուր հոգեբուխ աղտիւրըն ճախնին աղանդաւորեալ,  
 Լ՛յլ ՚ի շնչաւոր բըղխմանէ թորթոր ինչ գայաւազանգեալ,  
 Մի՛ մօտիր բնաւ, մի՛ առ շուրթըն տար մըտօք մանկացեալ,  
 Օ՛ի յանշէջ գեհեանն անդ անդով ՚ի տապ թողու պապակեալ:  
 Գիտեմ՛ խոր անդունդ ՚ի միտըս մարդոյ Ա՛նն փապարեալ,  
 Որ ո՛չ լիանայ որքան գիտելեօք լընուցու զեղեալ,  
 Բայց և զայն գիտեմ՛, զի յանպիտեանս մընայ միշտ պասքեալ,  
 Թէ՛ն ծովաբար յորդեսցին ՚ի նա ու խբըն սըղտորեալ:  
 Օ՛ի թէ իսկութիւն զուտ է առարկայ մըտաց կարգեցեալ,  
 Ո՛ւր գըտցես ըզնոյն միշտ զուրուականօքն ՚ի դեգերս եկեալ:  
 Օ՛ուտ ճըշմարտութիւն յաստուածսիրութեան կայ բովանդակեալ,  
 Որ կից ունիցի և զառ ընկեր սէր ուղիղ չափակցեալ:  
 Օ՛այր ընկերասէր առ ՚ի Ա՛ստուածոյ ասէ հըմտացեալ,  
 Որ ՚ի Յիսուսեան սիրոյն վարդապետ սիրոյ ներվարժեալ:  
 Եպա՛ որ անձին վարժապետ զԱ՛ստուածն է սեպհականեալ,  
 Նա տեղեկացաւ բոլոր իսկութեան որ յէսս հաղորդեալ:  
 Յայս յօժարամիտ թևարկեա՛ հոգւով համակ վաստակեալ,  
 Օ՛ի ճըշմարտութիւն առաջին ՚ի քեզ լիցի շողշողեալ:  
 Եւ ըստուգութիւնքն իսկ ՚ի գիտելիս պայծառ ցօլացեալ,  
 Յագուրդ ՚ի բաղձանս քոյին զեղուցուն ճոխ լիացուցեալ:  
 Ե՛ր ընկերասէր նոյն և ազգասէր հեզ և հրահանգեալ,  
 Բեզ յատուկ պարտիս ըհասարակաց բարին վերագրեալ:  
 Օ՛ի թէ մեռանիլ վասըն հայրենեաց քաղցր է և գովեալ,  
 Օ՛ի նչ այլ ինչ մընայ՝ որում աղգայինք չեն պարտաւորեալ:  
 Հարց քոց ըստ հոգւոյ այսպէս ՚ի շաւիղ բարուցն ընթացեալ,  
 Նախ զարքայութիւնն Ա՛ստուածոյ խընդրել և զորս յարակցեալ:  
 Լ՛յն ամենայն իսկ ՚ի պիտոյս մարմնոյ մերոյ պահանջեալ,  
 Լ՛ռատ յաւելցին ըստ Տէրուհական վըճռոյն խընկեցեալ:

Յայտասիկ 'ի ձիրս որովք յաջողի լինել յառաջեալ .  
 Բայց եթէ ուսմամբ իմաստից 'ի գիրսն բովանդակեալ .  
 Անիլ ըզհանձար որ ոչ յերկրաւ որ շնչոյն շրմորեալ ,  
 Այլ որ յաղբերէն սուրբ իմաստութեան մեղ գետահետեալ :  
 Անրսպառ գանձուց կենտակիր մըթերք են մեղ գիրք տուեալ ,  
 Յորս ունիլ ըզկեանս առ ամենեսին գոյ խոստովանեալ ,  
 Արքան խորագոյն 'ի ներքսն մըտցես ուղղապէս յուզեալ ,  
 Այնքան ճոխասցիս յանգին մարգարտին գիւտ փարթամացեալ ,  
 Յարացիր ապա աշխատիլ , սրգեակ , սրտեռանդն երկովք ,  
 Արով զօրացիս յազգին ճոխանալ օգտաւէտ բերովք .  
 Վաստակօցն վիշտք մի ինչ հարթուսցեն ըզքեղ արհաւրօք ,  
 Իբր անձեռ ընհաս ըզգանձուն ցուցեալ զքոտացսն բարեօք :  
 Առ անգամ մի մուտ գրտեալ յառաջին դուռն սերտ մըտօք ,  
 Հորդի քեղ անքոյթ դիմել 'ի յառաջ յաջողակ շաւղօք .  
 Բազու մք 'ի սկզբան 'ի բաց խըրտուցեալ դանդաղոտ կամօք ,  
 Օրկեալ մընօցին 'ի շահուց՝ զոր տան գիրքն տակոսեօք :  
 Մի լիցի և քեղ սովին վարակիլ անշահ հեղգանօք ,  
 Մի զառածեցիս յանհամբոյր կոշտումն տըմարդի կենօք .  
 Օի կեանքն սոպուաց է մեռելութիւն շուրջ պատեալ չարեօք ,  
 Յորս ոչ ժամանէ լոյս ըզգատութեան շնորհացն աւետեօք :  
 Չէ նըշան բարւօք յառաջգիմութեան վողն արշաւանօք ,  
 Օր ոմանց գործեալ կարծեն ճոխանալ գըրոցն արգասեօք .  
 Շըրջել միայն թուղթ չըտայ ամբարել հանձարս ընտրանօք ,  
 Թէ ոչ և ըզգած տարրացի հոգին խոր իմացուածովք :  
 Առեալ եմք նախնի զոմն վարժողէ ընդ խաղ խաբանօք ,  
 Յընթերցուած գըրոց վարժել զանասուն խօսիլ պարծանօք ,  
 Չամիչ մըթերեալ 'ի թըղթամիջին հուպ առ հուպ կարգօք ,  
 Արջոյն առաջի դընէր 'ի տեսիլ բացօք երեսօք :  
 Այր ըզնախաթերթ մըթերին ճաշակն առեալ հըրձուանօք ,  
 Ի միւսն դիմէ դարձուցեալ ըզթուղթն մըռմըռանօք .  
 Կարգաւ ընթացեալ 'ի դարձուած թերթից սերտ ախորժանօք ,  
 Բզմեծ ինչ մտտեան 'ի հինգ վայրկենի եզերէ փութովք :  
 Կնա՛ աղաչեմ , հարց արջոյն այնմիկ յոյժ թախանձանօք ,  
 Ժրտեա՛ աղաչեա՛ կըրկնել զընթերցուած անյօդ բարբառովք .  
 Տե՛ս՝ տայ քեղ գիտել , և կամ զոր կարգաց գիտէ՞ ինքն արդեօք :  
 Յոյս տիպար իմա՛ զհապճեպ ընթերցողսն վաղվաղանօք :  
 Աթէ քեղ կամք են ըզքսղըր ճաշակ ընդունիլ գըրովք ,  
 Հանդարտ ընթերցիր , խորին մըտածեա՛ զուտ ու շի ու շովք .  
 Այսպէս յարգեսցես ըզվաստակըս քո սրանձագին շահուք ,  
 Այսպէս մարդկօրէն ընթացքըդ զեղցին հարուստ պարգևօք :  
 Այլ և սովորոյթ յոմանս տարրաւոր ինչ կարձմըտութեան ,  
 Արք ըզկատարումն 'ի սուղ միջոցի ըզմանկանն յուսան .  
 Ապա եթէ ոչ քըրթմընջիւն 'ի զուր , յառնեն ամբաստան ,  
 Պատճառ ըզհեղգանս վարժչին դընելով անագան ուսման :

Կարգաւոր վարժչին կարգաւ է ընթացք 'ի վարժըս մանկան .  
 Ուսիր յաթուծայց՝ որք շարակարգ եալ կան 'ի ըսկըզբան .  
 Նախ զայբն ուսանի ասել ապա բեն և որք ըզհետ գան ,  
 Յայբէն անդր 'ի քէ չոսաչէ թեաճել մարախանըման .

Կարգաց խըրթնութիւնք հետ ընդ հետ յայտնի 'ի լոյս վերածան ,  
 Մինչ ուղի անքոյթ գիտել՝ որոց փոյթ է բարւոք կըրթման .  
 Յոյս կարգ գեգերեալ մըտառու երկօլք 'ի սէր բազմաջան ,  
 Փոյթ ընդ փոյթ սերտի գիտութիւնն սուրբ 'ի միարս մարդկան .

Իսկ եթէ ըշտապ ուսանիլ խնդրես գիւր և առ ժամայն ,  
 Միայն ըզնօգին սուրբ ունիլ խընդրեալ քեզ անմիջական .  
 Նըմա է զեղուլ գետաբար ըզձիրս շնորհաց վերնական ,  
 Նըմա է բանալ իսկ և իսկ գըրոցն ըզճաճուկ դարան .

Փոյթ կատարագործ գիտելով զնօգին արդեանց գիտութեան ,  
 Լըցուցիչ իսկոյն համակ հանճարով զէքքս բանական .  
 Միթէ և առանց ինչ յարժանաւոր երկըս տաժանման ,  
 Արձի հասանէ դոլ նօգւոյն ձըրիցն անօթ ընտրութեան .

Եթէ առ սընունդ մարմնոյ՝ երեսաց քըրտունքն են պիտան ,  
 Ի սընունդ հոգւոյն ձրքան տաղտապանք արդեօք 'ի գէպ գան .  
 Չանացիր ապա , անճանձիր ջանա յերկս աշխատութեան ,  
 Թէև երկարի միջոցն ըստ կարգի բարւոք ըստացման .

Վարժողին վաստակք հանգիստ ըզգենուն 'ի քո յառաջման ,  
 Ի երբըն քոց մատանց լընուն 'ի նըմա աղբիւր բերկրութեան .  
 Նա երկայնամիտ տարժանի 'ի քեզ յուսով բարեղան ,  
 Երկայնամըտել և քեզ իսկ պարտ է յանխոնջ դալակման .

Նախնիք մեր զերկայն հատեալ ճանապարհ յերկիր հեռաստան ,  
 Ի գրունս իմաստից բազմամեայ վըշտօք յերկար տըքնեցան .  
 Եպա ցանկալին ըստացեալ ըզգանձն անըսպառական ,  
 Չանասէր հոգւով լըցին գիտութեամբ ըզտուն թորգովեան .

Նոյն և առաջին պետքըն վարժողաց տոհմին Յաւանեան ,  
 Դիմեալ Ագիպտոս 'ի նընդիկս և յոյլ մարզըս բացական .  
 Նիւթ հաւաքեցին 'ի կըրթու մն ազգին յաւէտ նըրբական ,  
 Օ իմաստից տաճար հիմնարկեալ փառօք յիւրեանցն երկրաստան .

Դու 'ի սուղ աւուրս չասեմ իսկ տըքնեալ յիմաստիցըն ջան ,  
 Ցանկաս հեշտակի ոմն իմաստուն գոլ յոյժ գերազրական .  
 Յայդ եռանդըն շատք 'ի կարճամըտաց ջեռան վառեցան ,  
 Սակայն անպըտուղ լըքին զօգտաւէտ շընորհ գիտնական .

Լը երբեմն աճել պառաւի միոյ առ երէց շինին  
 Բզթոուն իւր՝ յաւուրցս քառասնորդ պահուց յեօթնեակ առաջին .  
 Յողերս անկանէր ժըտէր պաղատէր սերտ թախանձագին ,  
 Փոյթ ունիլ կանուխ բերել 'ի լըրումն ուսման իմաստին .

“ Եւնել քահանայ տենչ սաստիկ՝ ասէ , գոյ 'ի մեր սըրտին ,  
 Օ ի ըզպատարագ մատուցէ յաւուր յարութեան զատկին ,  
 Նորին աղագաւ խընդրեմ ըզքս ջանք անդուլ վաստակին ,  
 Երգեամբք 'ի գըլուխ հանել՝ որում յիղճս եմք ամենեքին ” .



Ի ծիծաղ շարժի բարձրագոյն դրոհնդ առնէ անդրտին ,  
 Ի զարմանս եկեալ երէցն յայն խընդիր տրգէտ պառաւին ,  
 “ Ախոսս քո խեղացդ՝ ասէ , պառաւ իկ ամօք հընադին ,  
 Ար զուսման միջոց չածես ըղմտաւ և զառման կարգին :  
 Թէ այսօր ըղկարդ քահանայու թեան քու՛մ այդ տաց թոռին ,  
 Յըզատիկն հաղիւ ըղքառասուենս իւր բերէ յաւարտին .  
 Լ՛րբ ապա ուսցի Վերական Սաղմոս ընդ Հարականին ,  
 Լ՛րբ հրահանգեսցի ուղիղ ՚ի յաղօթսրն յամագըրբին ” :  
 Յայս խելս են բազումք՝ որք զորդիս յիմաստս վարժեւախորժին ,  
 Պանան ըղձանան զի ըղդոյզն աւուրբք ինչ սոփեստասցին ,  
 Իսկ մինչ տեսանեն երկարել փոքրս մի ժամանակին ,  
 Լքբանեն ըղնոյն ցրմահ ըղբաղեն յիրս աշխարհային :  
 Աւնին իրաւունս երբ վարժեար ծուղայ ՚ի վարժ համբակին ,  
 Բայց ոչ երբ տեսցեն՝ թէ որ հրահանգէն , ջերմ է ՚ի ջանին .  
 Ապա զի լիցի գանգատն իրաւամբք , առցի ՚ի քընին ,  
 Եւ թէ իսկապէս , չիք անդ ուսման յոյս փոխեսցի տեղին :  
 Բայց և զայս իմա՛ զի ոմն յառաջնոց վարժչաց զմանկըտին ,  
 Յաշակերտելոց նախ այլ ուսուցչաց վարձս առնոյր կըրկին .  
 Օմին ՚ի մօռացօնս տանիլ՝ զոր ուսեալն էր նախ ըղյոռին ,  
 Եւ զմիւսն ՚ի վարժ ուղիղ կանոնաց իւրումն արհեստին :  
 Չէ նոյն ճանապարհ որոց մանկածուք են յուսման ոճին ,  
 Թէ և ըստ կարգի դասեալ են կանոնք ըստ բաւականին ,  
 Նորասիրութիւն նոր կարգ հընարէ տաղտկացեալ ընդ հին ,  
 Եւ որ զինքենէ կարծէ ինքնիշխան գործէ՝ զոր կամին :  
 Յայս իսկ և մանկանց մինչ միոյն առ միւսըն տեղափոխին ,  
 Լքծիլ ընդ դրժուարս հասանէ՝ մինչև յոճն ընտելասցին ,  
 Բնորեալ ուսուցիչ զոմրն ողջախոհ և ՚ի ջանս զարին ,  
 Յարացիր ՚ի վարժս թէ և ժամանակք փոքր ինչ երկարին :  
 Յեռանդն իմաստից վառեալ անձնովին տըքնիլ ՚ի նըմին ,  
 Փուժով զարգացցիս թեւածեալ ՚ի վեր քան ըղչափ քոյին ,  
 Վանգի որ չափով ինչ վերաբերին՝ ասէ Հնորհալին ,  
 Վեր քան ըղիւրեանց չափըն վերանան յիմաստ վերնային :  
 Թէ անդր ՚ի սկըզբանց մերս աղգի յատուկ պայմանք վերադրին ,  
 Վոլ առատասիրտ բարեպաշտ տնկեղձ տեօղ ՚ի վըշաին ,  
 Յառսըն մեծագործ ՚ի խորս իմաստից ըղբօն և նըրբին ,  
 Հիւրասէր սըրաիւ բերեալ ընդ ամեն խոնարհ հեղագին ,  
 Նոյն և յայլ մասուենս բարեաց քաջաջան յօգուտ աշխարհին .  
 յամասէր հոգւով յարգիչ կըրօնին՝ գըթած արնանկին .  
 Իու էր խորգանաս յայտանակ ձըրից քու՛մ բընիկ ազգին ,  
 Լ՛ր շոյտ յարիս յայլս որ յետոյ ՚ի կարգ մարդկութեան մըտին :  
 Ասես ինձ այժմիկ փոփոխեալ սոցա թէ և ըստ մասին ,  
 Ներհակօքն իսպառ վարակեալ Հայկեան աղինք տեսանին .  
 Յիւրեանց աղգայինս չունին զնոյն սէր՝ որպէս և պարտին ,  
 Եւ ոչ առ իմաստ բերումն ուժընդակ ըստ պիտեանին :

Բայց գիտե՛ա՛ դու զայն նրմա վիճակեալ 'ի բառնալ Թագին ,  
 Արով իմաստից նըշոյն ու ծացաւ եթող 'ի մըթին ,  
 Սահմանք աշխարհաց յորըս ցըրուեցաւ ազգ մեր ըստ բաղդին ,  
 Յայլեայլ զգածմունս զազգային ըզբարս յեղափոխեցին :  
 Առայ զի ասէր Չամչեան Միքայէլ ըզգօն բաբունին ,  
 Օ ազգին դիւրափոխ բարսըն բերելով յօտար նահանգին .  
 “ Կերակրոյն սրահոց յանգիւտ 'ի Վընէժ գոլոյ գաւառին ,  
 Բակլայ 'ի Պօլսոյ տարան սերմանեւ 'ի վանս Աբբային ,  
 Տընկեալ 'ի պարտէզ յոռոգման խընամս ետուն ըստ պարտին ,  
 Բայց նա ըզվարունկ անդ պըտղաբերեաց փոխան բակլային .  
 Ըզկուտ վարընկոյ սերմանեալ 'ի գալ իսկ ժիւսոյ ամին ,  
 Վընդակեր դըդում անհամ դեղնագոյն 'ի բուն վարընկին :  
 Այսպէս այժմ՝ ասէր , ոմանք 'ի Հայոց այնպէս զաղփաղփին ,  
 Մինչև զհայու թեան անուն չը յիշել յայլազանց երկրին .  
 Արով օր աւուր կորուսեալ ըզյարգ և ըզուրք անձին ,  
 Առ օտարազգիս անկած ցուցանեն զազգըն գըլխովին .  
 Իսկ որք 'ի Յունաց՝ կամ յայլոց ազգաց ոյք անդ պանդըխտին .  
 Հաստատուն յիւրեանց որպէս վայելուչ կացեալ 'ի բընին ,  
 Ի շուք 'ի պատիւ որպէս ազգասէր յարգին մեծարին ,  
 Օր քան զօր հարուստ ճոխանան փառօք հողւոյ և մարմնին ” :  
 Այսմ առիթ 'ի մեզ՝ ոչ թէ բընութիւնն է համազգային ,  
 Քան թէ կըրթութեան պակասուրդ 'ի սէր անդ համացեղին .  
 Արդ զի ըստ կարի հորգեցաւ շաւիղ ընտրութեան բանին ,  
 Ամօթ մեծ է մեզ մընալ անճաշակ ազգասէր շնորհին :  
 Թէ ըզմեզ որդի դընեմք հարազատ սուրբ Առսաւորչին ,  
 Թէ հարցն առաջնոց զանձինս համարիմք զաւակ հողեծին ,  
 Մի՛ յետնեալ կացցուք յօրինաց նոցա սուրբ և հեշտագին ,  
 Մի՛ լըքցուք ըզշնորհն որում տիրացաք 'ի բնէ անդըստին :  
 Կըրթեսցուք 'ի սէր , կըրթեսցուք յիմաստ անդր երկնաւորին .  
 Կըրթեսցուք բարեաց թողուլ զօրինակ մերս ազգատոհմին ,  
 Ապա թէ ծուլամք բերել զօր գիտեմք պարտ ըստ սրատշածին ,  
 Արդիւնք մեր նախնեաց ըզմեզ դատեսցին յատեանն ահագին :  
 Յարեոցուք յազգ մեր , սիրեսցուք զազգ մեր սէր համեստագին .  
 Մի՛ ըզփառս մեր թողցուք 'ի յագուրդ որդւոցն օտարին .  
 Իսկ թէ յարիցէ ոք ոտընհարու չըքոյ Հայկաղին ,  
 Կամ զգաստացուսցէ կամ ընդ վայր հարցէ միութեան Ադին :  
 Յայս ձիր ազգասէր բոլոր մեր Ախնիք խըրախոյս բարձին ,  
 Ի նոյն ջանացան ճոխացուցանել ըստացուած անգին .  
 Է՛ զի՛ հետևող գըտեալ ըզտաղանդ իւրեանց յարգեցին ,  
 Է՛ւ է զի՛ յանսաստ բարոյից ոմանց անպատու կացին :  
 Սեզ եհաս ահա ասպարէզ ջանից 'ի նոյն վերըստին ,  
 Ի մէնջ պահանջի անվեհեր ճըզնիլ յօճան բոլորին .  
 Մի՛ զարհուրեսցուք յանպէտ հընարիցն օտարախորդին ,  
 Օ երծ և յաջողակ աջով ճեղքեսցուք զՎեդա եհոնըն հին :

Յուզմունք խորհրդոց բերեն այժմ 'ի գէմոգ զանձկու Ե'նրչան ,  
 Քոց մարմնոյ հարանց ունիլ աստանօր զիս ծանօթական .  
 Բզհարցդ ըստ հոգւոյ բանից դիմեցմունք յերկար ձրգեցան ,  
 Չանձիրս մատուցին առ 'ի մարմնոյս միշտ խոնարհ քո ունկան :  
 Փորձեցայց և յայսմ ըզհրօչակելիս ածել յանդիման ,  
 Օ, Ի քաջ ծանիցես թէ յորպիսի վեհս ազգդ էր ճսխազան .  
 Օ, որպիսի հրգօրս 'ի գըրուխ ունէր բարեաց տպաստան ,  
 Կամ զոր զօրապետս անյաղթ պըսակեալ 'ի մարտ պայքարման :  
 Լուար ըզ՛,ախնւոյն 'ի մեր միապետս գող միահեծան ,  
 Յաղթօղ հանդիսիւ ժառանգ հայրենի վայրին եղեմեան .  
 Օ, Հայկայ մաղդեղանց որ քաջին նախնւոյ անպարտ ախոյեան ,  
 Արոյ իսկ հանդէսք փողեն հրօչակաւ յաշխարհ ամենայն :  
 Տեսեր և զ՛,րամն արհօր աշխարհաց այր անդուգական ,  
 Ար հրգօր բազկաւ 'ի ծովէ 'ի ծով տիրեաց անխափան .  
 Ելից զամենայն բընիկ բարբառով իւր հայրենական ,  
 Մինչև այլ ազգաց յանուն նորա զազգն՝ ասել Մ,րամեան :  
 Տիգրանն առաջին աջն Կիւրոսի այր դիւցազնական ,  
 Անզոյգ զօրացեալ 'ի մըրցմունս մարտից հրգօր յաղթական ,  
 Ի շամիււր ախիւն թոքազերծ խառմամբն Մ,ժգահակասպան ,  
 Ար փշապօրէն սարսեցոյց զաշխարհ 'ի կեանս իւր համայն :  
 Վահագն ահաւոր գոռ փշապաղանց սաստ սասանական ,  
 Հըրագէս ընդ բոց վաղէալ պատանեակ ընդ փող եղեգան .  
 Արոյ դիւցազնեալ 'ի պաշտօնս ազգաց յերկրին Վ,ըրաստան ,  
 Պաշտօն ընդ ունէր յըստ իւր հասակին փթխարի արձան :  
 Մ,րտաչէս պարթև գըղըրդիւն երկրի զինեալ յարու թեան ,  
 Ի կայտառ տիոց մեծամեծ գործոց կարծեաց տուչական ,  
 Արոյ յառաջեալ յաջող հանդիսիւ քաջարի մըրցման ,  
 Բնդարձակ խաղայր 'ի նուաճ երկրացն Մ,ղեքսանդրանման :  
 Տօրք ահագնադէմ հըսկայ նահապետ տոհմին Մ,նգեղտան ,  
 Ե,յր անպարտելի յազգէն Պասքամայ սերունդ Հայկազեան ,  
 Ի տորգ արու թեան ճըմլիչ աշխարհի յանձուկս 'ի վարան ,  
 Քարընկէց թափով աղմըկիչ ծովու հողմ նաւախործան :  
 Տիգրան մեծ հրգօր ահարկու 'ի զօրս անդ հռովմէական ,  
 Մ,րքայից արքայ հարուստ ճոխացեալ մարտիկ ախտանեան ,  
 Վեհ զօրապետաց աշխոյժ պարագլուխ Սըմբատ Բիւրատեան ,  
 Յաղթական երգոց ժառանգ սեպհական ցալիս ծերութեան :  
 Մինհրդատ ահեղ 'ի մարտըս արեաց շնթարկ փայլական ,  
 Ի ժանիս սըրոյ 'ի տարափ նեաից վագր ամպադարան .  
 Շահատակ անյաղթ 'ի զօրս Հըռովմայ մահու ժանտացան ,  
 Բաղմազգի լեզուաց ուղղախօս բանիւք անսըխալ մատեան :  
 Խոսրով վեհափառ արքայից արքայ բազուկ անսասան ,  
 Մ,շխարհատարած ձեռն կարկառեալ անդր 'ի հեռաստան ,  
 Ի վըրէժ արեան իւրոց համազգեաց առ ճետ Սասանեան ,  
 Անչէջ հըրդեհեալ գեր քան ըզհընոցն այն Բաբելրական :  
 5 36

Կօռնակ կորովի քաջակուռն ոգի յամաց ձրգարան ,  
 Վանիչ կայսերաց բազուկ տապալիչ զօրապետ անվան ,  
 Արտուռն ահեղ կայծակնարկ 'ի կեանսն կայսերական ,  
 Հայկազանց ուժոյն լիարդին զեղեալ հարուստ գանձարան :  
 Պանծալին Տրրդատ յաւերժայաղթից հուժկու յաղթական ,  
 Օօրէն Աքիւլեայ դրրուատեալ 'ի փառս անձին արուժեան ,  
 Երկոքումբք զինեալ 'ի զէն և 'ի խաչն տէրունական ,  
 Բարձրութիւն ազգին յերկուս յաջողուած լու փառազնական :  
 Արտաւազդ հրգօր ընտիր ըսպայից ճեղ Վանդակունեան ,  
 Այաղթ աջակից Տրրդատայ մեծի պարիսպ վիմարդեան :  
 Անիւ բոցեղէն հուլիեալ սաստիկ 'ի մարտկաց խրոան ,  
 Լափեր անաչառ որպէս ըզխըռիւ ըզգօրաց խուժան :  
 Վարազդատ արքայ՝ պերճութիւն քաջաց սիրտ Աքիւլական ,  
 Կորովի յաղեղն նորապանծ փայլեալ յոգւոյն արուժեան ,  
 Քիովնէքստակ սստեալ ընդ Ափրատ 'ի վազս արշաման ,  
 Բզբընամարտիկս ըկճելով 'ի խաղսն ոլումպիական :  
 Գազաւոն ամուր պատուար արքայից պետ Կամսարական ,  
 Օօրեղ դիմադրաւ գոռ արշաւանաց նեղելոց պաշտպան ,  
 Սահակք երկոքին 'ի Բագրատունեաց սուր երկբերանեան ,  
 Յանվէհեր գրոհին բաջավարժ մարտիկք բուռն մրցական :  
 Առոմ Սոկացի շահատակ շքեղ մեծարգոյ իշխան ,  
 Բնդ դաշտ բոցասփիւռ ծաղկաճեմ վազիւք կացեալ փրկարան :  
 Վարդան այրընտիր արգոյ նահատակ վէհ Վամիկոնեան ,  
 Քաջ հանդիսագիր խաչապանծ զօրացն քրիստոսական :  
 Արշաւիր յարշաւս աջնղ թեակից առիւծ 'ի խրոխտման ,  
 Օարդ մարտի 'ի փառս 'ի Կամսար տոհմէ պրտակ քաջութեան :  
 Վահան Վամիկոն հրգօրաց հրգօր՝ վէհ քաջազնական ,  
 Արաքանչ մարտիւ սասանիչ սարսիչ պետին Պարսկական :  
 Վասակ հարազատ վէհին Վահանայ վրկայ սքանչազան ,  
 Ի մարտ միջամուխ ջարդիչ նիզակացն եղէգնանըման :  
 Աերսէհ և Հրահատ կորիւնք առիւծու ծընունդք Արշաւրեան ,  
 Շողմամբ սուսերաց արեաց ահարկուք յորտըս գոռման :  
 Աերսէս պատրիկ մեծ գանձապետ 'ի տան Կոստանդիական ,  
 Հոգեգանձ յոգի քաջարեաց զամպար լոյս արեմըտեան :  
 Արմին իսկ կըցորդ բազուկ աննուաճ Աերսէհ Բասենեան ,  
 Պանծ Արքանազեան ձեռին արուժեան 'ի տան Յունական :  
 Յովհան քօշ նեցուկ ամրութեան Յունաց պերճ պատըսպարան ,  
 Ահընկէց 'ի գունդ թըշնամոյն զօրաց պետ զինուորական :  
 Արտաւան արի արանց բարձակից զսրմ Արշակունեան ,  
 Գոռ ապրտամբաց գըլխահար խեթկիչ յեղջիւր զօրութեան :  
 Արտաւազ անզոյգ խրոխտ զօրավար գոռ մենամարտեալ ,  
 Հոգւով և մարմնով 'ի կեանս և 'ի մահ քաջ զինավառեալ :  
 Արմբատ բազմայաղթ եղջիւր սարասուր հուժկու ոգորեալ ,  
 Սահաբեր հարուած արքայից 'ի խիթան անդարման բերեալ :

Մուշեղք Մամիկոնք յանդրիս մատենից անմուաց դրրեալ,  
 Մինըն առ Պասալու և միւսն առ Մօրկաւ խրրոխտ փառազնեալ,  
 Գայլ Վահան ասեղ ճակատու յաղթող հրղօր պերճացեալ,  
 Ի ժանիս սրբոյ ամեհեաց ջարդիչ հնարագէտ վարժեալ,  
 Տանըն Ելլադայ պարծանք Մանուէլ բազուկ բարձրացեալ,  
 Բազմապերճ գործոց քաջամասնութեամբ շքքեղ մեծարեալ,  
 Ըշտ մըսակեր ասարկու անուն յոյժ ջըլապընդեալ,  
 Ի բերանս աղգաց անծասկ դիմակալ յաղթանակս առեալ,  
 Վասակ սիսական իշխանիկ անոյշ առանձին վառեալ,  
 Բիւրուց թըշնամեաց ընդ կոխ կործանիչ ճոխ շահատակեալ,  
 Վասակ և Վահակ վեհազունք Սիւնեաց մենադէն վառեալ,  
 Խրրոխտ թեարկուք ըղհոյլ յոգնաթիւ քաջերագ ցրուեալ,  
 Ըշտ շահընշահ երկաթ յարութիւն զօրութեան մըտեալ,  
 Կարծրակուռ սուսեր սերտ սողովատիկ հատու պատրաստեալ,  
 Մուշեղ հարազատ երկաթն Ըշտոյ բոց վառ բորբոքեալ,  
 Օեղէգնախրուիւ կոյտ սաշարողաց վաանեալ վարատեալ,  
 Գէորգ Ըշտոյ ձեռին արութեան մատն ամրահաստեալ,  
 Ըյր մարզպետունի անվեհեր առիւծ աշխոյժ սիգացեալ,  
 Մամուէլ քաջազն ասեղախրրոխտ հրղօր խիզախեալ,  
 Ըյր Գերջանեցի թագին Բուլղարաց իշխող վեհացեալ,  
 Գաւիթ մեծանուն այր կիւրապաղատ վեհից բարձակցեալ,  
 Վըսեմ զօրութեամբ ապաւէն Յունաց հանդիսափայլեալ,  
 Վահրամ և Վասակ Պահլաւք հարազատք վեհարև ցոլեալ,  
 Ըհեղք ՚ի գուպարըս պատերազմի նահատակք ընտրեալ,  
 Խաչատուրըն վեստ պերճ Շիրակունի առիւծ սիգացեալ,  
 Ըբբայից նըրպատ, իսկ յաչաղկոտաց կորանս մատուցեալ,  
 Թաթուլ Վանանդեան զաւակ ուժգնութեան վեհ զօրավարեալ,  
 Ի գունդ թըշնամոյն յաղթական բաղկաւն ասընկէց վառեալ,  
 Թոռնիկ Մամիկոն ձեռն անսարատելի մըշտայաղթ փայլեալ,  
 Ընդէն իսկ ուղղոյ թըշնամեաց ջարդիչ բըռնամարտ կանգնեալ,  
 Վասիլ գող վըսեմ գանձարան ուժոյ իշխանադարդեալ,  
 Յաղակարծս ՚ի զօրս շէշտընկէց կայծակն ամպոյ բորբոքեալ,  
 Թորոս Կոստանդեան պետ անվանական գահերէց կարգեալ,  
 Գահից Կիւլիկեայ տիրող փառազարդ սեսուհ սըխրացեալ,  
 Լեոն առաջին հարազատ սըմին հուժկու սանձացեալ,  
 Ի վեհ երեմունս առիւծ անվեհեր յանձն ապաստանեալ,  
 Վիգէն վեհազնեայ հըսկայ քաջալանջ տիպ տիտանացեալ,  
 Օէն Սանասարեանց ՚ի հունձ մարդկեղէն գերանդի սըրեալ,  
 Ռուբէն Լեոնեան հրղօրահանդէս նոր Մամիսն ձայնեալ,  
 Օանրութեան վիմաց գիւրաբարձ ոգւով հըռչակըս հարեալ,  
 Թորոս Լեոնեան ՚ի վէգս ընդ կայսերս գոռ յաղթանակեալ,  
 Բզգերեալ Վեաստս ՚ի վաճառս անդրէն ՚ի լոյտ ըմպահկեալ,  
 Լեոն Ստեփանեան սըսակ Ռուբինեանց շքքեղ վեհազնեալ,  
 Բաջարի մըրցմամբ թագ արքայական ՚ի գըլուխ կոպեալ,

Օտքսրէ հրգօր պերճ ըստառար անուն ահագնեալ,  
 Մարտից մըրցանախ աշխարհահըռչախ իսկապէս տարեալ .  
 Այր իւրաքանչիւր մի մի բերդ ամուր տիրահաստատեալ,  
 Օարուժեան ոգին անապակ սիրով վըճիտ փողփողեալ .

Սքա մեղ մարմնոյ հայր քաջակորով բարեօք ճոխացեալ,  
 Օազգըն Հայկաղնեայ յոյժ նախանձելի ազգաց չքեղեալ .  
 Սոյն իսկ քաջազունք 'ի մերումս ազգի անզոյգ զօրացեալ,  
 Արոց 'ի կըրչու յոյժ սակաւագիւտ յերկրիս երեւեալ .

Բայց թէ քո հանձար ազգային հարանց լեալ հետաքրնին,  
 Ի հարցուած գայցէ բաղձալով օւնիլ և զայլս ընդ նոսին,  
 Սքին միայն են 'ի մեղ քաջազորձ որեարք վէհագին,  
 Յիսուն և միով միայն պանծասցի ազգըն թորգովին .

Կարի յոյժ հրգօր հանդիսիւ շատ են զաւակունք Հայկին,  
 Ի խընամս ազգին անպարտ դիմագրաւք 'ի մըրցմունս մարտին .  
 Սքին ընարագոյնք ըստուեր զԱ. քիլեայ հանդիսիւքն արկին,  
 Գործ զարմանաւոր արդեամբ վըճարեալ 'ի փառս Հայաղին .

Այս եթէ ոչ ուր թողցուք և զորս գիտեմք պանծագին,  
 Յազգին բարձրութիւն չքեղ վէհացեալ 'ի չքնաղ մասին .  
 Բզնախապըսակ յազգին մեր Պարոյր զարքայն առաջին,  
 Բզմեծն Վաղարշակ պարթև խուզարկու հիմանն ազգային .

Արշակ փիմամուխ ըղնիղակն յարձան յեղերս Պոնտոսին,  
 Երուանդն ահաւոր 'ի հայեացս ական տոյժ որձաքարին .  
 Արտաշէսըն պերճ, Պիտակ դիմակէս, Տըրգատ Բագրատին,  
 Վահան Ամատեանց, Արշուիր նախկին, Աերսէհն առաջին .

Սպանդարատ կամսար, Այրսամ Սպանդեանց, Աերսէհ Ղիրակցին,  
 Խոսրովըն դարգման, Հրմայեակ Մամգուն, Վահան արձրունին:  
 Բարչոյ Վահնիկ, Վըրէն Վանանդեան, Խուրս Արշամունին,  
 Գրիգոր Սամիկոն, Մրժէժ Թագընիալ, Մրժէժ Գընունին .

Վահան Կամսարիկ, մեծն Աշոտ արքայ, վարդան փոքր արին,  
 Սըմբատ նահատակ, Աբաս Սըմբատեան, Բաբէկըն Սիւնին .  
 Ամրամըն Յըլիկ, Վասակ ծաղկահաս, Աշոտ Գընթունին,  
 Սըմբատ յաղթական տիեզերակալ անվէհեր ոգին .

Աղբլխարիայն այն գոռ ըստարապետ 'ի տոհմէն Արձրուն,  
 Ապիրատ քաջ այր սերունդ Հատանեան, Աշոտ քաջանուն .  
 Գագիկ Աշոտեան և Խաչիկ առիւծ Օշին վէհազուն,  
 Շապուհ Արձրունի, Շահան զօրավար, Ռուբէն մեծն արթուն ,

Կոստանդին հիւպատ, Այլասաթ աջող զօրավար զօրուն,  
 Կոստանդին հօւժկու զօրական սրրաեղ յորդոր քաջաբուն,  
 Բաւիթըն սիւնի պերճ իշխանացեալ յայս յետին դարուն,  
 Մըխիթարըն քաջ 'ի ճիգըն ոգւոյ բազկակից նորուն .

Կացին և քառեակ կայսերք ինքնակալք 'ի գահ Կոստանդնուն,  
 Սօրիկ և Լեոն՝ Վասիլ և Ալուստան Օրնունդք հայկազուն .  
 Արք չքեղ փառօք վէհ փառաւորեալք յարին քաջասուն,  
 Տանն Յաւանայ մթեր բարութեան ետուն բազմարդիւն .

Մեր այս են նախնիք և որք 'ի սոցայն կարգի գերադանց ,  
 Տ'իս բարեկրութեան ազգին յայտնեցան հայր 'ի հայկազանց :  
 Գանձեալ և զարդիւնս լըցին զաշխարհ մեր 'ի շուք պարծանաց ,  
 Լնպարտ զօրացան 'ի կոր կործանել զոգին թըշնամեաց :

Լպա մաննուկ դու հարազատ ծընունդ գերաբուն քաջաց ,  
 Օրացիր հըզօր անմուռաց պահել ըզշուք քոց նախնեաց :

Պանք յարավաստակ մի անգործ կացցէ 'ի քեզ և թըմբրած ,  
 Օ ազգին զօգտաւէտն 'ի հանդէպ կացն յամենայն շարժուած :

Օ աւակ ես քաջաց , մի շիջցի 'ի քեզ ոգին նախահարց ,  
 Օ արմ ես վեհազանց յարեաց 'ի նոսա յօրանալ 'ի վարձ :

Քանզի զի նչ օգուտ ունիլ ըզնախնիս 'ի մեծ դիւցազանց ,  
 Եւ նուաստանալ անտոհմից գործովք 'ի կարգ վատ արանց :

Լնդ քեզ օգտեսցեն իբր որդւոյ բարւոյ արդիւնքն հարանց ,  
 Երբ աշխոյժ հոգւով ըստ նոցայն բերցես հանդէսս արութեանց ,

Լրութիւնս ասեմ , սչ զի այժմ իսկ պէտք են մեզ սուսերաց ,  
 Եւ զի վառեսցուք սէր անկեղծաւոր չափել իրերաց :

Օ ի թէ գիրք ըզսէր գըլուխ վերագրեն ամենայն բարեաց ,  
 Օ ընօղ և առիթ յառաջամատոյց աննուաղ փառաց ,

Լպա որ ըզնոյն արդեամբք վըճարէ յոգի աննախանձ ,  
 Լն հանդիսացաւ յարութեան մասին պանծալ բարեխանձ :

Լզգային գործոց երիւք վըճարիլ փորձըն մեզ յայտնեաց ,  
 Ի գիր և 'ի սուր և յարհեստս 'ի պէտսըն հասարակաց ,

Ի նութիւնն առատ յայտոսիկ հարուստ առատաձեռնեաց ,  
 Տալ միոյ միոյ աշխոյժս առ անցն իւր միտումն ըստ կարեաց :

Լրդ ունց ձրից քաղցրութիւնն երկնից ըզքեզ հաղորդեաց ,  
 Բզնոյն յօգտաւէտ բարիս պըսակել լիջիր ջանազգեաց ,

Եւ անդն 'ի ներքուստ վառեսցէ զոգիդ յօճանս համազգեաց ,  
 Ոսկեթե թըռչունըն սէր գըրգասցէ յիղձըս քոյդ կամաց :

Քո հարք վեհազունք յայս նըկըրտեցան 'ի հանդէս շնորհաց ,  
 Բղբարիս ազգին նախագաս յարգել ըստ բերմանն իրաց :

Քընէած հոգւով մի ծոյլ խորդասցիս յայնց հարազատաց ,  
 Յուճպէտըս վատնեալ զոր ինչ հայրենի տուրք են երախտեաց ,

Մի ինձ խոտեսցես զընտրութիւնն ազին բերեալ յանդիման ,  
 Թէ 'ի համօրէն ազգըս գըտանի վատ և ընտրական :

Ստիլիկոնըն քաջ զընտիրսըն առնոյր յազգացն ամենայն ,  
 Աչինչ խընդրելով զարդիւնս և ըզշուք զարմին նախնական :

Ես իսկ յընտրութիւնդ առնըն քաջազնի յաւէտ եմ հաւան ,  
 Որ գիտէր բարւոք յարդիւնսըն հայիլ անձին քաջութեան :

Օ ի սչ որ յազգէ ընտրելոց ծընան՝ փառաց են արժան ,  
 Եւ որք զընտրութիւն տոհմին շքեղել փոյթ յանձին կալան :

Իմ առ քեզ յորդոր այս են խըրատու , մաննուկ խոհական ,  
 Գուն գործել 'ի յարգ գործովք բարութեան տոհմիդ ընտրուէ :

Յինչ վարժըս ծընար ըստ քուճ խառնուածոց յարմար խըմորման ,  
 Յայնս արդիւնացիր , քեզ և քոյայնոց լինել պիտեան :

Օարժանին 'ի քէն տուրք երկնից խընդրեն բերոց տոհմական ,  
 Տաղանդացն ըզբեզ մեծարէ 'ի փառս յարգըն շահեկան .  
 Բանքարացն յիշեան զառակ Տէրունի որ ձրի տուան ,  
 Օխորդ որ չէարկն 'ի սեղանաւորս , գըտաւ անպիտան :  
 Օրնեալ ես 'ի դիր , ըզդեգեր կալջիր 'ի դըրունս ուսման ,  
 Հոգւոյդ ճեմարան գըրոցն եղիցի ծաղկեալ բուրաստան .  
 Սերժեան բընաւին զորս հակառակին յառաջ դիմեցման ,  
 Կաթոգին գըրկեալ զորս մըթերս 'ի քումդ գանձեն ուշարան ,  
 Տես զաստուածաշնորհ ըզմեր Թարգմանիչս յայդ միկ վեհազան ,  
 Որոց հըմտութիւն շատիցն յայլազանց եզ զափ 'ի բերան .  
 Յունացն իսկ վարժեարք լեալ նախանձարեկ ընդ ձիրս նըրբութե ,  
 Հայազգի մանկունս չառնուլ 'ի հրահանգ արարին պայման :  
 Հայեանց 'ի ճոռոմ մեր մատենագիրս յազգ ազգ կըրթութեան ,  
 Արք յազգիս բարին լուսաւոր մըտօք գըրեցին մատեան .  
 Որոց վաստակոց արդիւնք ըստ մասին միայն մեզ ժաման ,  
 Յոյժ մեծագունի պատճառս ընծայեն սըրտի ըսփոփման :  
 Եւ յոգունք յընտիր մեր գըրոց բանտեալք 'ի Վանկին բըրգան ,  
 Լ'նդր 'ի Արմըրզանդ առ մեզ աննըշոյլ գընին 'ի մըթան .  
 Պանացիր և դու ընկերել 'ի նոյն վաստակըս քըրտան ,  
 Ի լոյս ընծայեալ զողջամիտ մատեանս յոգուտ Հայկեայն տան :  
 Օեռանդըն բընիկ զոր քեզ հազարդեաց ազգ մանցն օթարան ,  
 Սի անշահ երկովք յունայն վարակմունս արասցես խոպան .  
 Օ ի համար կայ տալ առ անցն իւր փոքրիկ ժամուց կորըստեան ,  
 Լյնմ որ կեանս ետ քեզ 'ի գործ պիտանի՝ հասարակութեան :  
 Երբ ողջիկ են միտք յազգին բարութիւն ջինջ և սեռնական ,  
 Աչ ինչ արգելանք յաստեաց խուժանաց արկանեն խափան ,  
 Յանձկութեան ժամուն միջոց գըտանէ երկասիրութեան ,  
 Ի ժամուց վայրկեանս գողացեալ առ դիր ըստ իւր եռանդեան :  
 Պատեն ըզՅակոբ վեհ Պատրիարքէ գահին Տիւզանդեան ,  
 Որ յազգին զբաղմունս և շատ մատենից գըտաւ գործարան .  
 Թէ որ անկորուստ գըծել 'ի թըղթի զոր եկն 'ի յիշման ,  
 Բոլոր սրատուհանք յարկացն ունէին գըրիչ և մելան :  
 Օ ի մերթ ուշ մարդկան 'ի ծընունդ բանիէ յոյժ բեղմնական ,  
 Ըզջինջ գաղափարս իմաստից յիւրում տածէ ըմբռնման .  
 Իսկ մինչ գ'լորջիք 'ի խելապատակ ծըխին վարանման ,  
 Սըթագնի և ուշ չըզօրէ 'ի տես որպէս է արժան :  
 Յայս իսկ գըրսխեց նըշանք 'ի նըպաստ նըմին հաստեցան ,  
 Օ երկունորն մըտաց անմահ պահպանել յախտէ մսուացման .  
 Հընութիւն աւուրց չազգէ ինչ նըմա կընձիռ ծերութեան ,  
 Չըծախեն ժանիք որկորեայ ծերոյն ըզդեմն անթարչամ :  
 Սերկեան յանձնէ քո՝ ապա , ով մանուկ , զախարն հեզգութեան ,  
 Դըրաջան ճըգնեանց յոր մակարդեցար 'ի բերս բընութեան .  
 Ըզցայգն առ ճըրադ սևաթոյր տառից յեռք փայլողական ,  
 Երկնալոյս ըզբե շողեսցեն արև աստեղանըման :



Գիտեա՛ ըզբընաւօ որք 'ի գովանի փառօրն պատուէցան ,  
 Յիւրեանց բընութեան 'ի տուրսըն ճըգնեալ ժիր և անտարտամ ,  
 Եւ ոմանց թէպէտ զընդդէմըն մատոյց բերմունքն երկրական ,  
 Եւ անդրէն 'ի նոյն մըղեաց ուժգնութիւնըն իւր բընական :  
 Տէս ըզՍոկրատէս պերճ իմաստասէր զայրըն սոսկական ,  
 Ար քարակօփի էր որդի ըստ իւր բաղդին իսկ բերման .  
 Օոր արհեստ վարեալ ըզբըսան և հինգ ամաց իւր շըրջան ,  
 Յեռանդըն բընիկ տապէր անդադար հետեիլ ուսման :  
 Լիք եթող զարհեստն ապա ըստիպեալ յըղձից իւրական ,  
 Օտղկեցաւ յիմաստ բարեացն արգասեօք յոյժ բերրիական .  
 Բստ նըմին և այլք որք ըզնոյն եռանդն 'ի վարժըս կալան ,  
 Ըզբընաւորեալ տուրսըն յարգեցին 'ի գործ շահեկան :  
 Բաղմագանձ մըթերք հայրենի ընչիցն Լնաքսագորայն ,  
 Աչինչ կարացին յիւրեանց սէր շեղել զայրն արիական .  
 Օեռանդն յերկրաւորս շիջոյց սէրն 'ի տենչ երկնից գիտութեան ,  
 Աինչև մասնացոյց կարկել ըզբերանն՝ որ ընդդիմաբան :  
 Օընա՛ր 'ի սուսեր , մի գաղանասցիս 'ի հեղումն արեան ,  
 Բստ մեր վիճակի այժմիկ չեն 'ի պէտս զէնք զինուորութեան .  
 Եւ 'ի պաշտպանել անձին 'ի դիպուածս անդր ուղևորման ,  
 Ի գործ արկ որպէս օրէնք բընութեան տայ քեզ հըրաման ,  
 Կայ և յայլ օգուտս այնուիկ պարգևօք բերել քեզ ըզջան ,  
 Աիրով վաստակեալ յօրս են 'ի կարգի արեաց պաշտաման .  
 Լնըկուն սըրտիւ տոկալ վըտանգացըն դըժուարութեան ,  
 Արք շահուց ազգին և քո իսկ անձին բերեն ըզխափան :  
 Չըգալ զերկիւղիւ յինչև իցէ դէպս ըստ իրաց բերման ,  
 Բոլոր պատահից նախագէտ հոգւով մընալ անսասան .  
 Եւ 'ի մահուանէ որ զամենայնիւ թուի ահաական ,  
 Աչինչ վահրոտիլ երբ չիք 'ի նըմա վատանուն նըշան .  
 Չասեմ քեզ այսուիկ ոգի ըզգենաւ ըզյանդըգնական ,  
 Աըխեալ զանձն 'ի վիշտս որք 'ի քոց կարեաց անյաղթիկ մընան .  
 Եւ թէ քեզ հասցէ վըտանգ ինչ կարի ահաւորական ,  
 Աի կորուսցես անդ կընատ մեղկանօք զոյժ տեողութեան .  
 Հայեաց 'ի Աահան և յայլ քաջարիս տանըս Հայկազեան ,  
 Ար յանցնիւր դիպուածս ըզպիտոյն կըշռել քաջիկ խորհեցան .  
 Եւ անց պատճառի 'ի վըտանգ մըխիլ 'ի վեր քան զարժան ,  
 Փորձել է զՆստուած՝ ասաց Տէրն մեր , առ փորձիչ սատան :  
 Տէս ըզնաւաստիս յաջողակ հողմով 'ի ջուս նաւարկման ,  
 Օ խա՛րդ ներհակաց նըրբին խորհըրդով կան 'ի նըկատման .  
 Օ ի մինչ 'ի հողմոցն ալիք յուղեոցին յոյժ վայրենական ,  
 Բզգէման ունիցին առանց վըտանգից ինչ նաւաբեկման .  
 Յայս տիպար և դու ըզմարմնոյդ կալ ջիր յոյն կարչնեղական ,  
 Շըրջադէտ մըտօք 'ի պիտոյն վարել և յօրինական .  
 Արով զարգացեալ 'ի համբաւ բարի հարցդ համանըման ,  
 Հարազատ որդւոցն ապցես ըզպատիւ յերկուս յաւիտեան :

Թէ մեծանձնութեան տուաւ քեզ քանքարն այն վըսեմական ,  
 Շահիլ ջանացիր ըստ իւր յատկութեանցըն միանգամայն .  
 Օյարատեութիւնն 'ի գործսըն յարգեա՛ որք են գերական ,  
 Լէր երկայնամիտ 'ի դժուարընտելս մինչև քաղցրանան .  
 Աւղիղ խորհրդով առ 'ի նըշանակ քո մեծանձնութեան ,  
 Սեծամեծ պատուոյ ըզքեզ համարեա՛ ճահ ըստ վայելման .  
 Չափով ընդ պատիւ զոր տան քեզ բարիք կացջիր բերկրական ,  
 Իսկ յորս ընծային 'ի սոսկականաց մի՛ բերեր վարկման .  
 Ի յաջողութիւնս և 'ի վիշարս կաց առանց վըրդովման ,  
 Աջ ողորք առ որ , ոչ բողորք բարձեալ զումեքէ յատեան .  
 Բարեաց տըրիտուր լիաձեռըն տուր զարդեանցըն փոխան ,  
 Հազիւ 'ի խընդիր գայցես , լինելով՝ յորս կայն բաւական :  
 Ինդ վեհսըն վեհ որ զանձըն յարգարեա՛ որպէս և պատկան ,  
 Բնդ միջակայնոց կացութիւն պայծառ կալ ըզմիջական .  
 Օ՛ի և Ինն ամբաւ տեսող խոնարհացն է յիւր բարձրութեան  
 Ի հեռաստանէ ճանաչող բարձանցն իսկ անզընդական .  
 Ի բանս և 'ի գործս 'ի սէր և յատել պարզ և յայտնական ,  
 Չըյիշել ըզկիրս ոգի ըզգեցեալ զանյիշաչարման .  
 Ի գործըս բազումս ոչ առնել ձեռնարկս անընտրողական ,  
 Հանդարտ ըզբաղիլ յարարս մեծամեծս առանց խուճապման .  
 Աջ այնպէս դիւրաւ 'ի զարմանս աւշիլ յիրաց ինչ տեսման ,  
 Սեղմիկ 'ի զըրոյցս , 'ի շարժումըն յամր , 'ի բանս ծանրաճայն .  
 Օ՛ի չունի փութալ որ 'ի սակաւուն հաճ և հեշտական ,  
 Եւ ոչ յոյժ ձրկտի առ որում չիք ինչ մեծ 'ի համարման :  
 Կարկաչ աղաղակ անյագ բաղձանացն են նըշանական ,  
 Փութաճեպ վազվազք արշաւեն կորզել վարկ տարապայման ,  
 Ըպա զի քո ձիրք պայծառ ցուտսցի և համեստական ,  
 Նախնի կարգելոց եռանդնոտ հողւով լէր ասպընջական :  
 Եւ յսպէս յարգեսցես քո զարիութիւն ըզմեծանձնական ,  
 Սովին փայլեսցի յարատեութիւնդ աննուտղական .  
 Օյայս խընդրէ 'ի քէն կարգաւորագոյն օրէնք մարդկութեան ,  
 Յայսմիկ վարժեցար յարդեանց քոց նախնեաց 'ի վեհանձնութեան :  
 Օնեալ ես յարհեստ , 'ի հասարակաց սէտս 'ի գործ ածման ,  
 Տենչիւ յարացիր վարժիլ ըստ կարգի քում բընաւորման ,  
 Սատիր անդանդազ գործել յաջողակ և յարմարական ,  
 Ի նուրբս 'ի խոշորս պահեալ զեղանակ համեմատութեան :  
 Բաժինք են հողւոյն որ ինչ 'ի մարդիկ ձիրք անդըստական ,  
 Յաշխարհի օգուտ ձըրի պարգևեալ ըստ պիտանութեան ,  
 Յորոցն ընկալար հաղորդեա՛ սիրով և անկըծճական ,  
 Օ՛ի զլին շընորհս արդեամբք յարգեսցես որպէս ետ հրաման :  
 Չէ քեզ բարիորք յինչ որոշեցար յեանիլ անպիտան .  
 Եւ ոչ իսկ յայլոց փառասէր ոգւով ձրկտիլ 'ի բաժան .  
 Յոր անդաստանի կարգեցար մըշակ անտի առ դարման ,  
 Եւ մի՛ տարադէպ յօտարին լինիր հուճ գերանդահան :

Վիտեմք ըզբազումս որք յիւրեանց բաժնից արտաքոյ բերան ,  
 Տոյժ անհրնարին անձանց մըթերեալ վընստ բազմազան .  
 Օ ըրկեալ և յորոց 'ի ձեռս ունէին բարութիւն փարթամ ,  
 Վատանուն կացին ոչ հասանելով որոց տենչացան :  
 Արհեստ նախագործ է մըշակութիւն երկրի վար և ցան ,  
 Ար հարուստ բերէ ըզպէտըս կենաց հարկաւորական .  
 Մի աղտեղացի գըծուծ երեսօք հին խարդախութեան ,  
 Ար իւր բընական շահութն է լըծորդ արդար աշխատման :  
 Արդար վաստակեա , ուղիղ բաժանեա , լեր հաճոյական .  
 Պատուեալ և ըզՏէր յարդար վաստակոցդ ըստ ճըշմարտութեան .  
 Օ ի յառատ բարիս միշտ ազբերացի քո ըշտեմարան ,  
 Արպէս նախահարց քոց փարթամութեամբ յարազէղ մառան :  
 Վարժ է շահաբեր զբազիլ յառևտուրս 'ի վաճառարան ,  
 Բայց և դաւանացն անտի վըտակին հեղեղք սըտութեան .  
 Ընդ նախագահէ 'ի պատրել զախմարս հինն այն դաւաճան ,  
 Ի զըրկել զանմեղս տայ ըզխըրախոյս 'ի տենչ պերճութեան :  
 Մի բերցես 'ի քեզ սիրտ սըտապատիր մի կամս ազահման ,  
 Օ ի մի զըրկելոցն այրեսցէ անէծք ըզգոյսդ ամենայն .  
 Օ ըրկել կեղեքել նենգել խարդախել մարդոյ չէ պայման ,  
 Այլ արդարացի բերումն 'ի գործածս իւր վսեւրական :  
 Աւղիղ է Ատուած , զուղղութիւն սիրէ ըզջինջ զըտական ,  
 Ի զգործ մարդկային ուղղատեսս քըննէ առ 'ի տալ զարժան .  
 Յայն ուղիղ կառն ըզգիտումն հոգւոյդ յըստակ հայեցման ,  
 Եւ բոլոր շարժմունքդ ուղղեսցին 'ի նոյն առանց վըրիպման :  
 Յովբալայ գըտար կացի՝ ըզբընար հար զԱրփէական ,  
 Խափան ցընորիչ արկեալ համբարուաց ձայնիցն աղուական .  
 Ընց ընդ ամէհի ալեացըն լերինս զերծիր ողջանդամ ,  
 Օ երծուցեալ և զորս 'ի լուր քընարիդ են ըզմայլական :  
 Հոգւոյն ընդունակ լեր Աւութեան շնորհաց 'ի նուագարան ,  
 Սերժել 'ի հոգւոց զայսըն խեղդարկու զոխերիմ դաժան .  
 Մի երգ ցոփաբան ժըխորըս բերցէ 'ի պարկեշտ հընչման ,  
 Մի ախտ մարմնական զեղծցէ զուժգնութիւն սուրբ ներդաշնակման :  
 Արդ լըկտի պարուց կորուստ է կենաց կորուստ հոգեկան .  
 Ախտարժարժ հըրով կիզու զորս 'ի լուր լըսելիս բանան .  
 Յիշեա՛ զՀերովդէս , բեր 'ի մըտածումն ըզգարըն Աոյեան ,  
 Տես և զի՛նչ աղէտք 'ի պարուաց անտի յաշխարհըս զեղան :  
 Ի ներկանըկարս զաշխոյժ մասուցեր քո ըզսեպհական ,  
 Պայծառ փայլեցո՛ 'ի համեստ պատկերս նուրբ և քընքշական .  
 Վիտեա՛ ըստուգիւ թէ համար ունիս տալ յոյժ ճըշգական ,  
 Օ որոց անպարկեշտ նըկարուք եղեր պատճառ սոյթաբման :  
 Վարժ ոսկերչութեան քեզ վիճակեցաւ արհեստ պիտեան ,  
 Դործեա՛ ըստ արդար չափուն՝ զոր տայ քեզ կարգն արդարութեան .  
 Չէ՛ քեզ 'ի յօդուտ թէ խարդախեսցես կամօք ոըշտութեան ,  
 Օ ի մուր 'ի յերես մընաս խայտառակ հուսի անգը 'ի վախճան :

Առաձ է հընոցն եթէ ոսկերիչք իսկ ամենեքեան ,  
 Խարդախ են և սուտ չունին զուղղութիւն 'ի գործ 'ի բերան .  
 'Իս ըստու գութեամբ դերեւել ջանա՛ կայեալ յուղղութեան ,  
 Օ ի սոյժառացիս 'ի կեանս երկոսին փառօք վերնական :  
 'Երձիկ յարդարեաց ըզքեզ որ բաշխէ կարգն ըսկըզնական ,  
 Ազիզ աշխատեաց որպէս իրաւունք են վայելչութեան .  
 'Բո արհեստ ծածկեաց ըզմերկ մեր նախնիս ըզկընի խարման ,  
 Մի ըզնոյն առիթ գործեցես հոգւոյդ 'ի բարեաց մերկման :  
 Յիշեա՛ զոր սրտմէ ըզգող դերձակէն առակ ծերութեան .  
 Արու՛մ սովորեալ էր 'ի գողանալ ձեռք իւր գործնական .  
 Թէ 'ի ծուփս անկեալ հոգին խըղճահար 'ի խոր մըտածման ,  
 Տեսանէր 'ի քուն զոր ինքեան պահէն յանաչառ դատման :  
 Օ ի յիւր գողունեաց դըրոշ կարկատեալ դեքըն չարութեան ,  
 Բարձր ազատկաւ տանին առաջի բազմերանգ նըշան .  
 'Իոչէ զառաջեաւ քարող բարձրագոչ բողոք դանգատման ,  
 Այս գործ է դերձկիս յիւրումն արուեստի գործ վատթարական :  
 Յառնէ երկիւղիւ տայ իւր համբակին սաստիկ պատուիրան ,  
 Աղդ առնել ինքեան զոր ետես սիգնօն 'ի ձորձոց ձեման .  
 Երբ՝ ասէ , տեսցես ըզկըտրոց ժանիս բացեալ լայնական ,  
 Աղբեա՛ ըզդըրօշն 'ի սեղմել զընթացս նորին ըստ արժան :  
 Ի դէպ գոյ ձևել դիպակ ծանրագին ոսկեթել ոստայն ,  
 Լայնէ ըզկըտրոց գողանալ անտի ըստ իւր սովորման .  
 Չայնէ անգ կացին՝ յու շի՛ ամ , վարժակ , զսիգնու մըն զայն ,  
 Առ լըռել սաստէ , զի յայս դիպակէ չէր՝ ասէ , 'ի նմայն :  
 Արհեստաւորաց այս իղձ խառնածին դիւային սերման ,  
 Ի կըծծի բարուց յօտարին բերիլ ինչօրն սեփական ,  
 Շորթել գողսնալ՝ յորոց և գործեն յիրաց նիւթական ,  
 Աիւթ հըրոյ գանձել յանմահ տոչորումն 'ի յանշէջ գեհեան :  
 Այս վեր ըզգոյշ միայն յանխարդախս կաց 'ի պարագման ,  
 Եւ մի տար հոգւոյդ ըզբազմավըտանգ տոյժ անանցական .  
 Մի ընտելասցի անարգն այն հըրէշ ընդ քոյին բաղձման ,  
 Օ ի մի և ըզքս զարդար ըզվաստակս մատուցէ գերբման :  
 'Իրտըն ճըշմարիտ մի՛ պըղտորեացի 'ի գոյա գողութեան ,  
 Օ որ սովորեցաւ հեղուլ յարհեստիկս ախան ագահութեան .  
 Խարդախել շոպուել չէ՛ 'ի ըսկըզբանց ինչ ճըշմարտութեան ,  
 Այլ 'ի տըմարդի ոգւոցն՝ որք վարին յայն գործըն խարման :  
 Արդար վաստակոց առատ են պըտուղք և ջամբք հեշտական .  
 Իսկ անարդարոց տոյժ ցաւոց մարմնոյ և աղց հոգեկան .  
 Օ որ ինչ իրաւունք տան քեղ 'ի վայել սեւն և պարզական ,  
 Յայնմիկ վայելեա՛ հեշտ և հանդարտիկ առանց գըժտութեան :  
 Օ ի և ս ինձ յայսմիկ յերկար դեգերումն ունիլ աշխատման ,  
 Թէ և բազմագոյն պըրակացն 'ի դէպ գոյր աստ քերթութեան .  
 Ի նտրեա՛ զօգտակարն ոչ միայն զանձին այլ և զաղբական ,  
 Արով յաղգասէր կոչ վերտառեցիս յընտիր ներբողեան :



# ՅԵՆԿ

## ԳԼԽԵԿԸՐԳՈՒԹԵԼՆ ԳՈՐԾՈՅՍ

Գ Լ Ո Ւ Խ Ա.	Նախաշաւիղ առ ՚ի նոյն յորդորման	1
Գ Լ Բ.	Ծնունդ և սնունդ Հայկայ	5
Գ Լ Գ.	Աստուածագաշտութիւն Հայաստանի	11
Գ Լ Դ.	Զեղծումն մարդկան ՚ի բարին	17
Գ Լ Ե.	Աղատութիւն Նոյի ՚ի Նուբոյն հեղեղաց	24
Գ Լ Զ.	Քաղմանալ մարդկան և բաժանումն	29
Գ Լ Է.	Աշտարակաշինութիւնն	36
Գ Լ Ը.	Վասրանջութիւնն Հայկայ	41
Գ Լ Թ.	Պատերազմ և յաղթութիւն Հայկայ	46
Գ Լ Ժ.	Միապետութիւն և աշխարհաշինութիւն Հայկայ	52
Գ Լ ԺԱ.	Մահ Հայկայ	60
Գ Լ ԺԲ.	Միապետութիւն Արամայ և հանդէսքն	71
Գ Լ ԺԳ.	Միապետութիւն Արայի	85
Գ Լ ԺԴ.	Պատերազմ Շամիրամայ ընդ Արայի	92
Գ Լ ԺԵ.	Եղերերգութիւն զԱրայե	111
Գ Լ ԺԶ.	Երգիծանութիւն առ Շամիրամ	119
Գ Լ ԺԷ.	Յորդոր նմանիլ նախնեաց	130









